

Հայրենիք

1982

Ը-թ

ԼԹ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Օգոստոս – Սեպտեմբեր

1982

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ՝ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 27-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ

ԺԱՄԱՆՈՒՄ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ

Սույն թվականի սեպտեմբերի 26-ից մինչև հոկտեմբերի 2-ը պատմական և հիշարժան օրեր հանդիսացան մի անգամ ևս Մայր Աթոռում մեր ազգային և եկեղեցական ժամանակակից պատմության մեջ, ինչպես նաև ուշագրավ մի հանգրվան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայոց Հայրապետի եկեղեցաշեն, հայրենանվեր գործունեության ճանապարհին՝ ոգևորիչ արդյունքներով:

Սեպտեմբերի 26-ին, կիրակի, տոն Վարագա Ս. Խաչի: Այդ օրը լրացավ Հայոց Հայրապետի գահակալության 27-րդ տարեդարձը:

Նորին Սրբության հրավերով հոբելյանական հանդիսություններին մասնակցելու համար Մայր Աթոռ ժամանեց Անտիոքի և Համայն Արևելքի Ասորական Ուղղափառ Եկեղեցու նորընտիր պետ Նորին Սրբություն Մար Իգնատիոս Զաքքա Ա Պատրիարքը՝ իր շքախմբի անդամներով: Շքախմբին մաս էին կազմում պատրիարքական փոխանորդ գերաշնորհ Մար Սևերիոս Իսհակ արքեպիսկոպոս Սաքան և Պատրիարքի քարտուղար հոգեշնորհ Ռաբբան Բենժամին վարդապետ Ժոզեֆը:

Սեպտեմբերի 24, ուրբաթ: Այսօր, ժամը 15-ին, Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում Հայոց Հայրապետը, շրջապատված բարձրաստիճան հայ հոգևորականներով, դիմավորում և բարի գալուստ է մաղթում քույր Եկեղեցու մեծապատիվ հյուրին;

Տ. Իգնատիոս Զաքքա Ա Պատրիարքին օդանավակայանում ողջունում և բարի գալուստ է մաղթում նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանը:

Հայոց Հայրապետը և Տ. Իգնատիոս Սրբազան Պատրիարքը օդանավակայանից հանդիսավորությամբ առաջնորդվում են Էջմիածնի Մայր տաճար, ուր մուտք են գործում եկեղեցական թափորով և «Հրաշափառ»-ով:

Իջման Ս. Սեղանի առաջ նրանք կատարում են իրենց աղոթքը: Այնուհետև Հայոց Հայրապետը հետևյալ ջերմ խոսքով ողջունում է Ասորական Ուղղափառ Եկեղեցու գահակալի ներկայությունը Մայր Աթոռում.

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ԲԱՐԻԳԱԼՍՏՅԱՆ ԽՈՍՔԸ

Գոհություն Աստուծո Ամենակալին, որ պարգևում է մեզ այս պահը, երբ մենք, երկու եղբայրներ, հանդիպում ենք և ողջագուրվում իրար հետ: Եղբայրներ, որոնք նաև գլուխներն են երկու քույր Եկեղեցիների:

Իսկապես պատմական օր է այս պահը մեզ համար: Ինչքան գիտեմ, առաջին անգամն է պատմության մեջ, որ Ասորվոց պատմական մեծ Եկեղեցու պետը այցելում է Ս. Էջմիածին: Թող Աստված օրհնի այս օրը և այս մեր հանդիպումը:

Մեր գիտակցության մեջ այս պահին բացվում է պատմության գիրքը, և հիշում ենք այն երանելի օրերը, երբ հայ ժողովուրդը առաջին անգամ իր սիրտը բացեց Քրիստոսի լույսին, և պատմական հրաշալի պայմանների մեջ հիմնվեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին Դ դարի սկզբին: Այդ օրերից սկսած մենք հանդիպեցինք մեր ասորի եղբայրներին: Ավելին՝ Դ և Ե դարերում այս տաճարի մեջ հնչեցին աղոթքներ նաև ասորական լեզվով:

Ահավասիկ թե ինչպիսի պատգամ է տալիս մեզ մեր պատմության գիրքը այս պահին, այն, որ մենք՝ ի Քրիստոս երկու եղբայրներ քույր Եկեղեցիների, շարունակենք այս ավանդությունը նաև մեր օրերին:

Այս զգացմունքներով ես մաղթում եմ Ձերդ Սրբությանը բարի ժամանում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Վստահ եմ, որ այստեղ հաճելի օրեր պիտի անցկացնենք միասին: Եվ պիտի առավել ամրապնդենք մեր երկու դավանակից Եկեղեցիների եղբայրությունը ու նաև էկումենիկ ոգով պիտի անդրադառնանք մեր նոր օրերին վերաբերող եկեղեցական հարցերին:

Այս զգացումներով բարի գալուստ ենք մաղթում Ձեզ Հայ Եկեղեցու պատմական կենտրոն Ս. Էջմիածին:

Բարի եք եկել, սիրեցյալ եղբայրներ ի Քրիստոս:

Հայոց Հայրապետի ողջույնի և բարիգալստյան սույն խոսքին պատասխանում է Տ. Իգնատիոս Զաքքա Պատրիարքը հետևյալ ուղերձով.

Տ. ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔՔԱ Ա ՊԱՏՐԻԱՐՔԻ ՈՂՋՈՒՅՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Ձերդ Սրբություն, սիրելի Եղբայր ի Քրիստոս,

Մենք մեծապես պատվված ենք զգում մեզ և հատկապես զգացված մեզ և մեր պատգամավորության հանդեպ ցույց տրված շատ ջերմ և սրտագին դիմավորման համար այս հնադարյան երկրում հնագույն քույր Եկեղեցու կողմից: Մենք շնորհակալություն ենք հայտնում Ձեզ, սիրելի Եղբայր ի Քրիստոս,

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ, Տ. ԶԱՔԱՔԱ Ա ՊԱՏՐԻԱՐՔԸ ԵՎ Տ. ԻԼԻԱ Բ
ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՎԵՀԱՐԱՆԻ ԲԱԿՈՒՄ

քրիստոնեական այս հինավուրց տաճարում մեկ ուղղված Ձեր ողջույնի հիասքանչ բառերի համար, մի տաճար, որտեղ, Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքի համաձայն, անձամբ Քրիստոս իջավ և ցույց տվեց ամբողջ հայ ժողովրդի հավատքի հիասքանչ խորանի տեղը: Մենք շատ երջանիկ և հպարտ ենք, որ գտնվում ենք այս երկրում: Մենք եկել ենք Միջագետքից, այն երկրից, որտեղ կաղապարվել է պատմությունը դարեր շարունակ: Մենք եկել ենք մի երկրից, որն իրավամբ նկատվել է որպես «քաղաքակրթության օրրան»:

Երբ մենք ոտք դրեցինք այս երկիրը, որն ունի իր փառավոր պատմությունը, պատմություն, որ ձգվում է հազարավոր տարիներ, և որն այնքան հին է, ինչքան մեր երկիրը, որ նույնպես նշանավոր է եղել որպես քաղաքակրթության օրրան, մենք հիշեցինք մարդկության էական միությունը: Մեր այս ճամփորդությունը դեպի հավատքի այս հնագույն տաճարը, որտեղ իջել է ինքը՝ Քրիստոս, համարում ենք որպես մի ուխտագնացություն դեպի աստվածաշնչական Հայաստան, իր աստվածաշնչական վեհափառ Արարատ լեռով, որտեղ հանգչեց Նոյի տապանը: Մենք մեր այս ճանապարհորդությունը համարում ենք մեր երկու Եկեղեցիների միության փաստը: Ինչպես դուք, մենք նույնպես մերժում ենք Քաղկեդոնի ժողովի որոշումները: Քաղկեդոնի ժողովից հետո Ասորական Ուղղափառ Եկեղեցին Հայ Եկեղեցու հետ միասին անցել է շատ հալածանքների, ջարդերի և դժվարությունների միջով: Իրենց հավատքը և վարդապետությունը պաշտպանելու համար մեր երկու Եկեղեցիները համբերությամբ տոկացել են այդ բոլորին:

Երբ հաստատվեց Անտիոքի Ս. Աթոռը, այդ ժամանակից սկսած մեր Եկեղեցու ծիսական և պաշտոնական լեզուն ասորականը եղավ: Այդ տեղի ունեցավ մեր Տիրոջ 37-րդ թվականին, երբ Ս. Պետրոս առաքյալը դարձավ Անտիոքի Սուրբ Աթոռի առաջին Պատրիարքը: Եվ մենք երջանիկ ենք նշելու, որ Մենք նրա Սուրբ Աթոռի վրա 143-րդ գահակալն ենք: Մենք մինչև այժմ անաղարտ ենք պահել ասորական լեզուն և հպարտանում ենք այդ օրհնյալ լեզվով, որը Հիսուս Քրիստոսի մայրենի լեզուն էր և որը հավասարապես օգտագործվում էր իր, մորը և առաքյալների կողմից:

Նորից արտահայտելով իմ երախտագիտությունը Ձերդ Սրբության այս ընքանչելի ընդունելության համար, ես կցանկանայի այժմ Տերունական աղոթքն արտասանել մեր Տիրոջ լեզվով:

Եկեղեցական արարողությունից հետո երկու Հայրապետները թափորով առաջնորդվում են Վեհարան, որտեղ տեղի է ունենում սիրալիր զրույց՝ ջերմ և եղբայրական մթնոլորտում:

Վեհարանում երեկոյան ընթրիքից հետո Տ. Զաքքա Սրբազան Պատրիարքը առաջնորդվում է մայրավանքի վանատուն, ուր մնալու է իր շքախմբի անդամների հետ իր կեցության օրերին:

ԺԱՄԱՆՈՒՄ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. ԻԼԻԱ Բ-Ի

Սեպտեմբերի 25-ին, շաբաթ օրը, Հայոց Հայրապետի հրավերով Մայր Աթոռ Ս. Էջմիածին է ժամանում Նորին Սրբություն Վրաց Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսը:

Երևանի Հարավային օդանավակայանում Մայր Աթոռի թանկագին հյուրին և նրա շքախմբի անդամներին անձամբ դիմավորում և բարի գալուստ է մաղթում Հայոց Հայրապետը՝ ի գլուխ հայ բարձրաստիճան հոգևորականների:

Օդանավակայանում Վրաց Սրբազան Պատրիարք-կաթողիկոսին դիմավորում և բարի գալուստ է մաղթում նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանը:

Վրաց Եկեղեցու պետի շքախմբին մաս էին կազմում գերաշնորհ Տ. Կոստանդին արքեպիսկոպոսը, գերաշնորհ Տ. Վախտանգ եպիսկոպոսը, հոգեշնորհ Տ. Կալիստրատ աբեղան և արժանապատիվ Տ. Զուրաբ ավագ քահանան:

Հայոց Հայրապետը և Վրաց Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսը հանդիսավորությամբ օդանավակայանից առաջնորդվում են Մայր տաճար, որտեղ մուտք են գործում «Հրաշափառ»-ով: Եկեղեցական կարճ արարողությունից հետո Հայոց Հայրապետը Վրաց Եկեղեցու պետին դիմում է ողջույնի և բարիգալստյան հետևյալ խոսքով.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ԲԱՐԻԳԱԼՍՏՅԱՆ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(25 սեպտեմբեր 1982 թ.)

Ձերդ սրբություն,

Բարին Աստված այսօր առատորեն բաշխում է մեկ իր շնորհները՝ պայծառ երկինք, արև և լույս, և մանավանդ անսահման ուրախություն մեր սրտերում: Մեկ համար սովորական մի օր չէ անշուշտ այս օրը, որովհետև այս տաճարի կամարների տակ ընդունում ենք մեր սիրեցյալ Եղբորը՝ Նորին Սրբություն Իլիա Բ կաթողիկոսին, որը գալիս է Վրաստանից, իր պատվական շքախմբով: Այս պահին թույլ տվեք, սիրեցյալ Եղբայր, ողջունել Ձեզ Մեր սրտի ամբողջ ջերմությամբ, մաղթել Ձեզ քաջառողջ, խաղաղ ու լուսառատ տարիներ, որպեսզի երկար ժամանակ Դուք, իբրև Հովվապետ, առաջնորդեք վրացի հավատացյալ ժողովրդին և Ձեր Սուրբ Եկեղեցին հասցնեք բարձունքից բարձունք, այնպես, ինչպես Ձեր սիրտն է կամենում և թելադրում:

Բարի եկաք Սուրբ Էջմիածին: Դուք ուրիշ անգամ էլ եկել եք Սուրբ Էջմիածին, բայց ամեն անգամ, երբ այցելում եք, մեկ թվում է, թե առաջին անգամ եք գալիս: Դա խոսում է նախ այն մասին, որ մենք իսկապես քրիստոնյա եղբայրներ ենք, նույն հավատքն ունենք, Քրիստոսի նույն Ավետարանը, և նվիրված ենք նույն առաքելության կենսագործմանը: Դրա վրա պետք է ավելացնել նաև մեր երկու ազգերի դարավոր եղբայրության փաստը: Դա հիմքն է, մեր հավատքի կողքին, մեր երկուսի բարեկամության, եղբայրության: Այս ամենը այս պահին մեզ ոգևորում, ներշնչում և ուրախացնում է:

Ես մաղթում եմ, որ Աստված օրհնի այս պահը, մեր այս հանդիպումը այստեղ և մեզ նորանոր ուժեր պարգևի, որպեսզի ամեն մեկս մեր ժողովրդի ծոցում մեր պարտքը կատարենք: Նաև միասին, ձեռք-ձեռքի տված, մեր մյուս քույր Եկեղեցիների, հատկապես Ռուս Պրավոսլավ Եկեղեցու հետ, մեր օրերում մեր առջև ծառացած հարցերի առնչությամբ մեր պարտքը կատարենք թե՛ էկումենիկ իմաստով և թե՛ աշխարհի խաղաղության պահպանման իմաստով: Ես գիտեմ, որ Դուք նույնպես խաղաղության քարոզիչ և գործիչ եք ոչ միայն մեր նեղ շրջանակում, այլև ընդհանրապես Եկեղեցիների համաշխարհային կյանքում:

Ահավասիկ այս զգացմունքներով և մտածումներով կրկին անգամ Ձեզ մաղթում եմ բարի ժամանում Սուրբ Էջմիածնին: Թող Աստված օրհնի մեզ:

Հայոց Հայրապետի որջույնի սույն խոսքին Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսը պատասխանում է հետևյալ ջերմ ուղերձով.

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ, Տ. ԶԱՔԱՔԱ Ա ՊԱՏՐԻԱՐՔԸ ԵՎ Տ. ԻԼԻԱ Բ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՄՈՏ

ԻԼԻԱ Բ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԱՍԽԱՆ ԽՈՍՔԸ

Ձերդ Սրբություն,

Սիրելի Եղբայր ի Քրիստոս Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա,

Հայաստան գալով մենք տեսանք պայծառ երկինք, ինչպես նաև դիմավորողների սիրալիր ընդունելությունը: Ես իմ կողմից պարտավոր եմ ասել, որ մենք նույնպես պարտքի տակ չենք մնում, որ մենք նույնպես բերել ենք մեր սերը և վրաց ժողովրդի սրտից բխած ողջույնները, այն ժողովրդի, որը խորապես գնահատում է հայ ժողովրդի մշակույթը և այն հոգևոր ավանդը, որ ունի Հայ Առաքելական Եկեղեցին:

Արդեն երկար տարիներ է, ինչպես Վրաստանում, այնպես էլ Հայաստանում, ամեն անգամ մենք մեծ սիրով ենք հանդիպում Ձերդ Սրբության հետ: Ես համոզված եմ, որ մեր համատեղ աղոթքներն ու աշխատանքները կծառայեն ի շահ խաղաղության և ժողովուրդների բարեկամության: Մեզ հայտնի են մանավանդ Ձեր այն մեծ աշխատանքները, որոնք տարվում են ինչպես Հայ Եկեղեցու ամրապնդման, այնպես էլ Եկեղեցիների էկումենիկ շարժման գծով խաղաղության պահպանման համար: Ամբողջ աշխարհում խաղաղության ամրապնդման ի նպաստ Ձերդ Սրբության կատարած աշխատանքները հայտնի են ոչ միայն Հայաստանում, այլև Հայաստանի սահմաններից դուրս:

Վրաց Օրթոդոքս Եկեղեցու Սուրբ Սինոդի անունից, ինչպես նաև իմ կողմից, ամբողջ հոգով ողջունում եմ Ձեզ և Հայոց Եկեղեցին: Մենք ցանկանում ենք Ձեզ արևշատություն, առողջ կյանք, որպեսզի հնարավորություն ունենաք դեռ երկար տարիներ գլխավորելու Հայոց Սուրբ Եկեղեցին և հովվելու հայ հավատացյալ ժողովրդին:

Հայ ժողովրդին և Հայոց Եկեղեցուն ցանկանում եմ հետագա տարիների ծաղկում:

Մայր տաճարում փոխանակված ողջույնի խոսքերից հետո երկու հովվապետները հանդիսավոր թափորով առաջնորդվում են Վեհարան, ուր տեղի է ունենում եղբայրական սիրալիր զրույց՝ ջերմ մթնոլորտում:

Իլիա Բ Սրբազան Պատրիարքը նույնպես հյուրընկալվում է մայրավանքի վանատանը մասնավոր հարկաբաժնում՝ իր շքախմբի անդամներով:

*
* *

Նույն օրը, առավոտյան ժամը 10-ին, Տ. Իգնատիոս Զաքքա Ա Պատրիարքը այցելում է Հին Վեհարանի կաթողիկոսական թանգարան, ապա Վաղարշապատի պատմական վանքերն ու եկեղեցիները, այդ թվում՝ Ս. Հռիփսիմեի վանքն ու տաճարը, Ս. Գայանե, Ս. Շողակաթ եկեղեցիներն ու Զվարթնոցի պատմական ավերակները:

Ժամը 14.30-ին Վեհարանի սեղանատանը Հայոց Հայրապետը Մայր Աթոռի թանկագին հյուրին պատվում է սիրո ճաշով, որին ներկա է լինում նաև Մայր Աթոռի և ուխտավորաբար Ս. Էջմիածին ժամանած հայ եպիսկոպոսների դասը: Սիրո սեղանի շուրջ ստեղծվում է ճշմարիտ էկումենիկ մի եղբայրություն: Այստեղ ևս փոխանակվում են ողջույնի ու բարիգալստյան սրտագին խոսքեր:

Ժամը 18-ին Հայոց Հայրապետը, Տ. Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսը և Տ. Իգնատիոս Զաքքա Ա Պատրիարքը Վեհարանից եկեղեցական թափորով առաջնորդվում են Մայր տաճար՝ ներկա լինելու կիրակամտի հանդիսավոր ժամեր-

գությանը: Մայր տաճարում, Ավագ սեղանի դիմաց, ատյանում, Մայր Աթոռի երկու մեծահարգ հյուրերի համար պատրաստվել էին մասնավոր գահեր:

Սեպտեմբերի 26, կիրակի: Տօն Սրբոյ Վարագայ Խաչի:

Այսօր Մայր տաճարում, Հայոց Հայրապետի գահակալության 27-րդ տարեդարձի առիթով, սուրբ պատարագ է մատուցում վրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանը:

Ժամը 12-ին Հայոց Հայրապետը, Տ. Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսը և Տ. Իգնատիոս Զաքքա Ա Պատրիարքը Վեհարանից, եկեղեցական թափորով, Մայր տաճարի կանգերի ուրախ ղողանջների ներքո, հավատացյալների բազմության սրտագին բարեմաղթությունների միջով առաջնորդվում են Մայր տաճար՝ ներկա լինելու օրվա հանդիսավոր սուրբ պատարագին:

Մայր տաճարը կարդարվել էր տոնականորեն: Սուրբ պատարագի երգեցողությունը կատարում էր Մայր տաճարի երգչախումբը, մինչ տաճարը լցրած բարեպաշտ ժողովրդի խուռներամ բազմությունը աղոթում էր երկյուղածորեն: Մայր տաճարի երկու ատյաններում իրենց պատվո տեղերն էին գրավել Հայոց Հայրապետը Իր գահի վրա, քույր Եկեղեցիների երկու հոգևոր պետերը՝ իրանց շքախմբի անդամներով, ինչպես նաև այլ պաշտոնական անձինք:

«Հայր մեր»-ից առաջ Հայոց Հայրապետը առաջնորդվում է Ավագ խորան՝ օրվա հանդիսության և տոնի առիթով տալու հայրապետական Իր խոսքն ու պատգամը:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(Կիրակի, 26 սեպտեմբերի)

«Փառք քեզ, Տէր Աստուած, փառք քեզ յաղագս ամենայնի, Տէր, փառք քեզ»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, համարյա մեր ամենօրյա մաղթանքներից մեկն է այս՝ փառք տալ Աստծուն ամեն ինչի համար, որ վայելում ենք մեր այս անցավոր կյանքի ճանապարհի վրա: Եվ իրոք մեր Եկեղեցու և ժողովրդի կյանքը տասնյակ տարիներից ի վեր հայրենի հողի վրա ընթանում է խաղաղության, բարօրության և վերաշինության ճանապարհով: Եվ մենք միշտ առիթ ենք ունենում մեր գոհությունը հայտնելու առ Աստված ամեն ինչի համար, որ վայելում ենք այստեղ, լինի մեր հայրենական, լինի եկեղեցական կյանքում: Հենց այսօր այստեղ հավաքված այսքան մեծ թվով հավատացյալների բազմությունը, հայրենաբնակ և թե արտասահմանից ժամանած ուխտավորներ, ապացույցներից մեկն է մեր կյանքի բարօրության: Ահա թե ինչու Մենք անհրաժեշտ ենք նկատում Մեր խոսքն սկսել փառք տալով Աստծուն այս բոլորի համար:

Այսօր, սիրելի ժողովուրդ, Աստծու ողորմությամբ Մեր գահակալության 27-րդ տարեդարձն է: 27 տարիներ են անցել այն օրից, երբ այս նույն Սուրբ Սեղանի առաջ Մենք, ծնկի եկած, ուխտեցինք ծառայել մեր Սուրբ Եկեղեցուն և համայն մեր հավատացյալ ժողովրդին, իբրև առաջին սպասավորը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու:

Այսօր Մեր գահակալության 27-րդ տարեդարձի օրը զուգադիպում է Վարագա Սուրբ Խաչի տոնին, որը վերջինն է Հայ Եկեղեցու Խաչի տոների շարքին: Հայ Եկեղեցին տարին մի քանի անգամ հիշատակում է Ս. Խաչի փառքը: Վարագա Խաչի տոնը հատուկ է միայն մեր Եկեղեցուն:

Սուրբ Խաչը բոլոր քրիստոնյաներիս համար խորհրդանշում է ոչ միայն Քրիստոսի մահը, այլ նաև նրա հարությունը և դրանով դեպի փրկության բաց-

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ, Տ. ԻԳՆԱՏԻՈՍ ՋԱՔՔԱ Ա. ՊԱՏՐԻԱՐՔԸ ԵՎ Տ. ԻԼԻԱ Բ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍԸ՝ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՎ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐՈՎ, ՎԵՀԱՐԱՆԻ ՇՔԱՄՈՒՏՔԻ ԱՌԱՋ

ված ճանապարհը մարդկային ցեղի առջև: Խաչը, որը սկզբում մահվան գործիք էր, Քրիստոսի խաչելությամբ դարձավ համայն քրիստոնեության համար հարության, փրկագործության ճանապարհ: Հայ ժողովուրդը նույնպես հավատում է Քրիստոսի խաչի հրաշալի շնորհներին և մնում է հաստատ ու հավատարիմ իր կրոնական հավատքի վրա նույն երապանքներով և տեսիլքներով, որոնցով ապրել են մեր նախնիք մոտ երկու հազար տարիներ շարունակ: Մենք երջանիկ ենք հաստատելու, որ մեր Եկեղեցին թե՛ մեր մայր երկրում և թե՛ արտասահմանի հայ Սփյուռքի տարածքի վրա կանգուն է, գործում է և քայլ առ քայլ հասնում է իր հոգևոր և ազգային նպատակների իրագործմանը:

Մենք այս պահին ուզում ենք բարձրացնել մեր աղոթքը առ Աստված, որպեսզի աշխարհում պահպանվի ընդհանուր խաղաղության իրավիճակը, որպեսզի մեր փոքրիկ ազգն էլ, որ անցյալում այնքան տառապանքների արյունալի ճանապարհներով անցավ, շնչի, ապրի և ստեղծագործի խաղաղության, բարորության և ապահովության մեջ:

Սիրելի հավատացյալներ, այս պահին կամենում ենք Ձեզ ավետել նաև, որ այսօր մեզ հետ են և մեզ հետ են աղոթում այս սուրբ պատարագի ընթացքում մեր երկու բարձրաստիճան հոգևոր Եղբայրները, երկու Հովվապետները երկու պատմական մեծ և սուրբ Եկեղեցիների՝ Նորին Սրբություն Իլիա Բ կաթողիկոսը, գլուխը Վրացական Օրթոդոքս Եկեղեցու, և Նորին Սրբություն Իգնատիոս Զաքքա Ա Պատրիարքը, գլուխը Ասորական Հին Ուղղափառ Եկեղեցու և Համայն Արևելքի:

Մեզ համար բացառիկ երջանկություն է երկու քույր Եկեղեցիների Հովվապետներին ողջունել և նրանց հետ ողջագուրվել այս պատմական տաճարի կամարների ներքև: Նրանք ովքեր ծանոթ են մեր Եկեղեցու պատմությանը, գիտեն, որ ի սկզբանե, այսինքն՝ այն օրերից, երբ քրիստոնեությունը ազգային և պաշտոնական կրոն հռչակվեց Հայաստանում Դ դարի սկզբին, Ս. Գրիգոր Լուսավորչի երանելի օրերին, հայ ժողովուրդը իր սիրտը բացեց Քրիստոսի Ավետարանի լույսին: Այդ օրերին, այդ լույսի մեջ է, որ ճանաչեց նաև Ասորական Եկեղեցուն, Նրա հովվապետներին և բարձրաստիճան հոգևորականներին, որոնց հետ սկսվեց սերտ գործակցություն, որը տևեց դարեր շարունակ:

Շատ պատմական հիշատակություններ կարող ենք նշել անցյալից, հատկապես Զ և Է դարերից, երբ շատ սերտ գործակցություն էր տեղի ունենում մեր երկու Եկեղեցիների միջև, մանավանդ որ մեր երկու Եկեղեցիները նաև դավանաբանական տեսակետից նույն դավանանքը և նույն հավատքը ունեն:

Ահավասիկ խոր հուզումով է որ մենք ուզում ենք այս պահին ողջունել այստեղ ներկայությունը մեր սիրեցյալ Եղբոր:

Մաղթում եմ, որ Աստված Անտիոքի և Համայն Արևելքի Իգնատիոս Պատրիարքին շնորհի քաջառողջություն և գահակալության երջանիկ տարիներ, որպեսզի կարողանա իր առաքելությունը շարունակել մինչև խոր ծերություն:

Բարի ժամանում, սիրեցյալ Եղբայր մեր ի Քրիստոս:

Այնուհետև Տ. Իգնատիոս Զաքքա Ա Պատրիարքը հրավիրվում է Ավագ բեմ՝ իր օրհնության խոսքն ուղղելու ներկա հավատացյալներին:

Տ. ԻԳՆԱՏԻՈՍ ԶԱՔՔԱ Ա ՊԱՏՐԻԱՐՔԻ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(Կիրակի, 26 սեպտեմբերի)

Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոս Ամենայն Հայոց,
Նորին Սրբություն Տ. Իլիա Բ կաթողիկոս Վրաստանի,

Սիրեցյալ եպիսկոպոս եղբայրներ, քահանա հայրեր և սիրելի հավատացյալներ,

Մեզ համար շատ հաճելի և սուրբ է այս պահը, երբ մասնակցում ենք այս սուրբ պատարագին, հատկապես այս սուրբ տաճարում: Ըստ հայկական ավանդության, այստեղ է, որ Քրիստոս երևացել է Սուրբ Գրիգոր Լուսավորչին: Մենք գոհություն ենք հայտնում Աստծուն, որ մեզ տվեց այս երջանիկ առիթը, գալու, տեսնելու այս բիբլիական վայրերը և շնորհավորելու Ամենայն Հայոց կաթողիկոսի գահակալության տարեդարձը:

Մեր և մեր պատվիրակության անունից շնորհակալություն ենք հայտնում Նորին Սրբությանը, որը հրավիրեց մեզ մասնակցելու հանդիսավոր այս արարողությանը: Մենք հաճույքով ցանկանում ենք մեր սրտաբուխ բարեմաղթություններն ուղղել Նորին Սուրբ Օծությանը Իր գահակալության 27-րդ տարեդարձի առթիվ, ցանկանալով Նրան առողջություն և հաջողություն Իր հովվապետական առաքելության մեջ:

Մենք և դուք նույն հավատքն ունենք: Ասորական և հայկական Եկեղեցիները դարեր շարունակ ունեցել են նույն հավատը, նույն ըմբռնումը և նույն առաքելական ճանապարհը: Ձեր և մեր հայրերը շատ արյուն թափեցին, որպեսզի անխախտ պահեն իրենց հավատքը: Փառք Աստծու, մենք պահեցինք մեր հավատքը՝ անշեղորեն հետևելով Նիկիայի, Կոստանդնուպոլսի և Եփեսոսի տիեզերական ժողովներին: Այս հանգամանքը մեզ պարտավորեցնում է այսուհետև էլ պահել աչքի լույսի պես այդ հավատքը: Հակառակ այն բանին, որ մեր երկու Եկեղեցիները անցյալում բազմաթիվ դժվարություններ են կրել, սակայն միշտ իրենց հավատքը պահել են և պահում են, որովհետև Քրիստոսի հետ են եղել: Ինչքա՜ն հաճելի է նշել, որ հայ ժողովուրդը ամուր կառչել է իր Եկեղեցուն ու հայրենական ավանդություններին: Մենք այդ իսկ պատճառով հպարտանում ենք այս երկրով՝ Հայաստանով, որը թեև շատ հին երկիր է, բայց միևնույն ժամանակ դարձել է նոր ու երիտասարդ:

Վերջացնելով իմ խոսքը, աղոթում եմ առ Բարձրյալն Աստված, որպեսզի երկար կյանք պարգևի Ամենայն Հայոց Հայրապետին և պահի-պահպանի Հայաստանյայց Եկեղեցին, հայ ժողովուրդը և նրա հայրենիքը հավիտյանս հավիտենից: Ամեն:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՎՐԱՍՏԱՆԻ ԻԼԻԱ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

(26 սեպտեմբեր 1982 թ.)

Սիրելի հավատացյալներ, թույլ տվեք ջերմությամբ ողջունել այստեղ նաև ներկայությունը Վրաստանի Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսի: Նա եկել է քրիստոնյա Վրաստանից և բերել է իր օրհնությունը և իր սերը:

Վրացոց հետ մենք իսկապես եղբայրներ ենք: Նրանք մեզ անվանում են սոմխեթիներ, այսինքն՝ բարի դրացիներ, որոնք ապրում են Վրաստանի հարավային կողմում: Աշխարհագրականորեն Վրաստանը և Հայաստանը համարյա մեկ մարմին են կազմում: Այս երկու հապար և ավելի տարիների ընթացքում երբեք չեն եղել թշնամական հարաբերություններ մեր երկու ազգերի միջև, մի բան, որ հազվագյուտ է հարևան այլ ժողովուրդների միջև: Սոմխեթիներն ու քարթվելիները, այսինքն՝ հայերն ու վրացիները, միշտ էլ եղբայրներ են եղել ի սկզբանե մինչև այսօր: Եվ մենք մեկ ենք մեր քրիստոնեական հավատքով, մեկ ենք մեր աշխարհագրական դիրքով, մեկ ենք նաև մեր պատմությամբ:

Մեր դաժան պատմության ողբերգական շրջաններին, վերջին հարյուր հինգ հարյուր տարիների ընթացքում, ամեն անգամ, երբ բարբարոս և անխիղճ ժողովուրդներ ներխուժել են Հայաստան և հարվածել մեզ, նույն այդ ժամանակներում նույն արհավիրքները տեղի են ունեցել նաև Վրաստանում: Շատ անգամ վրացի և հայ իշխաններ, ձեռք-ձեռքի տված, միասին իրենց սուրը մերկացրել են պաշտպանելու համար Վրացոց և Հայոց հայրենիքները, պաշտպանելու համար իրենց ապատությունը: Այդ պատմական իրողությունը ամենահզոր հիմքն է կազմում, իմ կարծիքով, մեր երկու ժողովուրդների և Եկեղեցիների միասնության, բարեկամության և եղբայրության:

Ես մաղթում եմ Նորին Սրբությանը աստվածային առատ շնորհներ, որպեսզի նա զորանա հավատքով, մտքով և սրտով և, իր շուրջը հավաքած երիտասարդ և հավատավոր գործակիցներ, կարողանա քայլ առ քայլ բարձրացնել վրացական պատմական առաքելական Եկեղեցու անունն ու համբավը:

Ահա այս զգացումներով, սիրեցյալ Եղբայր մեր ի Քրիստոս, Ես վերստին ողջունում եմ Ձեզ և աղոթում, որ Աստված օրհնի մեր այսօրվա հանդիպումը, ինչպես հետագայի մեր բոլոր հանդիպումները:

Հայոց Հայրապետի քարոզից հետո Տ. Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսն առաջնորդվում է Ավագ խորան՝ իր խոսքն ուղղելու հավատացյալներին:

Տ. ԻԼԻԱ Բ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(Կիրակի, 26 սեպտեմբերի)

Ձերդ Սրբություն, սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս, Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս Ամենայն Հայոց Տ. Տ .Վազգեն Ա,

Ձերդ Սրբություն Տ. Իգնատիոս Ա Զաքքա, Պատրիարք Ասորական Եկեղեցու Անտիոքի և Համայն Արևելքի,

Սրբազան հայրեր, սիրեցյալ եղբայրներ և քույրեր,

Ճշմարտապես մեծ է Աստված: Մենք մարդկային տկար լեզվով չենք կարող նկարագրել նրա մեծությունը, որի զորությունը բազում դարեր երևացել է մեր ժողովուրդների մեջ: Ո՞վ է եղել անցյալում մեզ հովանավորողը և մեր Փրկիչը, եթե ոչ Աստված, երբ թշնամիները պատերազմում էին մեր դեմ և ուզում էին մեզ ոչնչացնել: Նրանք ուզում էին կրակով և սրով խլել մեզանից Քրիստոսի հավատքը և մեզ ոչնչացնել, բայց մեզ օգնեց ամենակարող Աստված իր գթությամբ:

Ինչպե՞ս վրացի և հայ ժողովուրդները կարողացան, բազում պայքարների և պատերազմների ընթացքում, ստեղծել անկրկնելի գեղեցկությամբ հուշարձաններ, անթիվ տաճարներ ու վանքեր, աշխարհի հայտնի գեղարվեստական ստեղծագործություններ, եթե ոչ Աստուծո օգնությամբ և մեր ժողովուրդների իմաստությամբ:

Վրաց և հայ ժողովուրդների բայեկամությունը բազմադարյան է, բարեստեղծ է և հետաքրքրական: Միակ բանը, որ լավագույնս կարող է բնութագրել մեր ժողովուրդների միասնությունը, այն է, որ երբ դժվարին է եղել հայոց վիճակը, դժվարին է եղել նաև վրացիների վիճակը, և երբ որ ուժեղ է եղել Վրաստանը, հզոր և խաղաղ է եղել նաև Հայաստանը: Մենք ունեցել ենք նույն թշնամիները և նույն բարեկամները: Եթե մենք մի հայացք նետենք դեպի մեր անցյալը, կտեսնենք, որ մեր երկու ժողովուրդների մեջ միշտ էլ եղել են այնպիսի անձնավորություններ, թե՛ վրացիների և թե՛ հայերի, որոնք լավ են

գիտակցել մեր ազգերի բարեկամության արժեքը և միշտ աշխատել են կարգացնել բարեկամական և մշակութային կապերը հարևան երկու ժողովուրդների միջև: Մենք պետք է ամեն ինչ, որ ունենինք, այն է՝ մեր պատմությունը, գրականությունը, արվեստը և ավանդությունները, որոնք անշուշտ օգնել են, օգնում են և կօգնեն մեր բարեկամության ամրապնդմանն ու հարատևմանը:

Մեր Եկեղեցիների վրա այդ իմաստով մեծ պարտականություն է դրված: Խոր գոհունակությամբ ցանկանում եմ նշել այն փաստը, որ այսօր մեր Եկեղեցիների հարաբերությունները համերաշխ են նաև Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդում: Այն բոլոր հարցերը, որոնք այսօր հուզում են քրիստոնյա Եկեղեցիներին աշխարհի խաղաղության պաշտպանության հարցում, հուզում են նույնպես մե՛ր Եկեղեցիներին: Այսօր աշխարհում ամենահրատապ և ամենակարևոր խնդիրը խաղաղության պաշտպանությունն է: Մեր Եկեղեցիները գործուն կերպով մասնակցում են խաղաղության դատին նվիրված բազմաթիվ ժողովների և միջազգային կոնֆերանսների, որոնք շատ են օգնում խաղաղ համագործակցությանը: Դուք, Ձերդ Սրբություն, հանդիսանում եք քրիստոնյա աշխարհում ամենագործունյա անձնավորություններից մեկը խաղաղության պաշտպանության գործում: Մենք համոզված ենք, որ Հայր Աստծու օգնությամբ մեզ կտրվի ողջունել այն օրհնյալ պահը, որի մասին ասել է Սուրբ Եսայի մարգարեն. «Եվ նա հեթանոսների մեջ դատաստան պիտի տեսնի, շատ ժողովուրդների պիտի հանդիմանի, և նրանք իրենց սրերը խոփեր և իրենց նիզակները արորներ պիտի շինեն: Ազգ ազգի վրա սուր պիտի չբարձրացնի, և էլ պատերազմ տալ պիտի չսովորեն»:

Ձերդ Սրբություն, ի սրտե ողջունում եմ Ձեզ Վրաց Եկեղեցու անունից և շնորհավորում Ձեր գահակալության 27-րդ տարեդարձը: Ամեն անգամ, երբ գալիս եմ Հայաստան և նայում եմ ձեր եկեղեցիներին, ամեն ինչում երևում է Ձեր հոգատար ձեռքը: Աստված Ձեզ պարգևել է մեծ հոգեկան ուժ: Ես աղոթում եմ առ Աստված, որ Հայ Եկեղեցին երկար տարիներ լինի Ձեր արդյունավետ հոգատարության տակ: Ի նշան մեր մեծ հարգանքի և եղբայրական սիրո, թույլ տվեք նվիրել Ձեզ մի սրբանկար, որի վրա հայկական և վրացական տաճարների հետ միասին պատկերված են սրբուհիներ Ս. Նունեն, Ս. Հռիփսիմեն և Ս. Գայանեն:

Թող Աստված օրհնի մեր ժողովուրդներին և մեր Առաքելական Սուրբ Եկեղեցիները. ամեն:

Հայոց Հայրապետը շնորհակալությամբ է ընդունում Տ. Իլիա Պատրիարքի ձեռքից թանկագին սրբանկարը:

Հավարտ ս. պատարագի երեք Հովվապետները Մայր տաճարից հանդիսավորությամբ առաջնորդվում են Վեհարան, որտեղ, ի պատիվ Մայր Աթոռի մեծարգո հյուրերի, տրվում է պաշտոնական ճաշկերույթ:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սեպտեմբերի 27-ին, երկուշաբթի:

Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Հայոց Հայրապետը, Տ. Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսը և Տ. Իգնատիոս Զաքքա Ա Պատրիարքը, իրենց շքախմբերով, այցելում են Ծիծեռնակաբերդի Հայ նահատակաց հուշարձան: Այստեղ տեղի է ունենում մասնավոր հոգեհանգստյան պաշտոն, և ծաղկեպսակներ են դրվում Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:



ՏՈՆ ՎԱՐԱԳԱ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ. ԴԵՊԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

Նույն օրը, ժամը 12-ին, Տ. Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսը Երևանում այցելում է Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհուրդ: Այստեղ մեծահարգ հյուրին և նրա շքախմբի անդամներին ողջունում և բարի գալուստ են մաղթում ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանը և տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանը:

Վրաց Եկեղեցու գահակալի և Խորհրդի պրն. նախագահի միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

Նույն օրը, նույն ժամին, Տ. Իգնատիոս Զաքքա Ա Պատրիարքը իր շքախմբով այցելում է Երևանի Ս. արգիս եկեղեցի, որտեղ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Արսեն եպիսկոպոս Բերբերյանը, ի գլուխ քահանայից դասի, թեմական և եկեղեցական վարչությունների անդամների, ջերմորեն դիմավորում և բարի գալուստ է մաղթում Մայր Աթոռի հարգարժան հյուրին:

Մայր եկեղեցում տեղի ունեցած կարճ արարողությունից հետո Տ. Իգնատիոս Զաքքա Պատրիարքը ողջույնի և օրհնության իր խոսքն է ուղղում Տ. Արսեն եպիսկոպոսին, քահանայից դասին և բոլոր ներկաներին: Սրբազան Պատրիարք Հայրը լավագույն տպավորություններով մեկնում է Ս. Սարգիս եկեղեցուց:

Ժամը 14.30-ին Բյուրականի «Հայկաշեն» ամառանոցում, ի պատիվ Մայր Աթոռի հյուրերի, կազմակերպվում է հրաժեշտի ընդունելություն:

Ընդունելությունից առաջ Հայ Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների, Վրացական և Ասորական Եկեղեցիների հոգևոր պետերի և նրանց շքախմբի անդամների միջև տեղի է ունենում էկումենիկ տեսակցություն Հայ Եկեղեցուն և երկու քույր Եկեղեցիներին հետաքրքրող մի շարք եկեղեցական հարցերի շուրջ:

Տ. ԻԼԻԱ Բ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀՐԱԺԵՇՏ Է ՏԱԼԻՍ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՆ

Սեպտեմբերի 28-ին, երեքշաբթի օրը, առավոտյան, Տ. Իլիա Բ Սրբազան Պատրիարք Հայրը ջերմ շնորհակալություն է հայտնում Հայոց Հայրապետին իր անձի և իր շքախմբի անդամների նկատմամբ ցույց տրված եղբայրական սրտաբաց ընդունելության համար, հրաժեշտ է տալիս Մայր Աթոռին և մեկնում իր աթոռավայրը՝ Թբիլիսի, իր շքախմբի անդամների հետ:

Երևանի Հարավային օդանավակայանում Նորին Սրբությանը ճանապարհում է Հայոց Հայրապետը՝ շրջապատված բարձրաստիճան հայ հոգևորականներով:

Քույր Եկեղեցու պետին բարի ճանապարհ մաղթելու համար այստեղ են ժամանել նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանը և տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանը:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԱՌՆԻ, Ս. ԳԵՂԱՐԴԻ ՎԱՆՔ, ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, ԽՈՐՎԻՐԱՊ ԵՎ ՍԵՎԱՆԻ ԼԻՃ

Սեպտեմբերի 28-ին, երեքշաբթի օրը, Տ. Իգնատիոս Զաքքա Ա Պատրիարքը այցելություն է տալիս Գառնիի հեթանոսական տաճար և ապա ուղևորվում է դեպի Ս. Գեղարդի վանք: Վանքի վանահայր Տ. Եղիշե ավագ քահանա Սար-

գըսյանը՝ շրջապատված միաբանության քահանա հայրերով, դիմավորում է Տ. Զաքքա Պատրիարքին և առաջնորդում եկեղեցի, ուր տեղի է ունենում կարճ արարողություն: Սրբազան Պատրիարքը հիացումով է դիտում հայ մշակույթի մեծ կենտրոն պատմական այս վանքը և հետաքրքրությամբ լսում վանքի կառուցման, նրա ճարտարապետական առանձնահատկությունների և պատմության մասին վանահոր տված բացատրությունները:

Ապա Գեղարդա վանքի վանահայրը և միաբանությունը իրենց հյուրին պատվում են մասնավոր ճաշկերույթով:

Սեպտեմբերի 29-ին, առավոտյան ժամը 10-ին, Տ. Իգնատիոս Զաքքա Ա Պատրիարքը քաղաքավարական այցելություն է տալիս Երևանում Հայկ. ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհուրդ՝ իր շքախմբի անդամներով: Տ. Իգնատիոս Զաքքա Պատրիարքի և Խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանի միջև տեղի է ունենում սիրալիր զրույց բարեկամական մթնոլորտում:

Նույն օրը Տ. Իգնատիոս Զաքքա Ա Պատրիարքը այցելում է Երևանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարան: Մատենադարանի շքամուտքի առաջ Մատենադարանի տնօրեն դոկտ. Սեն Արևշատյանը և հիմնարկության պատասխանատու աշխատակիցներ դիմավորում և բարի գալուստ են մաղթում Մայր Աթոռի մեծարգո հյուրին: Այնուհետև Տ. Զաքքա Ա Պատրիարքը մեծ հետաքրքրությամբ և հիացումով ծանոթանում է հայ դպրության անկրկնելի ձեռագիր արժեքներին, այդ թվում նաև՝ Մատենադարանում գտնվող և խնամքով պահպանված ասորերեն լեզվով մի շարք ձեռագիր մատյանների և պատառիկների: Վերջում Տ. Զաքքա Ա Պատրիարքը իր խանդավառ տպավորություններն է արձանագրում Մատենադարանի ոսկեմատյանում և լավագույն տպավորություններով հրաժեշտ տալիս Մատենադարանին:

Ավելի ուշ, ժամը 13-ին, Ասորական Եկեղեցու Հովվապետը այցելում է Խորվիրապի վանք, ուր երկար տարիներ ծանր տառապանքների է ենթարկվել Հայ Եկեղեցու մեծ լուսավորիչն ու սուրբը: Վանքի մուտքի առաջ վանահայր Տ. Գուրգեն ավագ քահանա Մուրադյանը դիմավորում և բարի գալուստ է մաղթում օրվա հյուրին: Այնուհետև Տ. Զաքքա Պատրիարքը վանահոր առաջնորդությամբ այցելում է վանքի եկեղեցի, տեսչարան, վանական սենյակներ և ապա երկյուղած բարեպաշտությամբ մոտենում ու դիտում պատմական Խորվիրապը:

30 սեպտեմբեր, հինգշաբթի:

Այսօր, ժամը 10-ին, Տ. Զաքքա Պատրիարքը, իր շքախմբի անդամներով, մեկնում է Սևան և այցելում կղզու պատմական եկեղեցիները: Այստեղ, ի պատիվ Պատրիարք Հոր, տրվում է ճաշկերույթ:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆ

Հոկտեմբերի 1-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Տ. Իգնատիոս Ա Պատրիարքը այցելում է Էջմիածնի հոգևոր ճեմարան: Ճեմարանի մուտքի առաջ տեսուչ Տ. Եղնիկ քահանա Պետրոսյանը, տեսչական կազմի անդամները, ճեմարանի դասախոսներն ու ուսանողությունը ծափողջույններով դիմավորում են Նորին Ամենապատվությանը, որը առաջնորդվում է հանդիսությունների դահլիճ: Այստեղ տեսուչ Տեր Հայրը ողջունում և բարի գալուստ է մաղթում հարգելի հյուրին, ապա համառոտակի ներկայացնում է հոգևոր ճեմարանի պատմությունը՝ կանգ առնելով նաև հոգևոր ուսումնական այդ հաս-

տատության այսօրվա կյանքի վրա: Ապա, նախօրոք պատրաստված մի հայտագրի համաձայն, տեղի են ունենում երգեր, ուղերձներ և արտասանություններ ուսանողների ուժերով:

Վերջում տեսուչ Հայրը հրավիրում է Տ. Իգնատիոս Պատրիարքին՝ իր օրհնության խոսքն ու պատգամը ուղղելու ուսանողությանը:

Հոկտեմբերի 2, շաբաթ:

Այսօր, առավոտյան ժամը 10-ին, Հայոց Հայրապետի և Տ. Իգնատիոս Զաքքա Ա Պատրիարքի միջև տեղի է ունենում վերջին հանդիպումն ու տեսակցությունը էկումենիկ ոգով:

Ժամը 13-ին Վեհարանի սեղանատանը Վեհափառ Հայրապետը ողջերթի ճաշկերույթ է տալիս ի պատիվ Տ. Իգնատիոս Զաքքա Պատրիարքի: Այս առթիվ Հայոց Հայրապետը, ի նշան Իր եղբայրական սիրո և համակրանքի, Նորին Ամենապատվության կուրծքը զարդարում է Ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի շքանշանով: Նորին Ամենապատվությունը Հայոց Հայրապետի ձեռքից ընդունելով այս բացառիկ պարգևը, խորին շնորհակալություն և երախտագիտություն է հայտնում Վեհափառ Հայրապետին՝ Հայ Եկեղեցու բարձրագույն շքանշանը համարելով երկու քույր Եկեղեցիների միջև գոյություն ունեցող սերտ կապի և ի Քրիստոս սիրո միության լավագույն երաշխիք:

Ժամը 11-ին Հայոց Հայրապետը Իր շքախմբի անդամներով Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում բարի ճանապարհ է մաղթում Տ. Իգնատիոս Զաքքա Ա Պատրիարքին և նրա շքախմբի անդամներին:

Ասորական քույր Եկեղեցու պետին բարի ճանապարհ մաղթելու համար օդանավակայան էին ժամանել Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանը և տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանը:

Տ. Իգնատիոս Զաքքա Ա Պատրիարքի Մայր Աթոռում գտնվելու բոլոր օրերին, նրա պաշտոնական այցելությունների ժամանակ, նրան մշտապես ուղեկցում էր, հանուն Հայոց Հայրապետի, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ և Հունաստանի թեմի հայրապետական պատվիրակ Տ. Ոսկան եպիսկոպոս Գալֆաքյանը:



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 2 օրերին, Ամենայն Հայոց Հայրապետի հրավերով, Նրա գահակալության 27-րդ տարեդարձի առթիվ, Մայր Աթոռ այցելեց Անտիոքի և Համայն Արևելքի Ասորական Ուղղափառ Եկեղեցու պետ Նորին Ամենապատվություն Տ. Իգնատիոս Զաքքա Ա Պատրիարքը իր շքախմբով: Շքախմբի կազմում էին պատրիարքական փոխանորդ Մար Սևերիոս Իսհակ արքեպիսկոպոս Սաքան և Պատրիարքի քարտուղար Ռաբբան Բենժամին վարդապետ Ժոզեֆը:

Սեպտեմբերի 24-ին, երեկոյան ժամը 19-ին, Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում, քույր Եկեղեցու պետի ժամանման առթիվ, ողջույնի և բարիգալստյան խոսքեր փոխանակվեցին Ամենայն Հայոց կաթողիկոսի և Ասորական Եկեղեցու գահակալի միջև:

Սեպտեմբերի 26-ին, կիրակի օրը, Մայր տաճարում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ, որին ներկա եղան երկու Հայրապետները, որոնք փոխանակեցին եղբայրական սիրո և գնահատանքի ճառեր: Հավարտ պատարագի Վեհարանի սեղանատանը, ի պատիվ Ասորական Եկեղեցու հոգևոր պետի, տրվեց պաշտոնական ճաշկերույթ:

Մայր Աթոռում կեցության օրերին Տ. Իգնատիոս Զաքքա Ա Պատրիարքը և նրա շքախմբի անդամները այցելեցին Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե, Ս. Շողակաթ, Ս. Գեղարդ և Ս. Խորվիրապի վանքեր, Երևանի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցի, Ծիծեռնակաբերդի Հայ նահատակաց հուշարձան, Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարան, ինչպես նաև Երևանի տեսարժան վայրերը:

Մայր Աթոռի մեծարգո հյուրի պաշտոնական այցելության առթիվ երկու քույր Եկեղեցիների պետերի և նրանց շքախմբի անդամների միջև Վեհարանում և «Հայկաշեն»-ում տեղի ունեցան խորհրդակցություններ էկումենիկ ոգով, հառավել ամրապնդում երկու Եկեղեցիների գործակցության:

Սեպտեմբերի 27-ին Տ. Իգնատիոս Զաքքա Ա Պատրիարքը այցելություն տվեց Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհուրդ:

Հոկտեմբերի 2-ին, շաբաթ օրը, առավոտյան, Տ. Իգնատիոս Զաքքա Ա

Պատրիարքը գոհունակ սրտով և լավագույն տպավորություններով հրաժեշտ տվեց Հայոց Հայրապետին և մեկնեց իր աթոռանիստը՝ Դամասկոս:

Ասորական Ուղղափառ Եկեղեցու Սրբազան Պատրիարքի սույն այցելությունը Մայր Աթոռ մի նոր լուսավոր էջ ավելացրեց երկու քույր Եկեղեցիների միջև գոյություն ունեցող դարավոր եղբայրական հարաբերությունների պատմության մեջ:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
2 հոկտեմբեր 1982 թ.





ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Հայրապետի հրավերով սույն թվականի սեպտեմբերի 25-ին եռօրյա պաշտոնական այցելությամբ Մայր Աթոռ ժամանեց Վրաստանի Օրթոդոքս Եկեղեցու պետ Նորին Սրբություն Տ. Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսը: Սույն այցելության ընթացքում Նորին Սրբությանը, որպես նրա շքախմբի անդամներ, ուղեկցում էին՝ գերաշնորհ Տ. Կոստանդին արքեպիսկոպոսը, գերաշնորհ Տ. Վախտանգ եպիսկոպոսը, հոգեշնորհ Տ. Կալիստրատ աբեղան և արժանապատիվ Տ. Զուրաբ ավագ քահանան:

Երևանի Հարավային օդանավակայանում Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոսը ողջունեց ժամանումը Վրացական քույր Եկեղեցու հոգևոր պետի, որից հետո երկու Հովվապետները հանդիսավոր շքերթով ու «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Սուրբ Էջմիածնի Մայր տաճար, ուր փոխանակեցին եղբայրական սիրո և գնահատանքի ջերմ խոսքեր:

Սեպտեմբերի 26-ին, կիրակի օրը, Մայր տաճարում մատուցված սուրբ պատարագի արարողությանը ներկա եղան Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և Տ. Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսը: Պատարագի ընթացքում երկու Հայրապետների միջև փոխանակվեցին ճառեր:

Նույն օրը, ժամը 15-ին, Վեհարանի սեղանատը, ի պատիվ Վրաց Եկեղեցու հոգևոր պետի, տրվեց պաշտոնական ճաշկերույթ:

Սեպտեմբերի 27-ին Տ. Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսը քաղաքավարական այցելություն տվեց Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Տիար Ռուբեն Պարսամյանին:

Մայր Աթոռում գտնվելու օրերին Վրաց Եկեղեցու գահակալն ու նրա շքախմբի անդամները այցելեցին Երևանի Ս. Սարգիս եկեղեցի և Ծիծեռնակաբերդում ծաղկեպսակ կետեղեցին Հայ նահատակաց հուշարձանին:

Տ. Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսը Մայր Աթոռ այցելության առթիվ Ամենայն Հայոց Հայրապետի հետ ունեցավ խորհրդակցություններ էկումենիկ ոգով, մեր օրերին հետաքրքրություն ներկայացնող եկեղեցական մի շարք հարցերի շուրջ:

Սեպտեմբերի 28-ին Տ. Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսը և նրա շքախմբի անդամները հրաժեշտ տվեցին Հայոց Հայրապետին և լավագույն տպավորություններով մեկնեցին Թբիլիսի:

Տ. Իլիա Բ Պատրիարք-կաթողիկոսի սույն այցելությունը Մայր Աթոռ առավել ևս սերտացրեց և ամրապնդեց Հայաստանյայց Առաքելական և Վրացական Օրթոդոքս Եկեղեցիների միջև հաստատված դարավոր բարեկամական կապերն ու եղբայրական համագործակցությունը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
27 սեպտեմբեր 1982 թ.



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ս. թ. սեպտեմբերի 7—14 օրերին Վեհափառ Հայրապետի հրավերով Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին գերաշնորհ Հեների Հիլլ եպիսկոպոսը՝ ներկայացուցիչը Համայն Անգլիկան Եկեղեցու, և պրոֆ. Դոնալդ Շուրմանը, ծանոթանալու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կյանքին ու սրբավայրերին:

Հյուրերը Վեհափառ Հայրապետի կողմից ընդունվելուց հետո, հաջորդ օրերին այցելեցին Ս. Էջմիածնի, Ս. Հռիփսիմեի, Շողակաթի, Ս. Գայանեի Ս. Գեղարդի, Խորվիրապի վանքերը, Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցին, ինչպես նաև Ծիծեռնակաբերդ, Գառնի և Մատենադարան:

Սեպտեմբերի 13-ին հյուրերը այցելեցին հոգևոր ճեմարան և հանդիպում ունեցան տեսչության, դասախոսական կազմի ու սաների հետ:

Սույն այցելության ընթացքում տեղի ունեցան զրույցներ հյուրերի և Մայր Աթոռի կողմից նշանակված հանձնախմբի միջև Հայ և Անգլիկան Եկեղեցիներին հետաքրքրող կրոնա-դավանաբանական մի շարք այժմեական հարցերի շուրջ:

Սեպտեմբերի 14-ին հյուրերը հրաժեշտ տվեցին Նորին Սրբությանը եղբայրական ջերմ տրամադրություններով:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
20 սեպտեմբեր 1982 թ.

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ՀԵՆՐԻ ՀԻԼԼ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ՝ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՎ, ՎԵՀԱՐԱՆԻ ՇՔԱՄՈՒՏՔԻ ԱՌԱՋ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 12. կիրակի. Խաչվերաց.

Այսօր, Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցում, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Արսեն եպս. Բերբերյանը ս. պատարագի ընթացքում կատարում է Մայր Աթոռի հոգևոր ճեմարանից շրջանավարտ Տիգրան սարկավագ Սահրադյանի և Լևոն սարկավագ Բաղդասարյանի քահանայական ձեռնադրությունը:

Առավոտյան ժամերգության ժամանակ կատարվում է երկու ներընծա քահանայացուների կոչման կարգը, իսկ ս. պատարագի ընթացքում՝ քահանայական ձեռնադրության և օծման կարգը:

Տիգրան սարկավագը վերանվանվում է Տ. Տիրայր քահանա, իսկ Լևոն սարկավագը՝ Տ. Նորայր քահանա:

Օծման հանդիսությունից հետո ձեռնադրիչ Տ. Արսեն եպիսկոպոսը նորընծաներին ուղղում է մի բովանդակալից խրատական՝ բացատրելով քահանայական կոչման վեհությունը, սրբական պատասխանատվությունն ու պարտավորությունները, որ է օրինակ լինել հավատացյալներին «խոսքով, վարմունքով, սիրով, հավատով և սրբությամբ» (Ա Տիմոթ. Դ 12):

Նորընծա Տ. Տիրայր և Տ. Նորայր քահանաները իրենց քառասունքը անցկացնում են Մայր Աթոռում, Տ. Արտակ քհն. Սիմոնյանի հոգևոր ղեկավարության ներքո:

Տ. Տիրայր քահանա Սահրադյան. Ծնվել է 1958 թվականի հունիսի 27-ին Մասիսի շրջանի Ավատաշեն գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է Գեղանիստի դպրոցում: 1978 թվականին ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան և այն ավարտել 1981 թվականին: Սարկավագ է ձեռնադրվել 1980 թվականին: 1982 թվականի սեպտեմբերի 12-ին քահանա է ձեռնադրվել:

Տ. Նորայր քահանա Բաղդասարյան. Ծնվել է 1956 թվականի օգոստոսի 4-ին Երևանում: 1970 թվականին ավարտել է Երևանի միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանը և նույն տարին ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան և այն ավարտել 1977 թվականին: Սարկավագ է ձեռնադրվել 1975 թվականին Մինչև քահանա ձեռնադրվելը, 1982 թվականի սեպտեմբերի 12-ը, ծառայել է որպես սարկավագ Երևանի Ս. Սարգիս եկեղեցում:

Մի պահ ձեռնադրությունից



ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի սեպտեմբերի 7-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, հոգեվոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ հոգևոր ճեմարանի 38-րդ տարեշրջանի՝ 1982—1983 ուսումնական տարվա հանդիսության բացումը: Վեհափառ Հայրապետի կողքին տեղ էին գրավել Տ. Սիոն, Տ. Հուսիկ, Տ. Ներսես սրբազանները: Հանդիսությանը ներկա էին նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանը և տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանը: Ճեմարանի հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և այլ հյուրեր:

Հանդիսությունն սկսվում է խմբովին արտասանված «Հայր մեր»-ով և Վեհափառ Հայրապետի աղոթքով, որից հետո երգեցիկ խումբը կատարում է ճեմարանի քայլերգը: Ապա հոգևոր ճեմարանի փոխտեսուչ Հայկազուն աբեղա Նաջարյանը Ավետարանից ընթերցում է «Սերմնացանի առակը» (Մատթ. ԺԳ 4—9) հատվածը: Ճեմարանի սաները մեծ ոգևորությամբ կատարում են «Աշակերտք Քրիստոսի» ու «Որք Զարդարեցին» շարական-խմբերգը, և Բ լսարանի ուսանող Թորոս Մելենկիչյանը ընթերցում է Նարեկից՝ Ս. Հոգուն ուղղված աղոթք-աղերսը (Բան ԼԴ):

Այնուհետև հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եղնիկ քահանա Պետրոսյանը հանդես է գալիս հետևյալ բացման խոսքով:

«Ամառային արձակուրդներից հետո այսօր կրկին իր դռներն է բացում Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը: Քիչ հետո լսվելու է 1982—1983 ուսումնական տարվա առաջին զանգը: Հոգևոր ճեմարանը թևակոխում է մի նոր ուսումնական տարի»:

Հոգևոր ճեմարանի նոր ուսումնական տարվա անելիքների և ծրագրերի մասին խոսելուց հետո տեսուչը ներկաներին ծանոթացնում է ճեմարանի տեսչության և դասախոսական կազմի հետ:

«Այս տարվա հոգևոր ճեմարանի տեսչական կազմը հետևյալն է.

Տեսուչ՝ Եղնիկ քահանա Պետրոսյան.
Փոխտեսուչ՝ Հայկազուն աբեղա Նաջարյան.
Վերակացուներ՝ պրն. Վաչագան Հովհաննիսյան.
Կառլեն սարկավագ Պետրոսյան.
Հայկ սարկավագ Չիլինգարյան.
Քարտուղար՝ Գարուշ սարկավագ Լազարյան.
Գրադարանավար՝ պրն. Հենրիկ Բալյան:

Այս ուսումնական տարում գրաբարի դասավանդությունների համար հրավիրվել է

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ պրն. Պետրոս Բեդիրյանը:

Ինչպես տեսչությունը և դասախոսական կազմը, այնպես էլ ուսանողությունը ամբողջությամբ գիտակցում են հոգևոր ճեմարանի դերն ու նշանակությունը Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի կյանքում: Այն գիտակցությունը առավել պատասխանատվությամբ է լցնում մեր բոլորի սրտերն ու հոգիները: Եվ թող բացման այս հանդիսությունը ուխտի պահ լինի մեզ՝ բոլորիս համար:

Վեհափառ Տեր, համաձայն Հայ Եկեղեցու վարդապետության՝ Ս. Թադեոս և Ս. Բարթողիմեոս առաքյալների հաջորդ Հայոց ընդհանրական կաթողիկոսը «իր մեջ ամփոփում է Ս. Հոգու բոլոր շնորհների վեղումը»: Հետևաբար, ճեմարանի տեսչությունը այս կարևոր պահին հայցում է Ձերդ Սրբության օրհնությունը հոգևոր ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության համար, մեր գործերի հաջողության համար:

Օրհնեցեք մեզ, Վեհափառ Տեր»:

Այնուհետև Իր հայրական օրհնությամբ և բարի մաղթանքներով խոսեց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը, Իր խոսքը ու պատգամը ուղղելով ուսանողությանը և հատկապես նոր ընդունված սաներին՝ թելադրեց, որ նրանք լինեն կարգապահ, հավատքի և գիտության երիտասարդներ, տիրապետեն Ս. Գրական գիտելիքներին, ինչպես նաև հայոց լեզվի, մանավանդ գրաբար հայերենին: Եվ առանձնահատուկ ուշադրություն դարձնեն հայ ժողովրդի պատմությանը, որը սերտորեն առնչվում է Հայ Եկեղեցու պատմության հետ:

Հայոց Հայրապետը ամենայն կարևորությամբ շեշտեց ուսանողների մասնակցությունը առավոտյան և երեկոյան ժամերգություններին, եկեղեցական-կրոնական հանդիսություններին, որպեսզի հմտանան եկեղեցական ժամապաշտության և շարականագիտության մեջ:

Իր պատգամի ավարտին Վեհափառ Հայրապետը աշխատանքի եռանդ ու նվիրում մաղթեց ճեմարանի տեսչությանը, դասախոսական կազմին և ուսանողությանը, որպեսզի ուսումնական նոր տարին լինի բեղմնավոր և արդյունավետ՝ ի պայծառություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի:

Հոգևոր ճեմարանի բացման սույն հանդիսությունը ավարտվեց խմբովին երգված «Հայր մեր»-ով և Նորին Սրբության «Պահպանիչ»-ով:

Սեպտեմբերի 8-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 9[20]-ին, հնչեց այս տարվա առաջին զանգը:

Ուսանողները սրտի թրթռոով և խորունկ ուշադրությամբ լսեցին առաջին դասախոսությունները:

ՎԱՐԴԳԵՍ ՍՐԿ. ՄԿՐՏՉՅԱՆ

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Օգոստոսի 23-ին, երկուշաբթի օրը, Վեհափառ Հայրապետին այցելեցին մի խումբ սփյուռքահայ ուսուցիչներ, թվով 41 հոգի:

Ուսուցիչների խումբը, ժամանած շուրջ 16 երկրներից, Հայաստան էր եկել Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հրավերով: Երևանում, ուսուցիչների կատարելագործման ինստիտուտի նախաձեռնությամբ, խմբի անդամների համար կազմակերպվեցին մի շարք դասախոսություններ, նաև այցելություններ դեպի Սովետական Հայաստանի տարածքում գտնվող նշանավոր վանքերն ու պատմական հուշարձանները:

Վեհարանում, Վեհափառ Հայրապետի բարիգալստյան խոսքից հետո, խմբի ղեկավար, Հալեպի Կիլիկյան ճեմարանի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Հակոբ Աղայանը Նորին Սրբությանը ներկայացրեց խմբի անդամներին և ապա խմբի անունից արտահայտեց իր որդիական զգացումները:

Այնուհետև խմբի անդամների և Վեհափառ Հայրապետի միջև տեղի ունեցավ մտերմիկ զրույց՝ ջերմ մթնոլորտում: Վերջում, Իր խոսքն ուղղելով այցելու մանկավարժներին, Վեհափառ Հայրապետը նշեց, որ Սփյուռքի հայկական համայնքներում շատ ազգային գործեր են կատարվում, բայց հայ ուսուցչի աշխատանքը ամենակարևորն ու ամենանվիրականն է, որովհետև նա է, որ հայ մանուկների մեջ պետք է սերմանի հայեցի ոգի ու մայրենի լեզվի սերը:

Սփյուռքահայ ուսուցիչները խոր գոհունակությամբ հրաժեշտ տվեցին Հայոց Հայրապետին՝ ընդունելով Նրա օրհնությունն ու ջերմ մաղթանքները:

ՖՐԱՆՍԻԱՑԻ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սույն թվականի օգոստոսի 27-ին, ուրբաթ օրը, Մայր Աթոռ այցելեցին մի խումբ ֆրանսիացի ուխտավորներ՝ գլխավորությամբ Քրիստոնյաների միության համար գործող ազգային եպիսկոպոսական քարտուղարության պատասխանատու հայր Ռընե Ժիրոյի:

Խումբը, որին մաս էին կազմում նաև Պուատիեի համալսարանի պրոֆեսոր Միշել Եվդոկիմովը և կաթոլիկ Եկեղեցու մայրապետ քույր Մարի Կլեր Տրոշերը, բաղկացած էր գլխավորապես Մարսելի կաթոլիկ և ավետարանական համայնքների ներկայացուցիչներից:

Առավոտյան ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունեց ֆրանսիացի այցելուներին և բարի գալուստ մաղթեց նրանց: Խմբի ղեկավար հայր Ժիրոն ողջույնի ջերմ խոսք ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ուխտավորների անունից շնորհակալություն հայտնեց Նրան ընդունելության համար՝ նշելով միաժամանակ, որ դեպի Հայաստան և դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին սույն էկումենիկ ուղևորության նպատակն է ծանոթանալ Արևելքի հնագույն Եկեղեցիներից մեկի այսօրվա կյանքին և հաղորդակցվել նրա հարուստ պատմական ավանդությանը:

Իր պատասխան խոսքի մեջ Ամենայն Հայոց Հայրապետը ջերմորեն ողջունեց ֆրանսիացի ուխտավորների գալուստը Հայ Եկեղեցու կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ապա պատմական ամփոփ տեղեկություններ տվեց նրանց Հայ Եկեղեցու դժվարին, բայց փառավոր անցյալի, նրա այսօրվա կյանքի, քույր Եկեղեցիների հետ նրա ունեցած բարեկամական սերտ կապերի մասին՝ նշելով, որ Հայ Եկեղեցին անշեղորեն շարունակում է կատարել իր քրիստոնեական առաքելությունը հայ ժողովրդի կյանքի այսօրվա պայմաններում, թե՛ Սփյուռքում և թե՛ Մայր Հայրենիքում, ուր երեք միլիոն հայեր, հայրենի պետության հովանավորության ներքո, ապրում են խաղաղ, ապահով ու երջանիկ՝ ազատորեն բավարարելով իրենց հոգևոր բոլոր կարիքները:

Այնուհետև Նորին Սրբության և ֆրանսիացի հավատացյալների միջև տեղի ունեցավ վրույց եղբայրական սրտագին մթնոլորտում:

Ընդունելությանը ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպիսկոպոս Պոլատյանը, Տ. Ստեփանոս վարդապետ Չաքալյանը, Տ. Զատիկ աբեղա Ավետիքյանը և Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար պրն. Պարգև Շահբազյանը:

Ընդունելության ավարտին Վեհափառ Հայրապետը հուշանվերներ բաժանեց խմբի անդամներին, բարեհաջող ուղևորություն մաղթեց նրանց և տվեց Իր հայրական օրհնությունները:

Մայր Աթոռ Ս. Էջմիածին իրենց այցելության առթիվ ֆրանսիացի ուխտավորները Մայր տաճարում աղոթեցին Իշման Սուրբ Սեղանի առաջ, ծանոթացան Մայր Աթոռի թանգարաններին, մայրավանքի շրջափակում գտնվող հուշարձաններին, այցելեցին Զվարթնոցի ավերակները, եղան Ս. Հռիփսիմե վանքում, ուր նրանց տրվեցին համապատասխան բացատրություններ:

Ֆրանսիացի ուխտավորները հրաժեշտ առան Հայոց Հայրապետից և Մայր Աթոռից ու մեկնեցին լավագույն տպավորություններով, հոգևոր ուրախությամբ և քրիստոնեական ապրումներով:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ՖՐԱՆՍԱՀԱՅ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐՈՎ ՎԵՀԱՐԱՆԻ ՇՔԱՄՈՒՏՔԻ ԱՌԱՋ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 1-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Աբել աբեղա Օղլուքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ ամուսնության խորհրդի կարևորության մասին, ընտանեկան կյանքում:

*
* *

Օգոստոսի 8-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Նարեկ քհն. Մատարյանը:

«Հայր մեր»-ից առաջ «Սիրեցեք զմիմյանս» բնաբանով քարոզում է Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը:

*
* *

Օգոստոսի 15-ին, կիրակի.—Վերափոխումն Ս. Աստուածածնի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, օրվա մեծ տոնի առիթով, ս. պատարագ է մատուցում Վրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպս. Սերայդարյանը:

«Զկնի սրբոյ պատարագի կատարի օրհնութիւն խաղողոյ»:

*
* *

Օգոստոսի 16-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Խաչատուր քհն. Ֆրանգյանը:

«Զկնի սրբոյ պատարագի կատարի հոգեհանգիստ վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

Օգոստոսի 21-ին, շաբաթ.—Այսօր Վեհափառ Հայրապետը, շուրջ մեկ ամիս Կիսլովոդսկի «Կրասնոյե կամնի» առողջարանում հանգստանալուց հետո, վերադառնում է Մայր Աթոռ՝ ուղեկցությամբ Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպս. Շաքարյանի:

*
* *

Օգոստոսի 22-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Օգոստոսի 23-ին, երկուշաբթի.—Այսօր, հրաժեշտ առնելով Վեհափառ Հայրապետից, Լոնդոն՝ իր պաշտոնատեղին է մեկնում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Հովնան աբեղա Տերտերյանը:

*
* *

Օգոստոսի 24-ին, երեքշաբթի.—Այսօր, հրաժեշտ առնելով Վեհափառ Հայրապետից, Վիեննա՝ իր պաշտոնատեղին է մեկնում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Աբել աբեղա Օղլուքյանը:

*
* *

Օգոստոսի 30-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ստեփանոս վարդապետ Չաքալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ քրիստոնյա մարդու բարոյական նկարագրի մասին:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Օգոստոսի 31-ին, երկուշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանը:

Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում սրբական հորը դիմավորում է Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը:

*
* *

Սեպտեմբերի 3-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստը:

*
* *

Սեպտեմբերի 7-ին, երեքշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետին հրաժեշտ տալով, Նյու Յորք վերադարձավ Ամերիկայի Միացյալ Նահանգների արևելյան թեմի պատգամավորությունը, որի կազմում էին Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը, Տ. Մամբրե քհն. Գուլոյանը և դատավոր Ճան Նաջարյանը: Մայր Աթոռի թանկագին հյուրերը Ս. Էջմիածնում գտնված օրերին ուխտագնացություններ կատարեցին դեպի Ս. Գեղարդ և Ս. Խորվիրապ վանքերը, այցելեցին Երևանի Ս. Սարգիս եկեղեցի, եղան պատմական Վաղարշապատի տաճարները, ուղևորություն կատարեցին դեպի Սևան և Հայաստանի այլ պատմական վայրերը: Սեպտեմբերի 5-ին, կիրակի օրը, Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մամբրե քհն. Գուլոյանը, իսկ «Հայր մեր»-ից առաջ քարոզում է Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը: Սրբական հայրը այդ օրը քարոզեց հետևյալ բնաբանով. «Աշխարհի մեջ շատ նեղություններ պիտի կրեք, բայց մի վախեցեք, քաջալերվեցեք, որովհետև Ես հաղթեցի աշխարհին»:

Սրբականը նշում է, որ կյանքում որևէ օգտակար ու բարի գործ կատարելու համար մարդը պատրաստ պետք է լինի միշտ նեղություն կրելու և կոհողություններ հանձն առնի կյանքում մի ազնիվ նպատակ իրագործելու համար: Նա օրինակներ է բերում մեր Եկեղեցու և ժողովրդի պատմությունից, որ առանց կոհողության ոչինչ չի կարելի ստեղծել կյանքում մարդկության բարօրության համար: Այդ գաղափարով է, որ հայ ժողովուրդը անցել է իր պատմության բոլոր դարերը, կրել իր խաչը, բարձրացել է Գողգոթա, բայց հաղթանակել է, անցել է դժվարին ճանապարհներ և գոյատևել մինչև մեր օրերը: Մեր հայրենիքը, ինչպես նշեց սրբականը, եղել է քարաստան-Հայաստան, բայց այսօր այդ քարաստանը մեր ժողովրդի աշխատանքային սխրանքներով դարձել է ծաղկուն-Հայաստան:

Սրբականն անդրադարձավ նաև Սփյուռքի հայ ժողովրդի դժվարություններին, որոնք սակայն հաղթահարվում են կոհողությամբ և աշխատանքով: Այսօր, ասաց սրբականը, Ամերիկայում ունենք հիսուն եկեղեցիներ, հայության թիվը հասնում է վեց հարյուր հազարի, հայությունը և մեր եկեղեցիները շրջապատված են վտանգներով, բայց մենք ու մեր ժողովուրդը հաղթահարում ենք այդ դժվարությունները Քրիստոսի հավատքով, Ս. Էջմիածնի օրհնությամբ ու պատգամներով: Սրբական հայրն իր քարոզն ավարտում է՝ հորդորելով հավատարիմ մնալ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, մեր ազգային ավանդություններին, հայ ժողովրդի պատմության ոգուն ու մեր անցավոր նեղությունները վերածել հաղթանակի:

*
* *

Սեպտեմբերի 12-ին, կիրակի.—Խաչվերաց.

Այսօր Մայր տաճարում, օրվա մեծ տոնի

առթիվ, հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Տ. Ներսես եպս. Պուլպալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Մեք ի յայն խաչն եմք յուսացեալ, յոր Տէր Յիսուս բնեռեցաւ» (Շարական) բնաբանով:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը և Կանադայից հյուրաբար Մայր Աթոռում գտնվող Հեների Հիլլ եպիսկոպոսը՝ ներկայացուցիչը Համայն Անգլիկան Եկեղեցու, և պրոֆ. Դոնալդ Շուրմանը:

*
* *

Նույն օրը, երեկոյան, կատարվում է «Թափոր Խաչվերացի և մեծ անդաստան»՝ գլխավորությամբ Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի: Սուրբ արարողության ժամանակ Տ. Հիլլ եպիսկոպոսը անգլերեն լեզվով կարդում է Անդաստանի Աղետարանը:

*
* *

Սեպտեմբերի 13-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Բարսեղ քհն. Ղազարյանը: Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգիստ՝ «Վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

Սեպտեմբերի 19-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Զատիկ աբեղա Ավետիքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզեց «Պատուեա զհայր քո եւ զմայր քո, որպէս պատուիրեաց քեզ Տէր Աստուած քո» (Բ Օրինաց Ե 16) բնաբանով:

*
* *

Սեպտեմբերի 20-ին, երկուշաբթի.—Այսօր, առավոտյան, Ս. Էջմիածնի միաբանությունն ու մայրավանքի աշխատավորությունը Վեհարանում ուրախությամբ շնորհավորեցին Վեհափառ Հայրապետի ծննդյան 75-ամյակը, ցանկալով արևշատություն, առողջություն և հաջողություններ Նրան բոլոր ծրագրերի իրականացման համար:

*
* *

Սեպտեմբերի 21-ին, երեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին է այցելում Սովետական Միությունում Կանադայի արտակարգ և լիապոր դեսպան Ջեֆրի Պիրսոնը իր հարգելի տիկնոջ հետ:

Վեհափառ Հայրապետի և պարոն դեսպանի միջև տեղի է ունենում բարեկամական ջերմ զրույց:

*
* *

Սեպտեմբերի 22-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Հայոց Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթը:

*
* *

Սեպտեմբերի 23-ին, հինգշաբթի.—Այսօր, ժամը 11-ին, բարեկամական այցով Մայր Աթոռ է ժամանում Սովետական Միությունում Հունաստանի հանրապետության արտակարգ և լիապոր դեսպան տիար Անդրեաս Մետաքսասը իր հարգելի տիկնոջ հետ: Հայոց Հայրապետի և պարոն դեսպանի միջև տեղի է ունենում զրույց՝ բարեկամական ջերմ մթնոլորտում:

*
* *

Սեպտեմբերի 25-ին, շաբաթ.—Այսօր, երեկոյան, ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեցին Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ և Հունաստանի հայոց թեմի հայրապետական պատվիրակ Տ. Ոսկան եպս. Գալիքյանը և Միացյալ Նահանգաց արևելյան թեմի առաջնորդարանի ներկայացուցիչ Տ. Բաբկեն եպս. Վարժապետյանը:

*
* *

Սեպտեմբերի 28-ին, երեքշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեցին Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը և Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ եպս. Ասատուրյանը:



ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԵՎ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ
ՆՈՐ ԱԲԲԱՀՈՐ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Միաբանության նորընտիր Աբբահայր գերապայծառ Հովհաննես Դերձակյան խորին հարգանք ողջույն կմատուցանե Ձերդ Սրբության:

Հ. ՆԵՐՍԵՍ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Վենետիկ, Ս. Ղազար,
23 հուլիսի 1982 թ.

ԳԵՐԱՊԱՅԾԱՌ ԱԲԲԱՀԱՅՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴԵՐՁԱԿՅԱՆ

Վենետիկ, Ս. Ղազար

Ուրախ սրտով կշնորհավորենք Ձեր ընտրությունը իբրև Աբբահայր Տանն Մխիթարա և ազգանվեր միաբանությանդ: Սուրբ Էջմիածնեն Ձեզի օրհնություն աստվածային և Մեր սրտեն սիրո ողջույն՝ մաղթանքով, որ Տերը Ձեզ զորացնե Սուրբ Հոգիով և լուսավորե Ձեր հոգեշեն առաքելության ճանապարհը: Մեր օրհնությունը և գնահատանքը Ուխտիդ ժրաջան միաբան եղբայրներուն: Ամենայն ինչ Ձեր սիրով եղիցի:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին,
24 հուլիսի 1982 թ.

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՄԱՐՇԱԼ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ ՏԻԿԻՆ ԱՆԱՀԻՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Մոսկվա

Այսօր խոր վշտով լսեցինք մահվան գուժը մարշալ Հովհաննես Բաղրամյանի, հարազատ վավակը հայ ժողովրդի և հերոս վինվորականը սովետական բանակի, որ հատկապես Հայրենական պատերազմի ծանր տարիներին իր կարևոր նպաստը բերեց սովետական ռազմական ուժերի պատմական մեծ հաղթանակին և հայրենիքի փրկության:

Մարշալ Բաղրամյանի ողջ կյանքը նվիրված եղավ սովետական հայրենիքի ազատության և փառքին: Հայ ժողովուրդը ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի հպարտ է մարշալ Բաղրամյանով: Սուրբ Էջմիածնից և Մեր սրտից օրհնություն Հովհաննես Բաղրամյանի հերոսական կյանքին ու հայրենանվեր վաստակին: Հաճեցեք Մեր ցավակցությունները ներկայացնել մարշալի սգակիր հարազատներին:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
23 սեպտեմբեր 1982 թ.



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով Բուենոս Այրեսի հայոց հոգևոր տեսուչ Տ. Գրիգորիս վարդապետ Բունիաթյանի միջնորդությանը, բարեհաճել է իր բարձր ուշադրությանն արժանացնել Բուենոս Այրեսի հետևյալ քահանա հայրերի եկեղեցանվեր, անձնուրաց ծառայությունները և կատարել հետևյալ շնորհաբաշխությունները.

1. Ավագ քահանայության պատիվ և ծաղկյա փիլոն կրելու իրավունք է շնորհվել Տ. Արշամ քահանա Պոկոյանին:

2. Քահանայական լանջախաչ՝

Տ. Վազգեն քահանա Ստեփանյանին

և Տ. Մատթեոս քահանա Գոյումճյանին:

Դարձյալ Տ. Գրիգորիս վարդապետի միջնորդությամբ՝

3. Հայրապետական օրհնության կոնդակների են արժանացել՝

Տիկին Մարթա Դիարբեքիրյանը, իր բազմաթիվ բարեգործությունների, եկեղեցաշեն և կրթանվեր ծառայությունների համար թե՛ Ռումինիայում և թե՛ Արգենտինայում:

Բուենոս Այրեսի հայոց «Ս. Գրիգոր Լուսավորիչ» երգչախումբը՝ իր գործունեության 25-ամյակի և տեղի հայ եկեղեցիներում իր կատարած հոգեբուխ երաժշտական ծառայությունների համար:

Եգիպտոսի հայոց բարեխնամ առաջնորդ Տ. Զավեն արքեպիսկոպոս Չինչինյանի միջնորդությամբ իրենց եկեղեցանվեր, ազգային, կրթական, համայնքային գործունեության համար «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանի են արժանացել.

1. Տիար Էլիաս Ճերահյանը, Ադիս Աբեբա, գաղութային ժողովի ատենապետ.

2. Տիար Պերճ Կարապետյանը, նույն քաղաքի ազգային վարժարանի պահպանմանը իր նյութական և բարոյական ջանքերի համար.

3. Տիար Ավետիս Թերզյանը, եթովպահայ կյանքում իր կատարած 50-ամյա եկեղեցական և ազգային գործերի համար.

4. Տիար Էդվարդ Ճերեճյանը, Խարթումի համայնքի նախագահ, իր կատարած եկեղեցական-ազգային ղեկավարության համար:



ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՉԱՊԱԼՅԱՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Վարդապետ, բարւոք է մեզ աստ լինել և արասցուք երիս տաղաւարս, մի քեզ և մի Մովսիսի և մի Եղիայի» (Ղուկ. Թ 33):

Այսօր Վարդավառ է՝ տոն Այլակերպության կամ Պայծառակերպության Տյառն մերո Հիսուսի Քրիստոսի:

Վարդավառ անունը, ըստ լեզվաբանների, կենդերեն է և նշանակում է՝ վարդ-ջուր և վառ-սրսկել, այսինքն՝ ջուր սրսկելու օր կամ տոն:

Մեր նախահայրերը Հայաստանում քրիստոնեությունից առաջ հեթանոսներ էին, հելլենական ազդեցությամբ պաշտում էին աստվածների արձաններ և պարսկական կրակը:

Նավասարդ ամսվա առաջին օրը՝ հայկական տարվա հունվարի մեկին, որ ներկա տոմարական հաշվով օգոստոսի 11-ն է համարվում, Աշտիշատում, Բյուրականյան շրջանում, ներկայումս Մուշը և Մշո Ս. Կարապետը, հավաքվում էին մեր նախնիք տոնական խրախճանքի համար: Աղավնիներ էին թռցնում, իրար վրա ջուր սրսկում, ինչպես նաև մարտական խաղեր էին կազմակերպում և գոհեր մատուցում ատրուշանների առաջ կամ չաստվածների գլուխներում: Այսպիսով՝ խաղ ու պարով, ու պաշտամունքային արարողություններով, Վարդավառի տոնն էին կատարում: Սուրբ Գրիգոր Լուսավորիչը՝ մեր Եկեղեցու հիմնադիր իմաստուն Հայրապետը, նկատելով, որ դեռևս 4-րդ դարի սկզբներին Հայաստանում հեթանոսական սույն սովորությունները գոյատևում են, որոշեց Վարդավառի տոնը կատարել Քրիստոսի Այլակերպության տոնի օրը, քրիստոնեական իմաստ ու բովանդակություն տալով Վարդավառի տոնին:

Այսօր հին սովորությունից մնացել է միայն ջուր սրսկելը: Հետագայում, երբ Մովսես Բ Եղիվարդեցի կաթողիկոսը 551 թ. հայոց նոր տոմարը կազմեց, այն ժամանակ Այլակերպության կամ Վարդավառի տոնը փոխադրեց Զատկի 14-րդ կիրակիին՝ և դարձրեց շարժական տոն՝ Զատկի հետ տեղաշարժվող:

Ահա թե ինչու մենք այսօր՝ հուլիսի 18-ին ենք տոնում Վարդավառի հիշատակը:

Սիրելի հավատացյալներ,

Ի՞նչ է քրիստոնեական իմաստը Վարդավառի տոնի:

Այդ տոնի քրիստոնեական իմաստը կապված է մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հրաշալի կյանքի դրվագներից մեկի հետ: Հիսուս Իր քարոզությանց երրորդ տարվա ընթացքում մի օր Իր աշակերտներից Պետրոսին և Հակոբոսին և նրա եղբորը՝ Հովհաննեսին Իր հետ բարձրացրեց մի սարի գլխին, նրանց հետ աղոթելու: Այդ պահին Հիսուս պայծա-

ռակերպվեց: Ավետարանն ասում է, թե նրա դեմքը փայլեց արեգակի նման, նրա հագուստները ձյունի նման սպիտակեցին և լուսավորվեցին: Աշակերտները կմայլված այդ լույսի հեղեղի առջև՝ ընկան գետին, չկարողանալով լույսի պայծառությամբ պարուրված իրենց Վարդապետի դեմքին նայել: Քիչ անց աչքերը հավիվ հավ բացելով, Պետրոսը մըրմընջալով ասաց հիացագին.

«Վարդապետ, լավ է, որ մենք այստեղ մընանք, երեք վրաններ լարենք, մեկը քեզ, մյուսը Մովսեսի և երրորդը՝ Եղիայի համար», որովհետև այդ պահին Հիսուսի կողքին հայտնվել էին Կտակարանի երանելի մարգարեներից Մովսեսը և Եղիան:

Հիսուսը, վերադարձի ճանապարհին, հանձնարարեց Իր աշակերտներին, որ ոչ ոքի չըհայտնեն այդ հրաշալի դեպքի մասին:

Սիրելի հավատացյալներ,

Ահավասիկ շուրջ քսան դարեր են անցել Հիսուսի Պայծառակերպության օրերից, երբ մեր Տերը Իր իսկական դեմքը, աստվածությունը բացահայտեց աշակերտներին և նրանց միջոցով մարդկությանը:

Այդ պայծառ դեմքը միշտ և հավիտյան բացվում է մեր առջև, եթե մենք հավատքով ու բարի գործերով կարողանանք մեր կյանքի օրերը վարել՝ օգտակար լինելով մեր նըմաններին և հասարակության:

Պայծառակերպության այս կիրակի օրը, ինձ համար սուրբ պարտք եմ համարում նյութից մի քիչ շեղվելով, անդրադառնալ Մայր Աթոռ իմ վերադարձին:

Շուրջ տասը տարիներ Անգլիայի Լոնդոն մայրաքաղաքում, ինչպես նաև դրանից առաջ շուրջ երեք տարիներ Շվեյցարիայի Ժնև քաղաքում ծառայելուց հետո, վերադարձել եմ Մայր Աթոռ՝ շարունակելու իմ հոգևոր ծառայությունը Սուրբ Էջմիածնում՝ Ամենայն Հայոց Հայրապետի անմիջական հովանավորության ներքև: Իմ պաշտոնավարության ավարտին, Լոնդոնում, ուր հայ համայնքը բաղկացած է շուրջ տասը հազար հոգուց, մայիս ամսվա սկզբին, ինձ պատվեց ողջերթի ճաշկերույթով: Այդ առթիվ փոխադարձ հարգալից և շնորհակալական խոսքեր ասվեցին: Ես իմ վերջին խորհուրդները տվեցի նրանց, որ հաստատ և համոզումով կապված մնան իրենց լույս հավատքին, իրենց ազգությանը, իրենց ավանդություններին, սիրեն իրենց ազգային մշակույթը և պատմությունը: Մենք բոլորս այդ պահին վերանորոգեցինք մեր ուխտը հավատարիմ մնալու նաև մեր Եկեղեցուն, հավատարիմ մնալու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, ինչպես նաև նրա սրբազնասուրբ Հայրապետին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Այսօր ես այդ նվիրական ուխտը մի անգամ ևս ներկայացնում եմ Աստուծո Սուրբ Սեղանի առջև և կոչ եմ անում, սիրելի հավատացյալներ, որ մեր ժողովրդի կավակները ի սկզբանե աշխարհի ցրված, անխուսափելիորեն ենթակա ձուլման, ինչպիսի պայմաններում էլ որ ապրեն, դժվարին թե հեշտ, միշտ կապված մնան իրենց Մայր Հայրենիքին, իրենց մայրենի լեզվին, իրենց սրբություններին ու Միածնաէջ Սուրբ Էջմիածնին:

Սիրելի հավատացյալներ,

Վարդավառի, Այլակերպության կամ Պայծառակերպության այս կիրակիին, մենք հավատում ենք, որ մեր Տերը իրար նկատմամբ թշնամանքով լցված մարդկանց ցույց կտա հաշտության լուսավոր ճանապարհը, որպեսզի մարդիկ կգաստանան ու անսան նրա մեծագույն կոչին՝ սիրելու միմյանց: Իբրև քրիստոնյաներ մեր իղձն է, որ դադարեն եղբայրասպան կռիվները աշխարհի բոլոր ծայրերում, և տիրի խաղաղությունը ու սերը մարդկանց միջև:

Թող մեր Տիրոջ՝ Հիսուսի Քրիստոսի Պայծառակերպության շնորհները միշտ հեղվեն առատորեն ամբողջ աշխարհի վրա, խաղաղություն, եղբայրություն և սեր բերելով մարդկությանը:

Թող լուսապայծառ այս կիրակին պայծառակերպի նաև մեր հոգիները և մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի դեմքից ճառագայթող հոգևոր լույսը թող վերափոխի մեր տխրությունը ուրախության, մեր վիշտը՝ մխիթարության, այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Դարերի խորքից, պատերազմների ու արհավիրքների միջից, քայլեց հայ ազգը, միշտ բարձր պահելով ազգային ոգին և միշտ լավատեսորեն տրամադրված դեպի ապագան: Քայլեց իր արդարացի հաղթանակներով, իր պատմության դառն ու ուրախ օրերով, իր մըշակույթով, մեսրոպաշունչ այբուբենով և իր մայրենի լեզվով: Լեզու, որը սուրբ է մեր ժողովրդի համար, քանի որ այն դարձավ հայ ազգի գոյատևման հիմնական պայմաններից մեկը և մեր օրերի համար Սովետական Հայաստանի պետական լեզու, իսկ Սովետական Միության կազմավորումով՝ նաև Սովետական Միության պետական լեզուներից մեկը:

Մեր լեզուն իրոք որ գնալով ավելի կարգացավ, մշակվեց ու հարստացավ և այսօր դարձել է արդեն պետական, վարչական, դիվանագիտական ոլորտների ճկուն, հարուստ ու մեր ժամանակի առավել կարգացած լեզուների մակարդակի վրա կանգնած ազգային լեզու:

Հայոց լեզվի ծագման ու պատմական կարգացման, արդի վիճակի ու հեռանկարների ամենատարբեր խնդիրների քննարկմանն էր նվիրված միջազգային հայերենագիտական գիտաժողովը, որը սեպտեմբերի 21-ին բացվեց Երևանում: Նրա աշխատանքներին մասնակցում էին Սովետական Միության գիտական կենտրոններից և արտասահմանյան տասը երկրներից հրավիրված ավելի քան 100 լեզվաբաններ, բանասերներ, հայագետներ:

Գիտաժողովը կազմակերպել էր Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը: Գիտաժողովին ներկայացվող գիտական աշխատանքների վեկուցումները լսվեցին գիտությունների ակադեմիայի նիստերի մեծ և փոքր դահլիճներում, Մատենադարանում, Կարտարապետների տանը: Գիտաժողովի լիագումար նիստը կայացավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի մեծ դահլիճում: Նիստը ներածական խոսքով բացեց հանրապետության գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտ Ա. Հովհաննիսյանը: Ակադեմիայի նախագահության անունից ողջունելով գիտաժողովի մասնակիցներին, նա մասնավորապես ընդգծեց, որ հանրապետության լեզվաբանները բազմակողմանի գիտական կապեր են պահպանում ինչպես Սովետական Միության, այնպես էլ արտասահմանի լեզվաբանական կենտրոնների և գիտնականների հետ: Ներկա միջազգային հայերենագիտական գիտաժողովի նպատակն է նպաստել այդ գիտական կապերի ամրապնդմանը, տարբեր երկրների լեզվաբաններին հնարավորություն տալ ծանոթանալու ոչ միայն իրենց անմիջական հետաքրքրությունների բնագավառում, այլև հայերենագիտության հարակից ասպարեզներում վերջին տարիներին, արդյունավետ համագործակցություն հաստատել հայերենի հետագա ուսումնասիրության ուղղությամբ:

Այնուհետև միջազգային գիտաժողովի մասնակիցներին ողջունեց Երևանի քաղաքագլուխ Մ. Մուրադյանը: Դարավոր մշակույթ ու գիտություն ունեցող հայ ժողովուրդն այսօր մեր մեծ Միության եղբայրական ընտանիքի հավասարավոր անդամն է, իսկ Երևանը՝ գիտության ու մշակույթի մի խոշոր կենտրոն, որը բազմաթիվ թելերով կապված է աշխարհի ու ժամանակի հետ: Առաջին անգամ չէ, որ Երևանը դառնում է միջազ-

գային գիտաժողովի անցկացման վայր, սակայն առաջին անգամ են այստեղ հավաքվում աշխարհի տարբեր երկրների հայերենի ուսումնասիրությամբ զբաղվող գիտնականներն ու մասնագետները: Եվ պատահական չէ, որ այն տեղի է ունենում Երևանում: Այստեղ են գործում այնպիսի գիտական օջախներ, ինչպիսիք են Հայկական ՍՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը, Երևանի պետական համալսարանը, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտը, Մատենադարանը:

Ակնառու են հայերենագիտության բնագավառում ձեռք բերված նվաճումները, նվաճումներ, որոնք ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան գիտության բազմաթիվ մշակների տքնաջան աշխատանքի արդյունքն է: Մեր երկրում հայերենագիտության հաջողություններն առանձնապես կապված են այնպիսի խոշոր հայագետ գիտնականների գործունեության հետ, ինչպիսիք են Հ. Արսեն Այտնյանը, Ստեփանոս Պալասանյանը, Հրաչյա Աճառյանը, Մանուկ Աբեղյանը, Գրիգոր Ղափանցյանը և շատ ուրիշներ: Այս երախտավոր հայագետների արժանավոր գործը այսօր հաջողությամբ շարունակում և առաջ են մղում Երևանում մի ամբողջ խումբ անվանի գիտնականներ, որոնք հանդես են գալիս բարձրարժեք աշխատություններով, ժամանակակից գիտության բարձր մակարդակով կազմակերպում ու ղեկավարում են հայերենագիտական մտքի առաջընթացը, պատրաստում նոր մասնագետ-հայագետներ:

Լիագումար նիստում լսվեցին մի շարք հաղորդումներ, որոնցով հանդես եկան անվանի լեզվաբան-հայերենագետներ:

Դասական հայերենի խուլ բաղաձայնների ծագման պատմության որոշ հարցեր արծարծեց պրոֆեսոր Ջ. Գրեպինի (Կլիվլենդ, ԱՄՆ): Քննելով շնչեղ խուլ բաղաձայններ պարունակող հայերեն արմատների մի ավանդական բառաշարք, գիտնականը նկատել է, որ հայերեն նյութը սերտ մերձավորություն ունի սանսկրիտի և հունարենի տվյալների հետ:

ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Մ. Բոգոլյուբովը (Լենինգրադ) խոսեց գրաբարի երկկազմ նախադասության մեջ անցողական բայի կատարյալի կառուցվածքի տիպաբանական կուգահեռների մասին: Վրացական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ա. Չիքոբավայի և դոցենտ Լ. Սանիկիձեի հաղորդումը նվիրված էր հնդեվրոպական հայերենում հին կովկասյան նստվածքի հարցերին;

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Գ. Ջահուկյանը խոսեց հայերենի ստուգաբանական կրկնակների մասին: Հայերենագիտության այլ հարցերի շուրջը հանդես եկան ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Թ. Գամկրելիձեն (Թբիլիսի), պրոֆեսորներ Ա. Պիսովիչը (Կրակով, Լեհաստան), Է. Հեմիը (Չիկագո, ԱՄՆ), Վ. Վինտերը (Քիլ, ԳՖՀ), Ֆ. Ֆեյդին (Փարիզ, Ֆրանսիա), Ջ. Բոլոնեզին (Միլան, Իտալիա) և ուրիշներ:

Հայոց լեզվի պատմության մասնաճյուղի նիստում «Դիոնիսիոս Արիոպագացու հայերեն թարգմանության տեքստի շուրջ» գիտական ելույթով հանդես եկավ Ռ. Թոմսոնը (Քեմբրիջ, ԱՄՆ): Քիչ են այն գրական երկերը, որոնք այնքան ազդեցություն են ունեցել թե՛ արևելյան, թե՛ արևմտյան քրիստոնեական մշակույթի վրա, որքան Դիոնիսիոս Արիոպագացուն վերագրվող աշխատությունների հավաքածուն, որի առաջին ամբողջական թարգմանությունը կատարել է Ստեփանոս Սյունեցին 8-րդ դարի սկզբում: Զեկուցողը մանրամասնորեն բնութագրեց կատարված թարգմանության բնորոշ գծերը, ցույց տվեց նրա ազդեցությունը հետագա հայ գիտական մտքի վրա:

Հայոց լեզվի պատմության մասնաճյուղում լսվեցին ուսումնասիրություններ, որոնք բավականին հետաքրքրություն էին ներկայացնում: Գ. Լաֆոնտեն (Լյուվեն, Բելգիա) խոսեց Գրիգոր Աստվածաբանի 24-րդ ճառի հայերեն թարգմանության (սուրբ Կիպրիանոսի մասին) «հունաբան» կոչված դպրոցին պատկանելու բանասիրական և լեզվաբանական կռվանների մասին: Դասական կամ «ոսկեդարյան» հայերենի հարցի շուրջը գիտական աշխատանքով հանդես եկավ Վ. Դ. Առաքելյանը (Երևան, ՍՍՀՄ), իսկ Մ. վան Էսբրուկի (Բրյուսել, Բելգիա) քննական աշխատությունն էր «Մշո Տոնական ժողովածուի կառուցվածքը» (Մատենադարան, № 7729):

Գիտաժողովին ներկայացված աշխատանքների հիմնական կորիզը կազմում էր հանրապետության հայոց լեզվի ուսումնասիրությամբ զբաղվող գիտաշխատողների աշխատությունները: Ուշադրության էին արժանի բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ. Բարսեղյանի «Արդի հայերենի ժամանակի քերականական կարգը և ժամանակային ձևերի տերմինափոխումը» զեկուցումը, Ն. Ա. Մկրտչյանի «Ակեդերեն երկրագործական տերմիններ հայերենում», Ն. Ա. Պառնասյանի «Ժամանակակից գրական հայերենի քերականական կառուցվածքի կարգացման ընթացքը», Ա. Ն. Մուրադյանի

«Հունաբան դպրոցի ժամանակագրության հարցը», Հ. Լ. Զաքարյանի «Երևանի արդի լեզվավիճակը և նրա հանրալեզվաբանական ուսումնասիրությունը» և ուրիշ զեկուցումներ:

Գիտաժողովին, արտասահմանյան գիտնականների հետ միասին, իրենց մասնակցությունը բերեցին նաև արտասահմանում գործող հայագիտական կենտրոններում աշխատող Սփյուռքի հայ գիտնականները: Ուշագրավ էին «Օտար բառեր հայերեն ձեռագրերի հիշատակարանների մեջ» (Ա. Գ. Սանջյան, Լոս Անջելես, ԱՄՆ), «Փիլիսոփայական տերմինների և հասկացությունների հայերեն միջնադարյան մի բառարան» (Ա. Տերյան, Բերիեն Սփրինգս, ԱՄՆ), ինչպես նաև Է. Սելյանի (Սոֆիա, Բուլղարիա), Լ. Զեքիյանի (Վենետիկ, Իտալիա), Ս. Գավասյանի (Քվեբեկ, Կանադա) ելույթները:

Երևանում անցկացվող միջազգային հայերենագիտական գիտաժողովը տևեց մինչև սեպտեմբերի 25-ը, այն կարևոր իրադարձություն էր հանրապետության գիտական կյանքում: Այն անշուշտ կնպաստի հայերենագիտության հետագա զարգացմանը, նոր հետաքրքրություն առաջ կբերի հայոց լեզվի և հայ մշակույթի նկատմամբ:



ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԸ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ

Հնդկաստանի Մալաբար Ուղղափառ Ասորական Եկեղեցու կաթողիկոս Նորին Սրբությունն Տ. Բասիլիոս Մար Թոմա Մատթեոս Ա-ի հրավերով և Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնությամբ Հնդկաստան մեկնեցին Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանը և Ավստրալիայի ու Նոր Զելանդիայի թեմի հայոց առաջնորդ Տ. Աղան եպիսկոպոս Բալիոզյանը: Նրանք մասնակցեցին Հնդիկ Մալաբար Եկեղեցու կաթողիկոսության վերահաստատման 70-րդ տարեդարձի տոնակատարությանը:

Այս կապակցությամբ, բացի Հայ Եկեղեցու ներկայացուցիչներից, վերոհիշյալ հանդիսություններին մասնակցում էին քույր Եկեղեցիների բազմաթիվ ներկայացուցիչներ:

Տոնակատարությունները տևեցին 12 օր՝ սեպտեմբերի 4-ից մինչև 15-ը ներառյալ: Այս օրերի ընթացքում պատգամավորները Մալաբար Եկեղեցու մի խումբ բարձրաստիճան հոգևորականների առաջնորդությամբ եղան մի շարք քաղաքներ՝ Դելի, Բոմբեյ, Քոչին, Քոթայամ, Թրիվանդրում, Մադրաս՝ ամենուրեք արժանանալով ժողովրդական ջերմ ու խանդավառ ընդունելության:

Հայկական եկեղեցիներ

Հուսիչ է, երբ հեռավոր երկրներում, Հայաստանի սահմաններից շատ հեռու, հայը տեսնում է հայկական եկեղեցիներ: Պատգամավորության շրջագայած քաղաքներից երկուսում կային հայկական եկեղեցիներ՝ Բոմբեյում Ս. Պետրոս, իսկ Մադրասում՝ Ս. Աստվածածին (կառուցված 1712 թվականին), որոնցում հայ պատվիրակները Հնդկաստանի հայոց թեմի հոգևոր հովիվ Տ. Սարգիս քահանա Թաշճյանի մասնակցությամբ մատուցեցին պատարագ՝ փոխանցելով Ամենայն Հայոց կաթողիկոսի և Ս. Էջմիածնի օրհնությունը և հայաստանցի ժողովրդի ողջույնը տեղի հայությանը:

Տոնակատարությունների ծրագիրը շատ էր ծանրաբեռնված: Ծրագիրն սկսվում էր առավոտյան ժամը 8-ից և տևում մինչև կեսգիշեր: Հայ Եկեղեցու պատգամավորությունը միշտ սիրով մասնակցում էր հոբելյանական բոլոր միջոցառումներին:

Պատգամավորությունները, ըստ ծրագրի, այցելեցին Հնդկաստանի տարբեր քաղաքների եկեղեցիներ՝ Քուրիչի, Թիրուվալլայի, Նիրանոմի Ս. Աստվածածին եկեղեցին, որտեղից, ըստ ավանդության, իր քարոզչությունն է սկսել Ս. Թովմաս առաքյալը, այնուհետև Պարիմալայի Ս. Գրիգոր եկեղեցին, որտեղ գտնվում է Արևելքի Ասորի Եկեղեցու 20-րդ դարի միակ սրբի՝ Պարիմալայի Մար Գրիգորիոսի գերեզմանը: Մար Գրիգորիոսը վախճանվել է 54 տարեկան հասակում (1848—1902):

Վերոհիշյալ եկեղեցիներում հայ պատգամավորները կարդացին քարոզներ և աղոթքներ:

Սեպտեմբերի 9-ին, հինգշաբթի.—Այսօր, ժամը 9.30-ին, «Սոֆիա Սանթրում» տեղի ունեցավ խորհրդակցություն աստվածաբանական, կրոնական և Եկեղեցիների միության վերաբերյալ մի շարք հարցերի շուրջ: Խորհրդակցությանը նախագահում էր Մալաբար Եկեղեցու միտրոպոլիտ Մար Գրիգորիոսը:

Սեպտեմբերի 10-ին, ուրբաթ.—Պատվիրակության մեկ մասը, ներառյալ հայ պատգամավորները, Մար Գրիգորիոս միտրոպոլիտի առաջնորդությամբ, այցելեց Քոթայամի Ս. Թովմաս առաքյալի անվան Հռոմեա-

կաթոլիկ աստվածաբանական ճեմարան: Այստեղ պատվիրակությունը ծանոթացավ ճեմարանի տարբեր բաժիններին, ուր սովորում են 340 ուսանողներ: Նույն ճեմարանի սրահում պատվիրակները հանդիպում ունեցան ուսանողության հետ:

Երեկոյան «Սոֆիա Սանթրում» պաշտոնական ընթրիք տրվեց Քոթայամի Մալաբար Եկեղեցու ճեմարանի սրահում, որի հիմնարկեքը կատարել էր Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը 1963 թվականին:

Նախքան պաշտոնական ընթրիքը Հայ Եկեղեցու պատվիրակությունը հանձնեց Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի նվերները Մատթեոս Ա կաթողիկոսին: Այս առթիվ Մալաբար Եկեղեցու հոգևոր պետը խնդրեց, որ իր եղբայրական ողջույնները փոխանցվեն Ամենայն Հայոց կաթողիկոսին:

Սեպտեմբերի 11-ին, շաբաթ.—Առավոտյան հայ պատվիրակությունը ներկա եղավ ս. պատարագին «Սոֆիա Սանթրի» եկեղեցում: Պատարագիչն էր Պողոս Մար Գրիգորիոս միտրոպոլիտը:

Նախաճաշից հետո «Սոֆիա Սանթրում» գումարվեց քոյր Եկեղեցիների ներկայացուցիչների խորհրդակցության երկրորդ նիստը, ուր քննարկվեցին՝

1. Աստվածաբանական-դավանաբանական հարցեր.
2. Կանոնական հարցեր.
3. Գործնական հարցեր:

Խորհրդակցության ավարտին շնորհակալական խոսքով հանդես եկավ Պողոս Մար Գրիգորիոս միտրոպոլիտը:

Կեսօրին Մար Մակարիոս միտրոպոլիտի հետ մի խումբ պատվիրակներ այցելեցին մի կուսանաց վանք, ապա նաև՝ վանականների մի վանք: Երկու վանքերում էլ Հայ Եկեղեցու ներկայացուցիչները հանդես եկան քարոզով, աղոթքով և շարականների երգեցողությամբ:

Սեպտեմբերի 12-ին, կիրակի.—Առավոտյան ժամը 7-ին Քոթայամի «Սոֆիա Սանթրի» եկեղեցում պատարագեց Մալաբար Եկեղեցու Ամերիկայի թեմի միտրոպոլիտ Մար Մակարիոս սրբազանը:

Ժամը 10-ին Վրաց Եկեղեցու կաթողիկոս Նորին Սրբություն Իլիա Բ-ը Քոթայամի Մայր եկեղեցու բացօթյա սրահում մատուցեց հանդիսավոր ժամերգություն: Ժամերգության ավարտին հրավիրվեցին նաև Հայ Եկեղեցու ներկայացուցիչները հայերեն հոգևոր երգեր երգելու:

Նույն օրը, ժամերգությունից հետո, Տ. Աղան եպս. Բալիոպյանը մեկնեց իր թեմ՝ Ավստրալիա:

Ժամը 14-ին քոյր Եկեղեցիների պատվիրակությունները եկեղեցական թափորով շարժվեցին դեպի «Նեհրու» ստադիոն:

Ժամը 15.30-ին «Նեհրու» ստադիոն ժամանեց Հնդկաստանի պրեզիդենտ Զիանի Զաիլ Սինգիը, որը, պատգամավորներին ողջունելուց հետո, բարձրացավ հանդիսությանց ամբիոն, երկու կաթողիկոսների հետ միասին: Հնչեց Հնդկաստանի պետական հիմնը, որին հաջորդեց Տերունական աղոթքը: Ծրագրի առաջին մասում ճառերով հանդես եկան Նորին Սրբություն Բասիլիոս Մար Թոմա Մատթեոս Ա կաթողիկոսը, դոկտ. Մար Գրիգորիոս միտրոպոլիտը, դոկտ. Պ. Կ. Ալեքսանդերը՝ պրեմիեր-մինիստրի գլխավոր քարտուղարը, պրն. Ք. Քարունաքարան՝ Քերալայի շեֆ մինիստրը և ուրիշներ:

Վերջում ճառով հանդես եկավ Հնդկաստանի պրեզիդենտը:

Շնորհակալական խոսքով հանդես եկավ նաև Տ. Մատթեոս Մար Կուրիլոս ընտրյալ կաթողիկոս միտրոպոլիտը:

Ծրագրի երկրորդ մասում խոսք առան հյուրերը, որոնք ընթերցեցին իրենց հոգևոր պետերի գրավոր ուղերձները: Հայ Եկեղեցուց Տ. Գևորգ եպիսկոպոսը ներկայացրեց Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի հետևյալ ուղերձը.

Սիրեցյալ Եղբայր Մեր ի Քրիստոս.

Անհուն ուրախությամբ ողջունում ենք Ձեր տոնական այս օրերը նվիրված Ձեր Սուրբ Եկեղեցու Կաթողիկոսության վերահաստատման 70-ամյակին:

Ձեր պատմական Եկեղեցին առաքելական դարձած Սուրբ Թոմասի հիշատակով նաև մեր օրերին քրիստոնեական հավատքի ամենաամուր սյուներից մեկն է հանդիսանում ամբողջ Արևելքում և, որը շնորհիվ Ձեր իմաստուն ղեկավարության և Սուրբ Աթոռիդ միաբանության ջանքերի, շարունակում է իր սուրբ առաքելությունը հետզհետե առավել փայլուն իրագործումներով Հնդկաստանում և ամբողջ աշխարհում:

Իրոք վաղուց ի վեր Ձեր Եկեղեցին իր անփոխարինելի ուրույն տեղն է գրավում այսօրվա քրիստոնյա աշխարհում և իր շատ գործոն մասնակցությունն է բերում քոյր Եկեղեցիների էկումենիկ հարաբերությանց զարգացման ճանապարհի վրա:

Այդ հարաբերությունները հատկապես ջերմ են ու սրտագին ձեր և մեր քոյր Եկեղեցիների միջև, մանավանդ Մեր գահակալության շրջանին, ահա ավելի քան քսանհինգ տարիներից ի վեր: Մենք միշտ հոգեկան մխիթարությամբ ենք հիշում Մեր այցելությունը Ձեր Աթոռին 1963 թվականին և Ձերդ Սրբու-

թյան ու Ձեր Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների այցելությունները Սուրբ Էջմիածին:

Ձեր և մեր Եկեղեցիները ու Մենք՝ անձամբ երկու Գահակալներս, եղբայրական սիրով միշտ միատեղ ենք աղոթում և գործում, ի խնդիր Քրիստոսի Ավետարանի լույսի հզոր ճառագայթումի և ի խնդիր միջազգային կյանքում խաղաղության ամրապնդման, մեր օրերի փոթորկահույզ այս աշխարհի վրա:

Այս պատմական պահին, երբ դուք և մենք ոգեկոչում ենք անմահ հիշատակը Սուրբ Թոմաս Առաքյալի և տոնախմբում ենք հիմնադրումը Ձեր Սուրբ Եկեղեցու, Մենք Ձեզ ենք հղում Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռից և Մեր Եկեղեցու ներկայացուցիչները Գերաշնորհ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանին, առաջնորդին Վրաստանի Հայոց թեմի և Գերաշնորհ Տ. Աղան եպիսկոպոս Բալիոզյանին, առաջնորդին Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի, որոնք Ձեզ պիտի բերեն Մեր և Առաքելական Եկեղեցու եղբայրական սիրո ողջույններն ու ամենաբարի մաղթանքները Ձեր արևշատության և Ձեր Եկեղեցու պայծառության համար:

Թող բարին Աստված հաստատուն և անսասան պահպանի Ձեր առաքելական Սուրբ Աթոռը և Ձերդ Սրբության շնորհի կենաց երկար տարիներ երջանիկ հովվապետությամբ:

Թող Տերը հավետ խաղաղության մեջ պահի ձեր հավատացյալ ժողովուրդը և մարդասեր Հնդկաստանը միշտ հարատև վերելքի և ծաղկման մեջ:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

25 օգոստոս 1982 թ.

Սեպտեմբերի 13-ին, երկուշաբթի.—Այսօր պատգամավորությունը մեքենաներով դուրս եկավ Քոթայամից և հասավ Քերալա նահանգի մայրաքաղաք Տրիվանդրում:

Հյուրերը տեղավորվեցին Տրիվանդրումի Մոսկովտ հյուրանոցը: Այնուհետև Մատթեոս Ա կաթողիկոսի առաջնորդությամբ նրանք այցելեցին Տրիվանդրումի թեմական առաջնորդարան: Այստեղ կաթողիկոսին և պատգամավորներին ընդունեց Տրիվանդրումի միտրոպոլիտ Գիվարգիզ Մար Դիոսկորուսը: Մատթեոս Ա կաթողիկոսը կատարեց նորակառույց սրահի օրհնության կարգը: Ճառերով հանդես եկան Մալաբար Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականները, տեղի հինգ մինիստրներ, պետական պատասխանատու անձինք և պատգամավորներ:

Հայ Եկեղեցու և Վեհափառ Հայրապետի անունից շնորհավորական խոսքով հանդես եկավ Տ. Գևորգ եպիսկոպոսը:

Սեպտեմբերի 14-ին, երեքշաբթի.—Ժամը 7-ին՝ ս. պատարագ Տրիվանդրումի Ս. Գևորգ Մայր եկեղեցում: Պատարագիչն էր Մատթեոս Ա կաթողիկոսը:

Ժամը 13-ին, ի պատիվ հյուրերի, Մոսկովտ հյուրանոցում պաշտոնական ճաշկերույթ տվեց Քերալայի շեֆ մինիստր պրն. Ք. Քարունաքարանը:

Նույն օրը, ժամը 18-ին, հյուրերը ժամանեցին Մադրաս, ուր և այցելեցին Ս. Թովմաս եկեղեցին: Եկեղեցու կենտրոնում գըտնըվում է Հնդկաստանի առաքյալ Ս. Թովմասի գետնահարկ գերեզմանը, որի շուրջ բոլոր պատգամավորները հերթով երգեցին հոգևոր երգեր:

Սեպտեմբերի 15-ին, չորեքշաբթի.—Ժամը 11.15-ին հյուրերը Մադրասից մեկնեցին Դելի: Նույն օրը, ժամը 24-ին, պատգամավորները Դելիի օդանավակայանից վերադարձան իրենց երկրները՝ անմոռանալի տպավորություններով:

Սույն տեղեկությունները քաղվել են Տ. Գևորգ և Տ. Աղան եպիսկոպոսների՝ Հայոց Հայրապետին ներկայացրած զեկուցագրերից՝ դեպի Հնդկաստան կատարած իրենց ուղևորության մասին:



ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Սույն թվականի մայիսի 18-ին, երեքշաբթի օրը, Ռումինիայի և Բուլղարիայի հայոց միացյալ թեմերի առաջնորդ Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանի նախաձեռնությամբ, Բուխարեստի առաջնորդարանի սրահում տեղի է ունենում ռումինահայ թեմի հոգևորականաց հավաքույթ:

Առավոտյան ժամը 10-ին, եկեղեցական արարողությունից հետո, հավաքույթն սկսում է իր աշխատանքները: Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանի նախագահությամբ ատենապետ է ընտրվում Տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանը, իսկ ատենադպիր՝ Տ. Ավետիս քհն. Մանդալյանը:

Հավաքույթին մասնակցում էին նաև Տ. Կոմիտաս աբդ. Հովնանյանը և Տ. Արամայիս աբդ. Շլուկյանը:

Հավաքույթի բացման խոսքով հանդես է գալիս առաջնորդ Տիրայր արքեպիսկոպոսը: Սրբազան հայրը նախ ողջունում է հավաքի մասնակիցներին և ապա հանգամանորեն ներկայացնում, թե ինչպիսին պետք է լինի բարձր գիտակցության տեր հայ հոգևորականի առաքելության ճանապարհը սփյուռքահայ գաղթօջախներում:

Հավաքի ընթացքում հոգևորականներից յուրաքանչյուրը մանրամասնորեն զեկուցում է մինչ այդ գաղութից ներս իր կատարած հովվական աշխատանքների, ինչպես նաև ապագա գործունեության ծրագրերի մասին:

Ժողովում որոշվում է նաև, որ հետայսու, երկու ամիսը մեկ, նմանօրինակ հոգևորականաց հավաքներ գումարվեն տարբեր քաղաքներում՝ նպատակ ունենալով մոտիկից ծանոթանալ յուրաքանչյուր հոգևորականի գործունեության հետ՝ հնարավոր եղբայրական օգնություն ցուցաբերելու և թերին ու պակասը լրացնելու ճանապարհներ որոնելու մտադրությամբ, որպեսզի առավել ծաղկի ռումինահայ ազգային-եկեղեցական ու մշակութային կյանքը:

Ժողովում որոշվում է, որ հաջորդ հավաքույթը գումարվի Կոնստանցա հայաշատ քաղաքում:

Հավաքույթից հետո տրվում է ճաշկերույթ, որի ընթացքում առաջնորդ Տիրայր սրբազանը իր գնահատանքին է արժանացնում ռումինահայ թեմում բոլոր հոգևորականների արդյունաշատ և ազգօգուտ գործունեությունը:

Այնուհետև ներկաները սրբազան հոր առաջարկությամբ բաժակ են բարձրացնում Նորին Սրբություն Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի կենաց արևշատության, առողջության և բոլոր բարի ծրագրերի իրականացման համար:

Հավաքույթն ավարտվում է սրբազան հոր բարի մաղթանքի խոսքով, «Պահպա-

Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանը իր թեմի հոգևորականներով

նիչ»-ով և խմբովին արտասանած «Հայր մեր»-ով:

Հոգևորականաց այս հավաքով մի նոր բովանդակալից էջ գրվեց ռումինահայ գաղութի պատմամատյանում:

*
* *

Առաջնորդ Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանի հրավերով, սույն թվականի ապրիլի 1-ին. Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Բուխարեստ է ժամանում Տ. Կոմիտաս աբդ. Հովնանյանը՝ ստանձնելու համար Կոնստանցա քաղաքի և նրա շրջակայքի հայ համայնքի հոգևոր հովվությունը:

Հույսով ենք, որ Կոմիտաս հայր սուրբը իր ծառայությամբ կիրականացնի ինչպես Հայոց Հայրապետի, այնպես էլ առաջնորդ սրբազանի ու կոնստանցահայ համայնքի բարի ակնկալություններն ու հույսերը:

ԱՐԱՄԱՅԻՍ ԱԲԵՂԱ ՇԼՈՒԿՅԱՆ



ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ
(1981—1982)

1982 թվականի հունիսի 6-ին, վարժարանի ամավերջի հանդիսության ժամանակ, Սրբոց Թարգմանչաց երկրորդական վարժարանի տեսուչ Տ. Կյուրեղ եպիսկոպոս Գաբիկյանը ներկայացրել է վարժարանի տարեկան տեղեկագիրը:

Ամավերջի հանդիսությանը նախագահել է Երուսաղեմի հայոց ամենապատիվ Տ. Եղիշե Սրբազան Պատրիարքը:

Այս տարի վարժարանը ունեցել է 180 երկսեռ աշակերտություն՝ բաժանված երկրորդական, նախակրթական և մանկապարտեզ բաժիններում:

Երկրորդական վարժարանում՝ 20 մանչ, 32 աղջիկ.

Նախակրթականում՝ 37 մանչ և 40 աղջիկ.

Մանկապարտեզում՝ 31 մանչ և 20 աղջիկ:

Տեսչական տեղեկագիրը սկզբից վերջով արձանագրում է, որ «սոտ տասնյակ աշակերտներ իրենց ընտանիքներուն հետ արտագաղթեցին դեպի Ամերիկա և Ավստրալիա: Կըսենք ասիկա ցավ ի սիրտ, որովհետև արտագաղթը դարձած է այլևս ցավալի երևույթ Երուսաղեմի հայ գաղութի համար:

Միջազգային նշանակությամբ այս քաղաքին մեջ պետք ունինք թվով և որակով կշիռք ունեցող համայնք մը»:

Այս ուսումնական տարում Ս. Թարգմանչաց վարժարանում մեծ նվիրումով ու սիրով պաշտոնավարել են 28 հայ և օտար երկսեռ ուսուցիչներ, որոնցից 5-ը եղել են Ս. Հակոբյանց միաբանության անդամներ:

Ուսումնական ծրագրում տեղ են գտել հայերեն (աշխարհաբար ու գրաբար), անգլերեն, արաբերեն, եբրայեցերեն լեզուների ուսուցումը, մաթեմատիկա, գիտություն, պատմություն, հայագիտական առարկաներ, հայ գրականություն, կրոն, քրիստոնեական, Հայ Եկեղեցու և ժողովրդի, Հին և Նոր Կտակարանների պատմություն: Ուսուցման համար գործնական հիմնական լեզուները եղել են հայերենն ու արաբերենը նախակրթարանի բաժնում, իսկ հայերենն ու անգլերենը՝ երկրորդական վարժարանում:

Այս տարի երկրորդական վարժարանից շրջանավարտ են եղել 16 աշակերտներ, որոնցից 6-ը շարունակելու են իրենց ուսումը բարձրագույն դպրոցներում:

Հայաստանի պետական համալսարանում սովորելու են երեք շրջանավարտներ, իսկ երկու ուսանողներ՝ Հայաստանի արհեստագործական տեխնիկումում:

Այժմ Հայաստանի պետական համալսարանում սովորում են Ս. Թարգմանչաց վարժարանի 14 շրջանավարտ աշակերտներ:

Ս. Թարգմանչաց երկրորդական վարժարանում լուրջ աշխատանք է տարվում աշակերտության հոգևոր դաստիարակության ուղղությամբ, կրոնական, եկեղեցագիտական մի շարք առարկաների սիստեմատիկ դասավանդությամբ:

Դպրոցի աշակերտությունը ամեն կիրակի և տոնական օրերին ներկա է լինում սուրբ պատարագներին, մասնակցում է եկեղեցական արարողություններին ու տաղավարի օրերին սուրբ Հաղորդություն է ստանում:

Վարժարանում բարձր մակարդակի վրա է գտնվում նաև ֆիզկուլտուրայի դասավանդությունը, «առողջ միտք առողջ մարմնի մեջ» դասական մտածումով:

Ուսումնա-դաստիարակչական ու հոգևոր-բարոյական տեղեկագրին կցվել է նաև վարժարանի «Տարեկան ելից ու մտից հաշվեկշիռը»:

Վարժարանի տեսչական տեղեկագիրը խորին շնորհակալություն և երախտագիտություն է հայտնում դպրոցի այն բարերարներին ու կազմակերպություններին, որոնք ի մասնավորի նվիրատվություն են կատարել վարժարանի առաջընթացի և ուսումնա-դաստիարակչական ծրագրերի բարվոք կատարման համար, «որոնք անսալով մեր սրտագին կոչերուն, իրենց վաստակեն բաժին մը հանեցին նաև մեր կրթական գործին, որոնք մինչև հիմա եղան ակնիվ աշխատակիցները այս համազգային, կրթական, հոգևոր, բարոյական ձեռնարկին, բերին իրենց սիրտն ու գուրգուրանքը հայ մանուկին, ապագա հայ սերունդներին և այսու հանդիսացան մեկ տարվան մեր նվաճումներուն ողնոսկրը»:

Տեսչական տեղեկագիրը վերջում «որդիական սեր, երկյուղած հարգանք ու երախտագիտություն» է հայտնում այս տարի ևս Ամենայն Հայոց Հայրապետին, «Որուն հայրական բարեհաճ կարգադրությամբ այս տարի ևս վարժարանս օգտվեցավ Լոնդոնի Աբգարյան Ավանդի խնամակալության 500 ստերլինի նվիրատվութենեն»:

Տեսչական տեղեկագիրը ջերմ շնորհակալություն է հայտնում արտասահմանյան հայերի հետ մշակութային կապի կազմակերպությանը, որը «ինչպես նախընթաց տարիներուն, այս տարի ևս, նվիրեց վարժարանին Հայոց լեզվի դասագրքեր, ազգային, գրական, մարդկական թերթեր, ընթերցանության գրքեր, և առիթը կուտա մեկի ամեն արձակուրդի առիթով ղրկել Երևան ուսուցիչ մը և երկու աշակերտներ հետևելու մանկավարժական դասընթացներուն»:

Տեսչական տեղեկագիրը փակվում է Երուսաղեմի ամենապատիվ Տ. Եղիշե Սրբազան Պատրիարքին ուղղված «ջերմ սիրո, հարգանքի ու շնորհակալության խոսքերով, իբրև պետը Ս. Հակոբյանց միաբանության և Հայ Երուսաղեմին, Սուրբ Թարգմանչաց վարժարանի հանդեպ Անոր ցույց տված հայրական գուրգուրանքին և հոգացության համար»:

Տեսչական տեղեկագիրը փակվում է Տ. Եղիշե Սրբազան Պատրիարքի, վարժարանի բոլոր հարգելի նվիրատուների և անձնվեր գործակիցների, ուսուցչական կազմի արևշատության և երջանկության սրտագին բարեմաղթություններով:

Արժան և իրավ:





ԵԶՆԻԿ ՔԱՀԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ՍԱՐԳԻՍ Վ.ՐԴ. ԿՈՒՆԴԻ «ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՂՈՒԿԱՍՈՒ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայ մեկնողական գրականության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Սարգիս Կունդի «Մեկնութիւն Ղուկասու» աշխատությունը: Այն համարվում է առաջին քաղածոշարք Ս. Գրական մեկնողական գործը հայ մատենագրության մեջ:

Հատկապես մեծ է այս աշխատության աղբյուրագիտական նշանակությունը: Շնորհիվ Սարգիս Կունդի այս երկի՝ լույս աշխարհ են գալիս մի շարք հին հայրերի կորած երկերի մեծ թվով հատվածներ:

Ա. Սարգիս Կունդը ապրել և ստեղծագործել է ԺԲ դարում: Եղել է Արևելյան Հայաստանի նշանավոր վարդապետներից մեկը: Իր ուսումը ստացել է ժամանակի նշանավոր կենտրոն Հաղբատի վանքում՝ աշակերտելով Հովհաննես Սարկավագ Վարդապետին: Ղուկասի Ավետարանի մեկնությունից բացի նույն ձևով պատրաստել է նաև Հովհաննու Ավետարանի[1] և Եսայու[2] մեկնությունները:

Բ. Սարգիս վրդ. Կունդի Ղուկասի Ավետարանի մեկնությունը ծաղկաքաղ է հիմնականում հինգ նշանավոր հայրերի՝ Եփրեմ Ասորու, Հովհան Ոսկեբերանի, Կյուրեղ Ալեքսանդրացու, Ստեփանոս Այռնեցու և Իգնատիոս Սալեռնցու գործերից:

1. Եփրեմ Ասորի.—հայտնի է Եփրեմ Ասորու «Մեկնութիւն Աւետարանի համաբարբառ» արժեքավոր աշխատությունը, որ պահպանվել է միայն հին հայերեն թարգմանությամբ[3]: Այս աշխատությունն էլ հենց եղել է Սարգիս Կունդի հինգ կարևոր աղբյուրներից մեկը: Կունդն օգտագործել է բառացի փոխառությամբ, անհրաժեշտության պարագային կատարելով միայն որոշ տեղափոխություններ նախադասությունների միջև, ինչպես ցույց են տալիս հետևյալ օրինակները.

---

[1] *Եղնիկ քհն. Պետրոսյան,* Ավետարանների միջնադարյան հայկական մեկնություններ, «Էջմիածին» ամսագիր, 1982, Ա, էջ 40:

[2] Լ. Տեր-Պետրոսյանը իր «Եսայի Մարգարեի Հայ մեկնությունների մատենագիտություն» աշխատության մեջ (անտիպ) ցույց է տվել, որ Երևանի Մատենադարանի №№ 6615, 1132 և 9480 ձեռագրերում պահպանված անխորագիր Եսայիի մեկնությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ Սարգիս Կունդի խմբագիր մեկնությունը:

[3] Սրբոյն Եփրեմի մատենագիտութիւնք, հատոր երկրորդ, «Մեկնութիւն համաբարբառ որ ըստ չորից աւետարանչաց և թարգմանութիւն առակաւոր բանից և աւետարանական ճառք» Վենետիկ, 1836 թ.:

Սարգիս Կունդ «Մեկնութիւն Ղուկասու»
Ձեռ. 2609 էջ 10ա—10բ

Եփ. Զի ի տաճարն եկն հրեշտակն, որպեսզի մի գտցեն հրեայքն պատճառ, որք օտարացուցանելն կամէին պառաքող հրեշտակին և զՏէր տանն՝ ի տաճարէն:

«Եւ երևեցաւ նմայ հրեշտակն Տեառն»

Եփ. Զաքարիա եկն առ հրեշտակն, զի յայտ արասցէ, թէ կրսեր է ծնունդ նորայ քան զհրշտակն, իսկ առ Մարիամ ինքն հրշտակն եկն, զի յայտ լիցի, թէ ծնունդ նորայ տէր է հրեշտակաց: Ոչ եկն հրեշտակն առ Եղիսաբէթ, զի Զաքարիա էր ծնող Յովաննու և ոչ առ Յովսէփ եկն Գաբրիէլ, զի Մարիամ միայն էր ծնող անդրանկանն: Ոչ եկն հրշտակն առ Եղիսաբէթ, զի այր գոյր նորա, այլ եկն առ Մարիամ, զի// լցցէ անուամբ իւրով զտեղի խորհրդոց առն:

Եփրեմ Ասորի «Մեկնութիւն Աւետարանի» էջ 10

Զաքարիա չոգաւ առ հրեշտակն, զի յայտ լիցի եթէ կրտսեր է ծնունդ նորա քան զհրեշտակն: Իսկ առ Մարիամ ինքն հրեշտակն եկն. զի յայտ արասցէ՝ թէ ծնունդ նորա տէր է հրեշտակին: Եւ զի ի տաճարն եկն հրեշտակն, զի մի գտցեն պատճառք այնոցիկ՝ որք ստութեանն կամին պատճառք գտանել: Ոչ եկն հրեշտակն առ Եղիշաբէթ, զի Զաքարիա էր ծնիչ Յովհաննու: Եւ ոչ առ Յովսէփ եկն Գաբրիէլ, զի Մարիամ միայն էր ծնիչ անդրանկանն: Ոչ եկն Գաբրիէլ առ Եղիշաբէթ, զի այր էր նորա. այլ եկն առ Մարիամ, զի լցցէ անուամբ իւրով զտեղի խորհրդոյ առն:

---

2. Հովհան Ոսկեբերան.—Սուիդասը[4] իր բառարանում վկայում է, որ Հովհան Ոսկեբերանը գրել է ճառային մեկնություններ չորս Ավետարանների վերաբերյալ: Պահպանվել են սակայն միայն Մատթեոսի և Հովհաննեսի մեկնությունները: Quasten-ը[4] կարծում է, որ Սուիդասը սխալված պետք է լինի այս հարցում: Մինչ Սարգիս Կունդի «Մեկնութիւն Ղուկասու» աշխատության մեջ պահպանվել են բազմաթիվ հատվածներ Հովհան Ոսկեբերանի անունով, որոնց ուսումնասիրությունը կարող է շատ արժեքավոր նորություններ բերել այս հարցում:

Այստեղ կարելի է նշել նաև, որ հին հայերեն թարգմանությամբ պահպանվել են նաև Ոսկեբերանի մի շարք ճառեր Ղուկասի Ավետարանի մեկնությունից[5]:

3. Կյուրեղ Ալեքսանդրացի.—Կյուրեղ Ալեքսանդրացու «Ղուկասի Աւետարանի մեկնութիւն»-ից հունարեն բնագրով պահպանվել է 3 ճառ[6] և բազմաթիվ հատվածներ[7] Ղուկասի Ավետարանի հունարեն խմբագիր մեկնություններում: Պահպանվել են նաև 156 ճառեր ասորերեն լեզվով[8]: Կյուրեղ Ալեքսանդրացու Ղուկասի Ավետարանի այս կամ այն հատվածների վերաբերյալ ճառեր պահպանվել են նաև հայերեն լեզվով[9]: Համեմատելով Սարգիս Կունդի աշխատության մեջ տեղ գտած Կյուրեղի հատվածները հունարենով պահպանված հատվածների հետ՝ նկատեցինք, որ որոշ հատվածներ բառացի համընկնում են միմյանց, ինչպես օրինակ.

Ետես Զփրկութիւնն զոր պատրաստեալոց էր:

Կր. Քանզի յառաջագոյն պատրաստեալ էր խորհուրդն Քրիստոսի ի սկզբանէ աշխարհի և յայտնեցաւ յետին ժամանակս յաւիտենիս այսորիկ: (էջ 51բ)

և կամ՝

Զտէր Աստուած զԵմանուէլն ոչ արար սուրբ Իսրայէլ և ոչ կամեցաւ յուսալ ի նա: Գլորեցան զքարի հարեալ վասն անհաւատութեանն և բազումք կանգնեցան որք ընկալան զհաւատս նորայ: (էջ 54ա)

J.-P. MIGNE, PG 72

Προητοίμαστο γὰρ τὸ χριστοῦ μυστήριον καὶ πρὸ αὐτῆς τοῦ κόσμου καταβολῆς. πεφανέρωται δὲ ἐν ἐσχάτοις τοῦ αἰῶνος καιροῖς. (σ. 504)

Οὐκοῦν ἐπειδήπερ Κύριον καὶ Θεόν ὄντα τὸν Ἐμμανουὴλ οὐχ ἡγίασεν ὁ Ἰσραήλ, οὔτε μὴν ἠθέλησεν ἐπ' αὐτῷ πεποιθέναι, περιπταίσας ὡς

---

[4] *J. Quasten*, Patrology, vol. III, Utrecht/Antwerp—1966, p. 436—437.

[5] Տես Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր №№ 605, 942, 1712, 1791, 2783, 3772 և այլն:

[6] PG 77, p. 1009, 1039—1050.

[7] PG 72, p. 475—950; *J. Sickenberger*, Fragmente der Homilien des Cyrill von Alexandrien zum Lukasevangelium (TU 34,1), Leipzig, 1909, 63—108.

[8] *J. Quasten*, անդ, էջ 124.

[9] Տես Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր №№ 866, 3782, 6228, 7489 և այլն:

λίθῳ διά τήν ἀπιστίαν, συνετρίβη καί πέπτωκεν. Ἀνέστησαν δέ πολλοί, τουτέστιν οἱ τήν εἰς αὐτόν πίστιν παραδεξάμενοι. (σ. 505).

Սարգիս Կունդի պահպանած Կյուրեղի հատվածների վգալի մի թիվ, սակայն, չեն պահպանվել հունարենով, և հետևաբար այս հատվածների ուսումնասիրությունը կարող է արժեքավոր նյութ տալ Կյուրեղի «Ղուկասու Մեկնութիւն» աշխատության վերականգնման գործում:

4. Ստեփանոս Սյունեցի.—Ստ. Սյունեցու անունով մեզ է հասել մի արժեքավոր աշխատություն «Ստեփանոսի հայոց Իմաստասիրի և Սիւնեաց եպիսկոպոսի կարճառատ մեկնութիւն չորից աւետարանչացն Քրիստոսի Աստուծոյ» վերնագրով:

Այս երկը մեզ է հասել միայն մեկ՝ Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի № 5551 ձեռագրով (էջ 224ա—291բ), գրված 1155 թվականին:

Մեկնության ջուրջ 3/4-ը վերաբերում է Մատթեոս Ավետարանին: Մարկոսի Ավետարանից մեկնված է միայն մեկ համար (ԺԴ 53): Հովհաննեսի Ավետարանի մեկնությունը կազմում է աշխատության ծավալի 1/6-ը, իսկ Ղուկասի մեկնությունը՝ 1/12-ը:

Այս ձեռագրում Ղուկասի Ավետարանից մեկնված են հետևյալ հատվածները. Ա 1, 2, 17ա—բ, 63, Բ 35ա—բ, 40, Գ 23, Ը 1, 16, 18, 20, 22, Թ 51, 57—58, 59, 61—62, Ժ 1, 4, 10—11, 22, 30, 38—40, ԺԱ 5—6, ԺԲ 24, 35, 37, 38, 42, 48—50, 52, 53, ԺԴ 16, 17—21, 23, 26, ԺԵ 3, 8, 11—32, ԺԶ 1, 19, 26, ԺԷ 20, 34, ԺԸ 1, 2, ԺԹ 9, 12, 13, 30, 33, 35, 37, 42, Ի 9, ԻԱ 21, ԻԲ 16, 27, 28, 48, ԻԴ 13:

Մինչ Սարգիս Կունդի «Մեկնութիւն Ղուկասու» աշխատության մեջ Ստեփանոս Սյունեցու հատվածները շատ ավելի առատ են: Այսպես՝ Ա—Գ գլուխների «Մեկնութիւն չորից Աւետարանացն»-ի 7 համարների դիմաց Սարգիս Կունդի մոտ կա ավելի քան 50 համարի մեկնություն:

Համեմատելով «Մեկնութիւն չորից Աւետարանացն»-ի հատվածները Սարգիս Կունդի պահպանած հատվածների հետ՝ հաստատում ենք, որ առաջին աշխատության հատվածները հիմնականում համապատասխանում են երկրորդ աշխատության համապատասխան հատվածների հետ, ինչպես օրինակ.

Սարգիս Կունդ
Ձեռ. 2609 էջ 3բ—4ա

Քանզի բազումք յուժարեցին վերստին գրել (Ա 1):
Ստ. Որպէս ի հնումն զմարգարէութիւնքն յուժարէին գրել՝ ոմանք ճշմարտապէս՝ որպէս Եսայիաս և Երեմիաս, և ոմանք ստութեամբ՝ որպէս Անանիաս՝ որդի Ազարիայ,// նոյնպէս և ի նորումս բազումք գրեցին Աւետարանս՝ ոմանք ստուգութեամբ և ոմանք ստութեամբ:

Ստեփանոս Սյունեցի
Ձեռ. 5551, էջ 292բ

Քանզի բազումք ձեռնարկեցին գրել պատմութիւն (Ա 1):
Որպես ի հնումն մարգարեութիւն խոստանային գրել՝ ոմանք ճշմարտապես և ոմանք սրտութեամբ՝ որպես Անանիաս որդի Ազարին, նոյնպես և ի նորումս բազումք գրեցին Աւետարան՝ ոմանք ստութեամբ և ոմանք ըստուգութեամբ:

Եվ կամ՝

Սարգիս Կունդ
էջ 12բ—13ա

Հոգով զօրութեամբ Եղիայի (Ա 17):
Ստ. Եղիայ վերացաւ, Յովաննէս յառաջընթաց Քրիստոսի ջնորհիւ և զօրութեամբ Եղիայի, այսինքն նոյնպէս Հոգով Սրբով, ոչ հոգովն Եղիայի, զի մի կարծիցես, եթէ փոփոխումն է հոգոյ մարդկան ի միմեանց մարմին՝ որպէս ոմանք ցնորեցան ասել:

Ստեփանոս Սյունեցի
էջ 292բ

Եւ նա եկեսցէ առաջի նորայ հոգիով և զօրութեամբ Եղիայի (Ա 17):
Եղիաս վերացեալ՝ Յովհաննէս՝ յառաջընթաց Տեառնն ջնորհիւ և զօրութեամբ Եղիայի, այսինքն նոյնպես հոգիով սրբով և ոչ հոգւովն Եղիայի, զի մի կարծիցես եթէ փոփոխումն է հոգիոց մարդկան ի միմեանց մարմինս, որպէս ոմանք ցնորեցան ասել:

«Մեկնութիւն չորից Աւետարանացն»-ի մեջ կան սակայն հատվածներ, որոնք չկան Սարգիս Կունդի մոտ, ինչպես օրինակ Ա 63, 80 համարների մեկնությունը:

Որոշ հատվածներում էլ այս կամ այն աշխատության մեջ նույն հատվածում կան նախադասություններ ավել կամ պակաս: Կան նաև այլ տարբերություններ:

Ստ. Սյունեցու Ս. Գրական մեկնողական երկերը չափազանց մեծ արժեք ունեն հայ մեկնողական մտքի զարգացման և այդ զարգացման պատմության ուսումնասիրության համար: Բովանդակության տեսակետից մեծ արժեք ներկայացնելուց բացի Ստեփանոս Սյունեցու մեկնողական երկերը ունեն այն կարևորությունը, որ հանդիսանում են հայ մեկնողական գրականության մեջ հասած առաջին երկերից, որոնց վրա էլ հետագայում զգալիորեն հենվել է հայ մեկնողական միտքը: Այս նկատառումով էլ չափազանց մեծ արժեք են ներկայացնում Սարգիս Կունդի պահպանած Ստեփանոս Սյունեցու՝ Ղուկասի Ավետարանի մեկնության հատվածները:

5. Իգնատիոս Սկեռնցի.—Սարգիս Կունդի «Ղուկասու Մեկնութիւն» աշխատության հինգերորդ կարևոր աղբյուրը Իգնատիոս վրդ. Սկեռնցու «Մեկնութիւն Սրբոյ Աւետարանին որ ըստ Ղուկասու»[10] աշխատությունն է՝ գրված շուրջ 1130 թ.:

Այս աղբյուրը օգտագործելիս նույնպես Սարգիս Կունդը կատարել է որոշ տեղափոխություններ նախադասությունների միջև կամ որոշ կեղջումներ: Սակայն ինչ որ քաղել է և կետեղել իր աշխատության մեջ՝ վերցրել է բառացի փոխառությամբ, ինչպես օրինակ ցույց է տալիս հետևյալ համեմատությունը.

Սարգիս Կունդ **էջ 20բ**	**Իգնատիոս Սկեռնցի** **էջ 38 տող 6—12**
Զիարդ լինիցի ինձ այդ, զի զայր ոչ գիտեմ. Գիտէր զօրէնս բնութեան կանանց զի առանց առն ոչ ոք ծնաւ և որ առ նայ ասացաւ բանք, կարի մեծասքանչ էր բարձրութեամբ քան զբնութիւն մարդկան: Կամէր ստուգել զօրինակ ծննդեանն:	**Որպէս լինիցի ինձ այդ. քանզի զայր ոչ գիտեմ:** Գիտէր զօրէնս բնութեան կանանցն. զի առանց առն ոչ ոք ծնաւ. և որ առ նա ասացան բանք՝ կարի մեծամեծք և զարմանալիք: Վասն որոյ կամի ստուգել զօրինակ ծննդեանն եթէ ըստ հասարակաց սովորութեան իցէ, թէ այլ ինչ հրաշալի ծնունդ արտաքոյ բնական կրից:

Բացի վերոհիշյալ հեղինակներից՝ Սարգիս վրդ. Կունդը ծաղկաքաղ է արել նաև «սուղ ինչ յԱստուածաբանէն Գրիգորէ առեալ ի վկայութիւն, և յԵպիփանէ Կիպրացւոյ, և ի Նարեկացւոյ Գրիգոր վարդապետէ, և յիմաստնոյն Սարկաւագ վարդապետէ ուրեք ուրեք մտառեալ: Է ինչ որ ի Մովսիսէ Քերթողէ և ի Մամբրէէ վերծանողէ և ի Թէոփիլոսէ Ոսկեբերանի աշակերտէ»[11]:

Գ. Սարգիս Կունդի «Մեկնութիւն Ղուկասու» աշխատությունը իր ամբողջական կառուցվածքով այսօր մեզ հայտնի է չորս ձեռագրերով.

ա.—Երևանի Մատենադարանի № 2609 ձեռագիր, էջ 2ա—317բ:

Այս ձեռագիրը Սարգիս Կունդի «Մեկնութիւն Ղուկասու» աշխատության մեջ հասած լավագույն օրինակն է: Այն ընդօրինակվել է 1184 թ. Բջնիում՝ Թադեոս վարդապետի պատվերով և Մարտիրոս երեցի ձեռքով: Ձեռագրում աշխատությունը անվերնագիր է: Այն սկսվում է մի շատ արժեքավոր Պատճառով, ուր խոսվում է Ղուկաս Ավետարանչի և Ղուկասի Ավետարանի գրության հետ կապված հարցերի մասին:

Ավետարանի բուն մեկնությունը սկսվում է էջ 3բ-ից և ավարտվում էջ 317բ-ում:

Սկ. Քանզի բազումք յուժարեցին վերըստին գրել: —

Ստ. Որպէս ի հնումն զմարգարէութիւնքն յուժարէին գրել. ոմանք ճշմարտապէս՝ որպէս Եսայիաս և Երեմիաս, և ոմանք ստութեամբ՝ որպէս Անանիաս՝ որդի Ազարիայ, // նոյնպէս և ի նորումս բազումք գրեցին աւետարանս՝ ոմանք ստուգութեամբ և ոմանք ստութեամբ:

Կղ. Ղուկաս զպատճառս իւրոյ մատենագրութեանն յայտ առնէ՝ որպէս աւանդեցին մեզ ականատեսքն... (էջ 3բ—4ա)

Վերջ. Եփ. ....

[11] Տես Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր № 5591, էջ 240ա;

[10] *Իգնատիոս վարդապետ,* Մեկնութիւն սրբոյ Աւետարանին որ ըստ Ղուկասու, Կ. Պոլիս, 1824;

Եւ մնացորդք եղբարց նորայ դարձցին առ Տէր:

Այնոքիկ որք երկմտեցին վասն նորայ յասելն իւրեանց ցՔրիստոս, թէ կայդ առնես, յայտնես կանձն քո աշխարհի կի դարձան նոքայ յեկեղեցի Աստուծոյ յետ համբառնալոյ նորայ առ հայր. աշակերտեցան նոքայ ի վարդապետութեան նորայ և եղեն խորհրդակից Քրիստոսի. որում փառք յաւիտեանս. ամէն (էջ 317բ)

Ձեռագիրն ունի գրչի կողմից գրված երկու արժեքավոր հիշատակարաններ[12] (էջ 242բ—243ա և 318ա—318բ), ըստ որոնց ձեռագիրը գրվել է «ի վեցհարիւրերորդի երեսներորդի յերրորդի (1184)» Թադեոս վարդապետի պատվերով «ի ձեռն Մարտիրոսի անարհեստ և փցուն գրչի և յետին ամենայն երիցանց, ի դղեկ քաղաքէ Բրջնոյ, որ է մերձ ի Դվին քաղաք Հայոց յարևելս կոյս»:

Առաջին հիշատակարանում երկի աշխատասիրողի մասին ասված է. «ողորմեայ ի քում մեծի գալստեանդ սուրբ վարդապ/ետ/ին Ստեփ, որ Կոչի Կունդ, և որք ընդ նմայ աշխատեալք են ի գործս բարիոք գրոցս այսմիկ»:

Այստեղ տարօրինակ է **Ստեփ** անվանաձևը փոխանակ Սարգիսի: Այս աշխատությամբ զբաղվողները հիմնականում այն համարում են վրիպակ:

բ.—Երևանի Մատենադարանի № 5591 ձեռագիր, էջ 23ա—239բ:

Ձեռագիրը ընդօրինակվել է 1427 թ. Մեծոփա վանքում Թովմա վարդապետ Մեծոփեցու և նրա երկու աշակերտներ Թովմայի և Հովհաննեսի կողմից: Բավական հետաքրքիր է այս ձեռագրի գրության պատմությունը:

Թովմա վրդ. Մեծոփեցին, իր եղբայրակիցների խնդրանքով, սկսում է դասավանդել Ղուկասի Ավետարանի մեկնությունը՝ Իգնատիոս վրդ. Սկեռնցու համանուն գործի հիման վրա: Իր ձեռքի տակ եղած օրինակը սակայն ուներ որոշ տեխնիկական թերություններ. Ավետարանի տեքստը դուրս էր հանված աշխատությունից, որը և զգալիորեն դժվարացնում էր դասավանդությունը:

Այդ օրերին, Քրիստոսի Ծննդյան տոնակատարությունների առիթով, Մեծոփեցին գնում է մի գյուղ՝ Ասպիսակ կամ Ասպընսակ, և եկեղեցի մտնելով, մոխրակույտի միջից գտնում է այս աշխատության մի հնագույն օրինակ, ընդօրինակված Սարգիս Կունդի ձեռագիր առաջին օրինակից 1197 թ. «ի դուռն» Եղիվարդի Ս. Թադեոս եկեղեցու՝ Սարգիս Կունդի աշակերտներ Դավթի և Ներսեսի ձեռքով:

Ինչպես վկայում է Թովմա Մեծոփեցին ձեռագրի հիշատակարանում, այդ գտնված ձեռագիրը պակասավոր էր սկզբից՝ մինչև «յամսեանն վեցերորդի» հատվածի մեկնությունը, իսկ պահպանված մասը որոշ տեղերում ջնջված էր և շատ տեղերում էլ «յոյժ սխալ»: Հետևաբար Թովմա վրդ. Մեծոփեցին արտագրության ժամանակ կատարում է զգալի սրբագրական աշխատանք:

Այս ձեռագրում աշխատությունը ունի հետևյալ վերնագիրը. «Մեկնութիւն Սուրբ Աւետարանին Ղուկասու՝ հաւաքեալ Սրբոյն Սարգսի հայոց վարդապետի և անյաղթ հռետորի, ի սրբոց Աստուածաբան վարդապետացն մերոց՝ Եփրեմի, Ոսկէբերանի, Կիւրղի, Ստեփանոսի, Իգնատիոսի և այլոց վարդապետացն մերոց, զոր տեսանես յառաջիկայդ: Աւգնեա Հոգի սուրբ Աստուած ճշմարիտ». (Էջ 23ա):

Այնուհետև Մեծոփեցին պակասավոր մասը լրացրել է Իգնատիոս Սկեռնցու «Ղուկասի Մեկնության» համապատասխան հատվածով (էջ 23ա—32ա):

Սարգիս Կունդի աշխատությունը սկսվում է էջ 32ա և ավարտվում 239բ էջով, հետևյալ գրությամբ. «Կատարեցաւ մեկնութիւն աւետարանին Ղուկասու. որ էր հեթանոս՝ յայգէ ասորոց, զոր ոմանք յեկեղեցւոյ վարդապետաց՝ ի յունաց ասեն: Քաղաքաւ՝ Անտիոքացի: Աշակերտ գոլով Գալիանոս բժշկապետի: Հաւատացեալ մերձ խաչելութեան Քրիստոսի և յետոյ աշակերտեալ առաքելոյն Պօղոսի: Հաւաքեալ ձեռամբ Սարգիս վարժապետի, որ էր յայգէս հայոց, ի գաւառէ Արարադեան, յոյժ աշխատութեամբ և երկասէր վաստակօք՝ ի լուսաւորութիւն մտաց մանկանց եկեղեցւոյ և ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս ամէն»:

Այնուհետև դրված է Սարգիս Կունդի հիշատակարանը[13], ուր հեղինակը, ի միջի այլոց, ասում է. «Ես տրուայս և անպիտանս ի ժառանգաւորս Եկեղեցւոյ Սարգիս վարդապետ՝ մականուն Կունտ կոչեցեալ, ի գաւառէ Արայրատեան, բաղում ջանիւ աշխատեցայ ....և բաղում աշխատութեամբ ի մին տեղիք հաւաքեցի, ի ՈՒՁ թուականութեանս հայկազեանս սեռի, ի դառն և ի չար ժամանակիս, որ չփոթէր կաթողիկոսութեան իշխանութիւն սրբոյն Գրիգորի: Զի անկեալ մեռաւ տէր Գրիգոր կաթողիկոսն ի դղեկէն կոպիտառու, և այժմ ոչ ոք է յաջորդեալ կաթող նորին»:

[12] Տե՛ս *Գարեգին Ա կաթողիկոս*, Ցիշատակարանք Ձեռագրաց, հտ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 499—502:

[13] Անդ. էջ 605—608:

Վերջում կա Թովմա Մեծոփեցու արժեքավոր հիշատակարանը[14] (էջ 240ա—241ա):

Համեմատելով Թովմա Մեծոփեցու ձեռագիրը 1184 թ. ձեռագրի հետ՝ նկատում ենք, որ Մեծոփեցու ձեռագրում կան մի շարք հատվածներ այլ խորագրով, որոնք բացակայում են 1184 թ. ձեռագրում: Շատ հավանական է, որ դրանք Մեծոփեցու ձեռքով են ներմուծված: Այդ մասին է խոսում նաև այն, որ դրանք նման են Տաթևյան մեկնության ոճին, օր. էջ 32բ, 46—47 և այլն:

գ.—Երուսաղեմի № 149 ձեռագիրը[15], էջ 1—320:

Ընդօրինակված է 1821 թ. Զմյուռնիայում Տեր Հովհաննես քահանայի ձեռքով՝ Թովմա Մեծոփեցու վերոհիշյալ ձեռագրից: Այս ձեռագրում կանց են առնված լուսանցքներում նշված անունները:

դ.—Վենետիկի Մխիթարյան Միաբանության № հին թիվ 740 ձեռագիրը[16], էջ 2բ—178բ. (ըստ Բ. Սարգսյանի ցուցակի № 219, ճառընտիր Ի):

Ընդօրինակված է 1835 թ. Վ. Հ. Եփրեմ Սեթյանի և Վ. Հ. Եսայի Մկրաքյանի ձեռքով, Երևանի № 2609 ձեռագրից:

Հետևաբար կարելի է ասել, որ Սարգիս Կունդի «Մեկնութիւն Ղուկասու» աշխատությունը մեզ է հասել հիմնականում երկու օրինակով.

ա. Երևանի Մատենադարանի № 2609 ձեռագրով՝ գրված 1184 թ.

բ. Երևանի Մատենադարանի № 5591՝ գրված 1427 թ.՝ 1197 թ. ընդօրինակությունից:

Այս աշխատությունից պահպանվել են նաև հատվածներ կանոնական ձեռագրերում, ինչպես օրինակ՝ Երևանի Մատենադարանի 6615, էջ 103ա—110բ, Երուսաղեմի 1250 (թղ. 269ա—275, Ղուկ. ԻԴ 41—55 համարների մեկնությունը, թղ. 204ա—210բ, Ղուկ. Բ 21—41 համարների մեկնությունը):

Հ. Ղ. Ալիշանը «Հայապատում» աշխատության մեջ[17] հրատարակել է մի քանի հիշատակարաններ Սարգիս Կունդի՝ Ղուկասու մեկնության ձեռագրերի վերաբերյալ, որոնք ենթադրել են տալիս, որ նա իր ձեռքի տակ ունեցել է այդ աշխատության երկու օրինակ, մեկը գրված 1184 թ. Կեչառիսում, Անդէի ձեռքով, իսկ մյուսը՝ 1178 (կամ 1198 թ.), Թեղենիսում՝ Թադեոսի և Վարդանի ձեռքով: Այսօր, սակայն, մեզ հայտնի չեն այդ ձեռագրերը:

Դ.—Համաձայն Թովմա Մեծոփեցու ձեռագրում Սարգիս Կունդի անունով պահպանված հիշատակարանի՝ աշխատությունը գրվել է «Ի ՈՒԽԶ թուականութեանս հայկազեան սեռի» (=1197 թ.): Մինչդեռ 1184 թ. կատարվել են այս գործի միմյանցից անկախ երկու տարբեր ընդօրինակություններ, մեկը Բրջնիում՝ Մարտիրոս գրչի ձեռքով, իսկ մյուսը Կեչառիսում՝ Անդե գրչի ձեռքով: Այս հարցի կապակցությամբ չափազանց հետաքրքրական է նաև հ. Ղ. Ալիշանի հրատարակած հիշատակարաններից առաջինը[18], ըստ որի «Սարգիս մականուն և ոչ իր յիմաստս իմաստնոց և տգէտս ի գիտնականաց»-ը «ի թուականիս նորոյ ԿԳ (63)» ընտանում է այս աշխատությունը «ի խրատ և ի վարժումն»: Այստեղ հիշված նոր թվականը Սարկավագադիր թվականն է, հաստատված 1083 թ.: Հետևաբար նոր թվականի ԿԳ-ն համապատասխանում է Փրկչի 1146 թվականին:

Ինչպե՞ս հասկանալ թվականների այս անհամապատասխանությունը:

Այս հարցով առաջին անգամ լրջորեն զբաղվել է հ. Ն. Ակինյանը իր «Սարգիս վ. Կունդ եւ իր մեկնողական երկասիրութիւնները[19]» հոդվածում:

Հ. Ն. Ակինյանը նախ ընթերցողների ուշադրությունն է հրավիրում 1-ին հիշատակարանի վրա, գրված «ի թուականիս նորոյ ԿԳ (=1146—7)», ուր Սարգիս վրդ. Կունդը իր մասին խոսելիս ասում է՝ «մոռացայ գծերութիւն և գտկարութիւն մտացս»:

Այնուհետև հ. Ն. Ակինյանը խոսում է մի այլ հիշատակարանի մասին, գրված Հաղբատի վանքում՝ Ս. Բարսեղ Կեսարացու ճառերի ընդօրինակության առթիվ՝ «ի թուականիս Հայոց նորումս ՁԹ (1172), իսկ հոռոմոց ՅՂԳ, ձեռամբ Սարգսի, նուաստ գրչի և տխմարի և յետին աշակերտի եկեղեցւոյ Ուրբոյ ուխտիս»: Հ. Ն. Ակինյանը այս Սարգսին նույնացնում է Սարգիս վրդ. Կունդի հետ և եզրակացնում. «Եթէ Սարգիս ԿԳ

---

[14] Տե՛ս *Լ. Ս. Խաչիկյան*, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, Երևան, 1955, էջ 339—340:

[15] Մայր Ցուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմեց Նորայր եպս. Պողարեան, հտ. Ա, Երուսաղէմ, 1966 թ.:

[16] *Հ. Բարսեղ Սարգիսյան*, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց, հտ. Բ, էջ 293:

[17] *Հ. Ղևոնդ Ալիշան*, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 370—371, 399:

[18] Անդ, էջ 370—371:

[19] *Հ. Ն. Ակինյան*, Սարգիս վ. Կունդ և իր մեկնողական երկասիրությունները, «Սիոն», 1940, էջ 16—22, 64—67, 94—99:

(1146) թուին ինքզինք ծեր կը նկատէր, ՁԹ թուին անիկա կառուած պէտք է ըլլար: Կ'առաջարկեմ ԿԳ կարդալ ՂԳ, այն է 1083 +93=1176, այս տարւոյն «Համառօտեցի» կ'նէ Սարգիս Յովհաննու Մեկնութիւնս «եւ ստացայ կսա ինձ ի խրատ և ի վայելումն»:

Նոյն միտքը կը կրկնէ Սարգիս երկրորդ յիշատակարանին մէջ. «բաւում աշխատութեամբ ի մին տեղի հաւաքեցի ի ՈՒՁ թուականութեանս հայկազեանս սեռի... զի անկեալ մեռաւ տէր Գրիգոր կաթողիկոսն ի դղէկէն Կոպիտառու. եւ այժմ ոչ ոք է յաջորդեալ զաթոռ նորին»: Երկու թուականներու մէջ 21 տարիներու ոստում կայ, յայտնապէս խանգարուած է սկզբնագիրը: Ինձ կը թուի թէ խանգարումը տեղի ունեցած է երկու ուրոյն գրիչներէ զանազան ժամանակներու մէջ:

Եկեալմուտ է Գրիգոր կաթողիկոսի մահուան յիշատակութիւնը ... յաւելուածս կ'ակնարկէ 1194—1195 տարւոյն դէպքերը: Գրիգոր կաթողիկոս քարաւէժ եղաւ 1194-ին.... գոյժը Հայաստան հասած ըլլալու է ՈՒԴ (1195) թուին:

Այս ըմբռմամբ ՈՒՁ (1197) թուականը հարկ է երկրորդ օրինակողի մը վերագրել, որ «ՈՒԴ» վերածած է ՈՒՁ-ի, որ ընթացիկ տարին էր նոր գրչութեան, առանց անդրադառնալու, թէ Կաթողիկոսի մահուան շուրջ պատմուածները անհամապատասխան են 1197 տարւոյն: Սարգիս Կոնտ ինչպէս թ. 1ա և 5 յիշատակարաններու մէջ, նաև այս տեղ գործածած ըլլալու էր Սարկաւագադիր թուականը, ըստ այնմ կ'առաջարկեմ կարդալ՝ «ի թուականիս Հայոց նորումս ՂԳ ի հայրապետութեան տեառն Գրիգորի և աղերս»:

Այսպէս կը ստանանք դարձեալ 1176 տարին: Այս թուականէն երկու տարի ետքը՝ «ի թուականիս հայոց ՈՒԷ (1178) ի սուրբ յանապատիս Թեղենիս» կ'օրինակեն Մեկնութիւններս Թադէոս և Վարդան գրիչները»[20]:

Հ. Ն. Ակինյանը շատ ճիշտ է նկատել, որ խնդրո առարկա աշխատությունը չէր կարող գրված լինել 1197 թ. և որ Գրիգոր կաթողիկոսի մահվան հիշատակությունը հավելված է հեղինակի հիշատակարանի մեջ[21]: Բնավ համոզիչ չի թվում սակայն այն ձևը, որով հ. Ն. Ակինյանը փորձում է որոշել Սարգիս վրդ. Կունդի Ղուկասու Մեկնության գրության թվականը: Նա իր եզրակացության է հասնում հիմնականում երկու հանգրվանով.

ա. Սարգիս վրդ. Կունդին առանց որևէ

...և գտի տառս կենդանիս Տեառն և զմեկնութիւնս Սրբոց, վերանելոյն Եփրեմի և Տեառն Կիւրղի Աղեքսանդրացւոյ և Տեառն Ստեփաննոսի Սիւնեաց վերադիտողի, և Տէր Իգնատիոսի, և ուր ոչ այսոցիկ՝ Յոհաննու Ոսկեբերանի, և սուղ ինչ վկայութիւն յԱստուածաբանէ և յԵպիփանէ, և ի Նարեկացի վարդապետէն Գրիգորէ, և յիմաստուն հռետորէն Սարկաւագէ:

բաղում ջանիւ աշխատեցայ՝ զտառս կենդանիս գտանել զանուշահոտ և զծաղկաւարդ զկայծառացեալ և զարփիահրաշ զարեգակնածաւալ և զլուսափայլ մեկնութիւն սրբոց վարդապետացն, ... զերանելոյն Եփրեմի, զՏեառն Կիւրղի Աղեքսանդրացւոյ և Տեառն Ստեփաննոսի Սիւնեաց վերադիտողի, զՏէր Իգնատիոսի, և ուր ոչ այսոցիկ՝ Յովհաննու Ոսկեբերանի, և սուղ ինչ յԱստուածաբանէն Գրիգորէ առեալ ի վկայութիւն, և յԵպիփանէ Կիպրացւոյ և ի Նարեկացւոյ Գրիգոր վարդապետէ և յիմաստնոյն Սարկաւագ վարդապետէ, ուրեք ուրեք մտառեալ. *է ինչ որ ի Մովսիսէ Քերթողէ և ի Մամբրէէ Վերծանողէ և ի Թէոփիլոսէ Ոսկեբերանի աշակերտէ...*

Իսկ երկրորդ և ամենակարևոր հավելումը հայտնի է դառնում հետևյալ համեմատությունից.

բ. ...նմանեալ *մաղուի* անօսր թռչնոյ արձակել ըզթեւս ի լերինս բարձանց և ի հովիտս ծաղկանց. այլ թէպէտ և ունի յօժարութիւն ...

... իբր *իմաստուն մեղու* թռչելով ի մարգս և ի լերինս և ի ծաղկաւէտ բուրաստանս ժողովելով զպիտանիս ի նոցանէ առի յօգուտ և ի շահ փրկութեան մարդկան:

Սարգիս վրդ. Կունդը իրեն երբեք չէր կարող կոչել «իմաստուն» ածականով: Առաջին հիշատակարանը արդեն ցույց է տալիս:

---

[20] Անդ, էջ 18—19:

[21] Ի միջի այլոց այդ միակ հավելումը չէ, կան նաև այլ հավելումներ, որոնցից նշում ենք հետևյալ երկուսը.

հիմքի նույնացնելով 1172 թ. Ս. Բարսեղ Կեսարացու ճառերը ընդօրինակող Սարգսի «նուաստ գրչի և ախմարի և յետին աշակերտի եկեղեցւոյ սրբոյ ուխտիս» հետ, և գրելով, որ 1146 թ. ինքն իրեն ծեր նկատած Սարգիս վրդ. Կունդը 1172 թ. վառամած պետք է լիներ, ԿԳ թվականը սրբագրում է ՂԳ-ով և ստանում 1176 թ.:

բ. Քանի որ Գրիգոր կաթողիկոսի մահվան թվականը հավելված է և 1197 թ. չի համընկնում Գրիգոր Քարավեժի մահվան թվականի հետ, և քանի որ մի շարք այլ հիշատակարաններում Սարգիս վրդ. Կունդը օգտագործել է Սարկավագադիր թվականը, հետևաբար այստեղ ևս նա պետք է օգտագործեր այն՝ գրելով. «ի Ռուականիս Հայոց նորումս ՂԳ ի հայրապետութեան Տեառն Գրիգորի»: Եվ այսպես հ. Ն. Ակինյանը դարձյալ ստանում է 1176 թ.:

Կարծում ենք, սակայն, որ ոչ մի անպատեհություն չկա ԿԳ թվականը համարելու վավերական: Արդեն ժամանակագրականորեն այն համընկնում է Սարգիս վրդ. Կունդի Հովհաննես Սարկավագին աշակերտ լինելու իրողությանը: Հովհաննես Սարկավագը ծաղկել է ԺԱ դ. վերջին և ԺԲ դարի ընկզբին: Սարգիս վրդ. Կունդը եթե աշակերտել է Հովհաննես Սարկավագին նույնիսկ ԺԲ դարի սկզբին, ապա 1146 թ. նա արդեն 50-ն անց մի անձնավորություն պետք է լիներ:

Վ. Մ. Պետրոսյանցը, չանդրադառնալով, որ 1198 թվականին Թեղենիսում գրված մեկնությունը ընդօրինակություն է ավելի հին ձեռագրից, թյուրիմացության մեջ է ընկել Սարգիս վրդ. Կունդի հետ կապված մի շարք հարցերում[22]:

---

[22] *Վ. Մ. Պետրոսյանց*—Թեղենյաց վանքը իբրև մշակութային կենտրոն, Պատմա-բանասիրական հանդես, 1982, № 1. էջ 123—124:





ՍՈՒՐԲ ԲԱՐԹՈՂԻՄԵՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Սուրբ Բարթողիմեոս և Սուրբ Թադեոս առաքյալները հանդիսանում են Հայ Եկեղեցու «առաջին լուսավորիչները»[1]:

Հայաստան աշխարհի առաջին լուսավորիչ Սուրբ Թադեոսի կենսագրության, առաքելության և վկայության մասին տես «Էջմիածին» ամսագիր, 1982, № Է, էջ 32:

Սուրբ Բարթողիմեոս առաքյալը Հիսուսի տասներկու առաքյալներից մեկն էր[2]:

Նա Գալիլիայի Կանա քաղաքից էր և կոչվում էր Նաթանայել: Իսկ Բարթողիմեոս նշանակում է «որդի Թալոմեի»:

Հովհաննես ավետարանիչը Նաթանայելի կամ հետագա Սուրբ Բարթողիմեոսի առաքելության և քարոզության կոչվելու հետաքրքիր մի դեպքի մասին, մանրամասնորեն պատմում է իր ավետարանում (Ա 43—51):

Երբ մի անգամ Հիսուսը գտնվում էր դարձյալ Գալիլիայի լճի ափին, քարոզում և համալրում էր իր առաքյալների թիվը, Բեթսայիդացի Փիլիպպոս առաքյալը, հանդիպում է իր նախածանոթ Նաթանայելին և նրան ավետում հետևյալը. «Ում մասին որ Մովսեսը օրենքի մեջ և մյուս մարգարեները գրել են, գտանք նրան՝ Հիսուսին՝ Հովսեփի որդուն՝ Նազարեթից... արի և տես»[3]:

Ապա Փիլիպպոսն ու Նաթանայելը գալիս են Հիսուսի մոտ: Երբ Հիսուսը հեռվից տեսնում է Նաթանայելին, իր շուրջ հավաքված առաքյալներին ասում է. «Ահա արդարև մի իսրայելացի որի մեջ նենգություն չկա»: Նաթանայելը շփոթված բայց և անսալով իր սրտի վկայության և երկնային ներշնչումին, ասում է. «Ռաբբի՛, դու ես Աստծու որդին, դո՛ւ ես Իսրայելի թագավորը»:

Եկեղեցու հայրերը նշում են, որ Սուրբ Բարթողիմեոսը իր առաքելակից ընկերների մեջ առաջինն էր, որ այսպես դավանում էր Հիսուսի աստվածությունը: Նա իր այդ վկայության համար էլ կոչվում է **նախադավան առաքյալ:**

Հիսուսը առաջին իսկ ակնարկից Նաթանայելի մեջ ճանաչում է ճշմարիտ ու ազնիվ մի նոր աշակերտի, վստահելի բարոյական արժանիքներով օժտված մի անձնավորության, որը Ավետարանի փրկագործ ու տիեզերական պատգամն ու ավետիսը քարոզելու էր հեռավոր աշխարհներում, վանական ապգերի մեջ, և հանուն իր նոր հավատի և համոզմունքների իր նահատակությամբ փառավոր ապացույցը տալու էր քրիստոնեական նոր կրոնի երկնատուր ու հավիտենական ճշմարտության:

Ըստ վարքագրական տվյալների Սուրբ Բարթողիմեոս առաքյալը նախ քարոզում էր Հնդկաց աշխարհում, ապա Մարաց, Պարթեվաց, Ասորիքի և Գերմանիկեցիների աշխարհներում[4]: Ապա նա Ատրպատականի վրայով քարոզելու համար մտնում է «ի վիճակ Թադէի[5]», սկզբում Սյունյաց, ապա Գողթնյաց գավառները և այնուհետև հասնում է Հայաստանի Արտաշատ մայրաքաղաք: Այստեղ Սուրբ Բարթողիմեոսը հանդիպում է Սուրբ Թադեոս առաքյալին: Հայ Եկեղեցու երկու լուսավորիչները մի գիշեր միասին օթևանում են Արտաշատի բլրի վրա և ի հիշատակ իրենց այս պատմական հանդիպման հաջորդ առավոտ կանգնեցնում են «սնջան սրբոյ խաչի», որը Հայ Եկեղեցու պատմության մեջ կոչվում է «Օթեաց խաչ», այսինքն՝ Սուրբ խաչի հովանու և պաշտպանության ներքո օթևանելու կամ գիշերելու վայր:

---

[1] Օրացույց, Մայր Աթոռի, 1982, նոյեմբեր 28:

[2] Մատթ. Ժ 3, Մարկ. Գ 13, Ղուկ. Զ 13:

[3] Հովհ. Ա 43—51:

[4] «Սուփերք հայկականք», ԺԹ, էջ 6—22:

[5] Նույնը, էջ 24:

Սույն հանդիպումից հետո, երկու առաքյալները հրաժեշտ են առնում միմյանցից և յուրաքանչյուրը գնում է «ըստ հրամանի Հոգւոյ Սրբոյ» իրեն համար սահմանված առաքելական վիճակը: Սուրբ Թադեոսը մեկնում է Վասպուրական, Արտապ, իսկ Սուրբ Բարթողիմեոսը՝ Հեր և Զարեհավան գավառները, ապա Անձևացյաց աշխարհը և վերջում՝ Աղբակ: Այստեղ, Հայոց Սանատրուկ թագավորի քույրը՝ իշխանուհի Ոգուհին, որը խորապես ազդվել էր իր թագավոր եղբոր միամորիկ Սանդուխտ կույսի նահատակությունից, «ի բաց մերկացեալ զփառս աշխարհի, եկն առ Սուրբ Բարթողիմեոս ի ծածուկ, և լուեալ ի նմանդ զբանն կենաց՝ հաւատաց ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, ինքն և իւրքն ամենայն»[6]:

Հայոց Սանատրուկ արքան լսում է այդ մասին, լցվում «մեծաւ ցասմամբ իբրև զգազան կատաղեալ արիւնարբու» և հրամայում է իր Տերենտիոս հպարապետին, շտապ գալ-ձերբակալել և՛ Սուրբ Բարթողիմեոս առաքյալին, և՛ իր իշխանուհի Ոգուհի քրոջ, և բերել թագավորական ատյան: Հպարապետը ևս, սակայն, հավատում է Քրիստոսին, խորապես ազդված Սուրբ Բարթողիմեոսի ավետարանի քարոզից: Հայոց թագավորը, կորցնելուց հետո իր աղջկան, կորցնում է նաև իր քրոջն ու իր հավատարիմ Տերենտիոս հպարապետին: Թագավորական ատյանը մահվան է դատապարտում հին աստվածները ուրացողներին: Սուրբ Բարթողիմեոսը նահատակվում է մի ամբողջ ժամ, մասնավոր կերպով պատրաստված և «կարիճ» կոչված փշոտ գավազանների տանջալի հարվածների ներքո, իսկ Ոգուհի իշխանուհին, Տերենտիոս հպարապետը, Իսրայել իշխանը, Զարմանդուխտ իշխանուհին և 2.000 հավատացյալներ սրամահ են լինում[7]:

Սանատրուկ թագավորի հրամանով նախապես նահատակվում էր նաև Սուրբ Թադեոսը Սանդուխտ կույսի հետ: 60 թվականին նահատակվում է Սուրբ Բարթողիմեոս առաքյալը: Ս. Թադեոսի գերեզմանը որպես ուխտատեղի գտնվում է Արտապում (Մակու, Արևմտյան Հայաստան), իսկ Սուրբ Բարթողիմեոսի գերեզմանը՝ Աղբակում (Վասպուրական): «Հայոց Եկեղեցին կրնա իր առաջին երկու լուսավորիչներովը պարծենալ և անոնց նվիրական գերեզմանները ցույց տալ իբր իր առաքելական սկզբնավորության անհակառակելի փաստեր, ինչպես Հռոմ ալ Պետրոսի և Պողոսի գերեզմաններով կփառաբանե իր առաքելական սկզբնավորյալը»[8]:

Հայ Եկեղեցու պատմության սկզբնավորության հետ կապված են նաև Հայաստանի առաջին երկու լուսավորիչների առաքելության և քարոզության հետ կապված նվիրական սրբություններ, «որոնք հայերուն կողմե ամենայն երկյուղածությամբ հարգված են»[9]:

Թադեոս առաքյալը իր հետ Հայաստան է բերում սուրբ Գեղարդը, որով հռոմեացի զինվորը խոցել էր Քրիստոսի կողը, երբ նա խաչի վրա էր, ստուգելու համար հրամանը[10] և ապա Հիսուսի անձեռագործ դաստառակը կամ թաշկինակը[11]:

Իսկ Բարթողիմեոս առաքյալը ըստ ավանդության իր հետ Հայաստան է բերել Սուրբ Աստվածածնի կամ «Տիրամոր պատկերը», «նկարեալ ի փայտն»:

Հայ Եկեղեցին տարին երկու անգամ կատարում է մեր առաջին լուսավորիչ առաքյալների տոնը, առաջինը «Երկոտասան առաքելոցն Քրիստոսի» տոնին, հուլիսին, և երկրորդը՝ Ս. Թադեոս և Ս. Բարթողիմեոս առաքյալների տոնին, դեկտեմբերին: «Տօն սրբոց առաքելոցն և առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարթողիմէոսի» տոնին[12]:

Քրիստոսի տասներկու առաքյալների հիշատակին նվիրված շարականում, Սուրբ Թադեոս և Սուրբ Բարթողիմեոս առաքյալների քարոզությունը Հայաստանում բնութագրվում է հետևյալ պատկերավոր ու տպավորիչ ձևով. **«Հայրատունկ այգւոյն հրեղէն պարիսպ և բարձր աշտարակք, ոսկեղէն բաժակք և ծիր մատռուակք, Հայաստանեայց հայր հոգևոր Բարթողիմէոս և Թադէոս,** բարեխօս լերուք առ Տէր վասն անձանց մերոց»[13]:

Սուրբ Բարթողիմեոս առաքյալի վկայությունը, այժմ, աշխարհաբար թարգմանությամբ ներկայացվում է «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանը: Վկայաբանության աշխարհաբար թարգմանությունը կատարվել է «Սոփերք հայկականք» ԺԹ գրքից, որը հրատարակվել է 1854 թվականին Վենետիկում:

Ա. ՀԱՏԻՏՅԱՆ

---

[6] Նույնը, էջ 26:

[7] Նույնը, էջ 28—30:

[8] *Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան*, Ազգապատում, Ա հատոր, մասն Բ, Բեյրութ, էջ 29:

[9] Նույնը, էջ 33—34:

[10] Հովհ. ԺԹ 31—37:

[11] Տես այս մասին «Էջմիածին», 1982, № Է, էջ 33:

[12] Օրացոյց, Մայր Աթոռի, 1982:

[13] Ձայնքաղ Շարական, Էջմիածին, 1888, էջ 78—79:

ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ
ՍՈՒՐԲ ԲԱՐԹՈՂԻՄԵՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ

Սուրբ առաքյալների գլխավորները, Հիսուսի տասներկու աշակերտները, Երուսաղեմում, Վերնատան մեջ, երբ իրենց վրա իջնում է Սուրբ Հոգին, նրանցից յուրաքանչյուրին վիճակ է ելնում, կանական ազգերի մեջ հրեղեն լեզուների տարբերությամբ քարոզելու:. Նույն պահին նրանք ընդունում են երիցության ձեռնադրություն, մեղքերի թողություն տալու և կապելու, հրաշքներ և կորնավոր գործեր, կատարելու, հիվանդություններ բուժելու, ախտավորների ցավերը ամոքելու, սատանայի հալածանքները արգելելու՝ իշխանություն, մեղքերից և ապականության ծառայությունից ազատելու մարդկանց՝ Աստծու Որդու փառքի համար, ընթանալու նրա պատվիրաններով և արժանի լինելու խոստացված պարգևների բարիքներին:

Սուրբ Հոգու առաջնորդությամբ առաքյալները այնուհետև գնում են տարբեր ազգերի մեջ, նրանց բոլորին հասկանալի լեզվով քարոզելու կյանքի խոսքը, լուսավորելու նրանց սուրբ ավանդի վերստին ծննդյամբ, Սուրբ Հոգու ղեկավարության արարչագործ կորությամբ:

Երանելի Բարթողիմեոս առաքյալն էլ գնում է քարոզության, իրեն առաքելական ընտրության վիճակված երկրներում: Նա Հիսուսի տասներկու առաքյալներից մեկն էր:

Նա իր քարոզության սկզբում Թովմաս առաքյալի հետ նախ գնում է Հնդկաց աշխարհի սահմանների մոտ գտնվող Եդեմ կոչված քաղաքը, անցնում է քաղաքի հրապարակով, հասնում և նստում է մի աղբյուրի մոտ, որի միջոցով կատարվում էին կախարդություններ, խաբեպատիր մոլար պաշտամունքի դիվային կրաբանություններով և ստահոդ գուշակություններով: Կռապաշտները աղբյուրներին դիմում էին որպես մի չաստվածի, և հանուն աղբյուրի բակում նվերներ և կոհեր էին մատուցվում: Աղբյուրի անունով անհեթեթ առասպելներ էին պատմվում այն մասին, իբր թե աղբյուրը ինքնիշխան կորությամբ է կատարում ջրերի բխումը և այն սնուցող ու աճեցնող ուժով է լցնում բույսերը, տնկիները, սերմերը, տեսակ-տեսակ ծառերն ու ծաղիկները՝ իրենց համով ու հոտով: Աղբյուրի անունն էլ կոչում էին Նեղոսի Դուստրը:

Լինում էին օրեր, երբ քաղաքի բակմությունը գալիս էր աղբյուրին կոհեր մատուցելու, ոսկի, արծաթ, գոհարաքարեր, թանկագին ու պատվական զգեստներ նվիրելու: Իսկ ջրերի ոգիները, իրենց ձայնը բարձրացնելով, դիմում էին աղբյուրի ակին, նրա պղպջաձև ջուրը մղում էին առաջ և իրենց գոռում-գոչումներով և ջրի ալիքների ահեղ աղմուկի մեջ ահ ու սարսափ էին գցում լսողների և տեսնողների վրա: Այնուհետև, ջրի ոգիները այդ ահ ու սարսափի ժամանակ, բարձրաձայն և ուժգին գոռում-գոչումներով աղբյուրի անունն էին կանչում, որպեսզի այն իրենց օգնության հասնի և սպասում էին աղբյուրից նվերներ ստանալ: Իսկ սուրբ առաքյալը ապշած և իր մտքում մեծ տրտմությամբ և ցավով լցված՝ զարմանում էր նրանց մոլորության, կեղտոտ գործերի, կուր աշխատանքների, անտղղա ընթացքի, կատարված անօգուտ ծախսերի, փուչ ու ավելորդ աղաղակների վրա, որովհետև հավաքված ու խելքահան եղած տղամարդիկ ու կանայք, ճիճուների և գազրատեսիլ կեռունների նման տղմուտ այդ վայրում թավալվում և պարում էին, խըլըրտում, դիվական խաբեությամբ և կեղծավորությամբ, ի պատիվ աղբյուրի:

Այդ պահին երանելի առաքյալը ժողովրդի միջով անցնում է, և դիմում՝ դեպի աղբյուրը և հանելով իր երկար վերարկուն, ձեռքը պլսրկում է դեպի աղբյուրի ջուրն և հանուն

Հիսուս Քրիստոսի բարձր ձայնով ասում. «Այս ջուրը ցամաքելով թող ցամաքի և այսուհետև երբեք չունենա խոնավության ուժ»: Նույն պահին ցամաքում է հարուստ ջրի վտակը, դառնում՝ ապառաժ վեմ, իսկ նրա որոտման ձայնն ու փայլի պատճառով լույսի կերպարանք ստացած քամին, կորչում է և դադարում: Այս բանը տեսնելիս ջրի դևերը աղաղակ են բարձրացնում, ճչում, մեծ վայնասուն և ողբեր են արձակում, հառաչում են և ասում. «Ո՜վ Նազովրեցի Հիսուս, մինչև ե՞րբ տագնապի մեջ պահելու ես մեզ և թույլ չես տալու որ մնանք այս ջրերի անդունդներում, որոնք մեր բնակության վայրերն են, քո խաչով մեզ հալածական դարձրիր ողջ երկրի վրա և այժմ էլ քո աշակերտների միջոցով նեղում, հալածում ու չարչարում ես մեզ, վտանգի և կորստյան մատնում, ժամանակից առաջ, որ գալու է մեր վրա»:

Սուրբ առաքյալը սաստելով դևերին, ասում է. «Ո՛վ պիղծ, դժնի և մարդատյաց թշնամիներդ արդարության և ուսուցիչներդ մոլորության. ահա սաստում և հանդիմանում եմ ձեզ, հանուն մեր Տեր Հիսուս Քրիստոսի, որ հետայսու չկարողանաք մնալ այդ վայրերում»: Իսկույն նեթ դևերը կորստյան են մատնվում, իսպառ բնաջնջվում են ու չքվում՝ ինչպես մոմը, որը հալվում և սպառվում է կրակի դիմաց. այնպես էլ դևերը կորստյան մատնվելով իսպառ բնաջնջվում են: Այս տեսնելով՝ խռնված ամբոխը ուժգին սարսափով համակված ընկնում է սուրբ առաքյալի ոտքերի առաջ, աղբյուրի հետ կատարված և իր տեսած հզոր ու սքանչելի գործերի պատճառով: Ապա ամբոխի միջից շատերը ցրվելով մոտակա վայրերը, պատմում են տեղի ունեցած իրադարձությունների և հրաշալի գործերի մասին, որոնք կատարվել էին սուրբ առաքյալի միջոցով: Խուռներամ բազմությունը բոլոր կողմերից գալիս է տեսնելու կատարված սքանչիքները, որովհետև բազում անգամներ, նրանք դիմել էին և օգնություն խնդրել աղբյուրից, սակայն այժմ այն մեկ ակնթարթում ցամաքել էր, և սպառվել էին նրա հորդահոս ջրերը:

Բայց, քաղաքի բնակչությունը նեղվում էր ծարավից: Նրանք քարեր վերցրած ցանկանում էին գցել առաքյալի վրա: Սակայն, նույն քարերով իրար էին հարվածում և սպանում: Իրար վրա նետված համարձակ և վտանգավոր այդ քարերից մահանում են երեսուն հոգի: Իսկ սուրբ առաքյալը մոտենալով սպանվածներին, իր ձեռքը դնում և աղոթում է նրանց վրա, և իսկույն մահացածների ոգիները վերադառնում են. նրանց մեջ, ոտքի են կանգնում ողջ և առողջ և կենդանի: Նրանցից ամեն մեկը ապա գնում է և շտապ՝ առաքյալի մոտ է բերում հիվանդներին, դևերից հալածվածներին, տեսակ-տեսակ ախտերի և ցավերի մեջ տառապողներին, անդամալույծներին, կույրերին, կաղերին, խեղանդամ դարձածներին, խուլերին, համրերին, լուսնոտներին և բոլոր այն ախտաժետներին, որոնք տառապում էին պես-պես ցավերի մեջ: Իսկ սուրբ առաքյալը բուժում էր նրանց բոլորին:

Ապա նա քարոզում է նրանց Մատթեոս առաքյալի ավետարանը: Իսկ իրենց ախտերից և հիվանդություններից ապաքինվածները, մեծ ուրախությամբ ընդունում էին ավետարանի քարոզությունը:

Այնուհետև սուրբ առաքյալը գնալով քաղաքի ծայրամասը, ապառաժուտ մի վայր, ծնրադրում է և աղոթում, գոհություն է մատուցում Քրիստոսին իր ցույց տված շնորհների համար, որոնց միջոցով բացվել էին բուժվածների մտքերը՝ լսելու, իմանալու և ընդունելու կյանքի խոսքը և հավատալու Տեր Հիսուս Քրիստոսին, որը ճշմարիտ Աստված է և հավիտենական կյանք:

Սուրբ առաքյալը այնտեղ կանգնեցնում է խաչի նշանը և բարձրաձայն աղոթում է: Նույն պահին տեղի է ունենում մեծ շարժ, լսվում է ահեղ որոտման ձայն, հողը պատռվում է և իսկույն բխում է քաղցրահամ ջրերի հորդահոս մի աղբյուր, որը շուրջանակի բոլորակաձև հոսում է հանդարտ ու հեզիկ ընթացքով: Ի տես այս հրաշքի ժողովուրդը ուրախանում է և ցնծում: Ապա սուրբ առաքյալը բոլորին իջեցնում է ջրի մեջ և մկրտում, և լուսավորում՝ նրանց Սուրբ Հոգու լույսով, և սուրբ պատարագի խորհուրդը կատարելով՝ բոլոր մկրտվածներին հաղորդում է Աստծո Որդու՝ Հիսուս Քրիստոսի կենարար մարմնով և արյունով, ի թողություն նրանց մեղքերի: Որովհետև Քրիստոս ի՛նքն է կյանք, կեցուցիչ և հաստատիչ Սուրբ Երրորդության:

Ապա սուրբ առաքյալը քիչ առաջ քարով սպանված և իր աղոթքով վերակենդանացած մարդկանցից մկրտվածների համար երեցներ է ձեռնադրում և բոլորին ամրապնդում՝ ճշմարիտ հավատի մեջ:

Այս բոլորից հետո նա գնում է Մարաց և Եղիմացիների աշխարհները, բայց անկարող է լինում այնտեղ քարոզելու և հրաշքներ գործելու, տեղի ժողովրդի խստասրտության և կռապաշտական մոլեռանդության պատճառով: Մի քանի հոգի միայն հավատում են: Սուրբ առաքյալը նրանց քարոզում է Մատթեոսի ավետարանը: Նորադարձները հրաժարվում են աշխարհի բոլոր վայելքներից և գնում են առաքյալի ետևից, ուր որ նա՛ է գնում:

Այնուհետև սուրբ առաքյալը վերադառնում է այդտեղից և մտնում է Ասորիքի Բուստրա քաղաքը: Երբ նա քաղաք է մտնում, տեսնում է, որ մարդիկ մահացած մի պատանու տանում են թաղելու: Պատանին որը տասներկու տարեկան էր, նույն քաղաքի հպարապետի որդին էր: Նա ծանոթ էր Անդրոնիկոս անունով: Մահացած պատանու դագաղի ետևից գնում էին բազմաթիվ լացողներ, փողերով, քնարներով, պարողների խմբերով, իսկ կանայք ողբեր էին մրմնջում և հորդառատ արցունքներ էին թափում դագաղի վրա:

Նույն պահին սուրբ առաքյալը հասնում է քաղաքի հրապարակը, ձգում է իր ձեռքը, մոտենում՝ դագաղին, որի մեջ պառկել էր մահացած պատանին և ասում է նրան. «Ո՛վ դու պատանի, քեզ եմ ասում, վե՛ր կաց հանուն մեր Տեր Հիսուս Քրիստոսի»: Նույն ժամին վեր է կենում մեռյալը, և նրանք որ բարձած տանում էին նրա դագաղը, կանգ են առնում: Հուղարկավոր բազմությունը նայելով սուրբ առաքյալի դեմքին, տեսնում է, որ նրա բերնից կրակ է դուրս գալիս, որը և կենդանացրել էր պատանուն: Բազմությունը միաբերան աղաղակում է և ասում. «Աստված է երևացել մեր մեջ»: Իսկ երիտասարդները մոտենալով սուրբ առաքյալին, բարձրացնում են նրան իրենց բազուկների վրա, մինչ ժողովրդից շատերը պատրաստվում են կոհեր մատուցելու և նվերներ ընծայաբերելու: Սուրբ առաքյալը, սակայն, հազիվ կարողանում է ազատվել նրանց ձեռքերից, հեռանում է մի քիչ բազմությունից, աղաղակում և ասում. «Ես Տեր Ամենակալի ծառան եմ, նրա Որդու և Սուրբ Հոգու ծառան, որոնց անունով էլ կենդանացել է այս մահացած պատանին: Իսկ ես ուղարկվել եմ ձեզ մոտ, քարոզելու արքայության Ավետարանը, որպեսզի դուք ընդունեք կյանքի խոսքը, դրանով ապրեք և ետ դառնաք ձեր ունայն պաշտամունքներից, ինչ որ մինչև այժմ պաշտել էք ձեր տգիտության և անհավատության պատճառով, և ճանաչեք միակ ու ճշմարիտ Հիսուս Քրիստոսին՝ մեր Տեր Աստծուն, որը ստեղծել է երկինքն ու երկիրը, ծովն ու այն ամենը, ինչ կա դրանց մեջ»:

Ապա սուրբ առաքյալը նրանց համար գրի է առնում Մատթեոսի Ավետարանը, որը՝ պահում էր իր մոտ, որպես իր առաքելական քարոզության օժանդակ ձեռնարկ: Երեք օր շարունակ սուրբ առաքյալը աշխատում է համոզել բազմությանը, որ իրեն կոհ չմատուցի: Այնուհետև նա վերակենդանացած պատանուն, նրա հորը, ընտանիքի բոլոր անդամներին ու հարազատներին մկրտում է հոգևոր կրակով և մաքուր ջրով և Սուրբ Հոգու լուսավորությամբ:

Սուրբ առաքյալը մկրտված պատանուն անվանում է Մատթեոս՝ ի պատիվ Մատթեոս ավետարանչի և նրան երեց է ձեռնադրում հավատացյալների համար, ըստ առաքելական կանոնի:

Իսկ նրանք, որ քաղաքից դուրս էին եկել՝ հետևելու մահացած պատանու դագաղին, երբ տեսնում են կատարված այս սքանչելի գործերն ու հրաշքները, ինչպես նաև այն, որ հպարապետն ու նրա ողջ ազգատոհմը հավատում են Քրիստոսին առաքյալի քարոզությամբ և նրա կատարած հզոր գործերի պատճառով, ինքնահոժար փութաջանությամբ գալիս են առաքյալի մոտ և մկրտվում՝ Սուրբ Հոգով, մեր Տեր Հիսուս Քրիստոսի մահվան խորհրդով և սուրբ ավազանի ջրով:

Նույն քաղաքում կային նաև յոթ բագիններ և դրանց մեջ՝ Արեսի և Արամազդի պատկերներով քանդակված կուռքեր: Առաքյալի հրամանով հպարապետը այդ կուռքերը խորտակելով կործանում է և բագինների հարստությունը բաժանում է աղքատներին և կարոտյալներին:

Այնուհետև սուրբ առաքյալը բազում բուժումներ է կատարում հիվանդների, բազմապիսի ցավերով և ախտերով տառապող թշվառների վրա, չար ոգիներ է հանում հիվանդներից և դրանց հալածում քաղաքից դուրս, ամբողջ ժողովրդի աչքի առաջ: Այնտեղ սուրբ սեղան է կանգնեցնում, իրեն աշակերտածներից մեկին քահանա է ձեռնադրում, իսկ պատանին, նախապես, ըստ իր քահանայական ձեռնադրության, ստացել էր արդեն Սուրբ Հոգու լույսը:

Ապա սուրբ առաքյալը մկրտված նորադարձներին սուրբ կրոնի հավատի մեջ հաստատելուց հետո, գնում է իր առաքելական նոր վիճակը՝ Գերմանիկեցիների աշխարհը, ըստ Սուրբ Հոգու ընտրության: Երբ նա մտնում է այնտեղ, նրա համբավը տարածվել էր արդեն այդ երկրով մեկ: Իր առաքելական այս նոր վիճակում, նրա ձեռքով ևս կատարվում են հրաշքներ և սքանչելի գործեր, որոնց համբավը արևի ճառագայթների նման տարածվում է ողջ երկրի վրա: Ժողովուրդը շտապում է գալ նրա մոտ, բերելով տեսակ-տեսակ ցավերի մեջ տառապող հիվանդներին, և Տիրոջ օգնությունը սուրբ առաքյալի հետ էր լինում միշտ, հիվանդներին բուժելու համար:

Ժողովրդից շատ-շատերը նստում էին սուրբ առաքյալի անցնելիք ճանապարհների վրա, նրանից ստանալու համար իրենց ցավերի և հիվանդությունների բուժումը, և դիվական տանջանքներից իրենց ազատումն ու հանգիստը: Եվ երբ սուրբ առաքյալի կատարած

այդ բոլոր սքանչելի գործերի մասին լսում է երկրի թագավորը, սաստիկ բարկանում է և հրամայում իր ծառաներին, որ գնան և ձերբակալեն ու բանտարկեն նրան հինգ օր: Եվ երբ անցնում է հինգերորդ օրը, թագավորը ատյան է կալսում գերմանիկեցի իր մեծամեծների և իշխանների հետ և հրամայում է սուրբ առաքյալին ատյան հանել: Թագավորի ծառաները գնում են ամրորեն փակված բանտը, հավաքվում է նաև մեծ բազմություն, այդ պահին հանկարծ բանտի շուրջ, միջօրեի պայծառ արևի նման, սաստիկ մի լույս է ծագում, և մեծ ահ ու սարսափ է ընկնում ծառաների վրա, որոնք եկել էին սուրբ առաքյալին տանելու և չարչարելու ատյանի տանջարանում: Ծառաները շտապով և մեծ երկյուղով տագնապահար, վերադառնում են թագավորի մոտ և պատմում նրան ու նրա հետ եղողներին կատարվածների մասին:

Թագավորը և նրա հետ եղողները լցվում են մեծ ցասումով և հրամայում են հրկիզել բանտը, այն մտածումով, որ հրդեհի կրակների մեջ կայրվի նաև Աստուծո սուրբը: Իսկ նա բանտի մեջ, ամեն օր աղոթում էր, որ Աստված գթա իր ստեղծած արարածների վրա, որպեսզի նրանք դառնան իրենց մոլորությունից, որի մեջ նրանք ընկել էին իրենց խավարամիտ տգիտության, սատանայական բաբելպատիր մոլորության պատճառով, որովհետև նրանք պաշտել էին արարածներին և իրենց ձեռքերի շինած կուռքերին: Եվ մինչ նրանք այս մասին հիշելով մտածում էին նաև սուրբ առաքյալի մասին, տեղի է ունենում հանկարծակա՛ն ու ահեղ մի որոտ, ամպերի ժայթքում հրեղեն փայլատակումներով. ի տես այս բոլորի, նրանք գետին են ընկնում շփոթված ու սարսափահար, որպես մտածումից կուրկ, անխոս անասուններ: Իսկ սուրբ առաքյալը բանտից դուրս է գալիս, իր ձեռքը դնում է նրանցից յուրաքանչյուրի վրա, քաջալերում է ամենքին, որ իրենց ոտքերի վրա ամուր կանգնեն. նույն պահին նրանք վերստանում են իրենց մտածելու կարողությունը և աղաչում են սուրբ առաքյալին, որ խնդրի իրենց համար Աստծո գթությունը և հարվածներից ստացած իրենց վերքերի բուժումը: Սուրբ առաքյալը, այս առթիվ նրանց ասում է. «Նրանք՝ որոնց մարմնավոր աչքերը բաց են, այս աշխարհի լո՛յսը միայն կարող են տեսնել, և ոչ երբեք ճշմարիտ լույսը, որը լուսավորում է այս աշխարհ եկած յուրաքանչյուր մարդուն: Արդ, եթե ընդունեք իմ խոսքերը և հավատաք Աստուծո Միածին Որդու փառքի քարոզության ավետարանին, որը ես քարոզում եմ ձեզ, կստանաք ձեր վրա գալիք հարվածների բուժումը, ինչ որ խնդրում եք ինձ, իմ բարեխոսությամբ: Այդպիսով դուք կապրեք ու կդառնաք անստվեր լույսի և հավիտենական անանց կյանքի ժառանգորդներ: Այդ ժառանգությունը ձեզ տալու է Աստուծո Որդի Հիսուս Քրիստոսը, եթե սակայն դուք նրա անունով հավատաք անկասկածելի խոստովանությամբ»: Նրանք պատասխանում են սուրբ առաքյալին և ասում. «Հավատում ենք քո Աստծուն, որի մասին դու համոզմունքով պատմում ես մեզ: Նրան հավատալով միայն մենք կարող ենք փրկվել և լուսավորվել»: Սուրբ առաքյալը ինչպես ամեն տեղ, այստեղ ևս քարոզում է Մատթեոսի ավետարանը, մեկնում է Եսայի Տեսանողի և մյուս մարգարեական գրքերի և Ավետարանի խորին իմաստությունները, Սողոմոնի առակները: Այս բոլորից հետո թագավորը, նրա մեծամեծներն ու նախարարները սուրբ առաքյալին խընդրում են ու ասում. «Մեզ էլ քարոզիր փրկության Ավետարանը, ասում էիր, թե միայն մկկըրտությամբ կարող եք ստանալ մեղքերի թողությունը, արժանանալ երկնքի արքայությանը և փրկվել ձեր վրա գալիք հարվածներից... Այժմ արդեն գիտենք և հասկանում ենք, որ քո Աստվածը միայն Աստված է և նրանից բացի չկա մեկ ուրիշը, և որին մենք կծառայենք ու կհնազանդվենք, որովհետև նա է ճշմարիտ Աստվածը, հավիտենական կյանքն ու Փրկիչը աշխարհի»:

Ապա սուրբ առաքյալը նրանց իջեցնում է ջրի մի վտակի մեջ, որը հոսում էր մի ձորի հարավային մասում և նրանց մկրտում: Մկրտվածների աչքերը իսկույն ևեթ բացվում են, և նրանք տեսնում են, որ Սուրբ Հոգին իջնում է վտակի ջրերի վրա թեթև ու քաղցր օդի միջով և պայծառ լույսով: Սուրբ Հոգին նրանց լուսավորում է, իսկ նրանք հագնում են լույսը որպես զգեստ:

Սուրբ առաքյալը անմիջապես Սեղան է կանգնեցնում և նրանց հաղորդում Երկնավոր Հացով ու Աստծու Որդու արյունով: Այնուհետև սուրբ առաքյալը իր ձեռքը դնելով աղոթում է բոլորի վրա, որպեսզի նրանք հաստատ մնան իրենց ընդունած հավատի վրա, երբ որ լուսավորվեցին Սուրբ Հոգու լույսով:

Մկրտվածները աղաչում էին սուրբ առաքյալին, որ նա միշտ մնա իրենց մոտ, հովվի իրենց և երբեք չբաժանվի իրենցից: Իսկ նա պատասխանում է նրանց և ասում, որ ինքը պարտավոր է այլ քաղաքներում էլ քարոզել կյանքի խոսքը, ինչպես պատվիրել էր Քրիստոսը. «Գնացեք հեթանոսների մեջ, նրանց էլ մկրտեցեք Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով»: «Արդ ինքը Քրիստոսը, որին դուք հավատացիք, և մկրտվեցիք նրա Սուրբ Հոգով, նա միշտ կլինի ձեզ հետ, իսկ քանի որ Քրիստոս հանձնարարել է մեզ հեթանոսների քարոզությունը, մենք չենք կարող նրա հրա-

մանը չկատարել: Առաքյալի այս խոսքերը լսելով՝ բոլորը թույլ են տալիս որ նա այլ քաղաքներում էլ շարունակի առաքելական իր քարոզությունը:

Սուրբ առաքյալը մեկնում է այդտեղից և գնում-հասնում է Պարթևների, Մարերի և Ելիմացիների աշխարհները, այնտեղ ևս քարոզելու կյանքի խոսքը: Պարթևներից շատերը դառնում են Զորության Տիրոջ հավատին, տեսնելով միաժամանակ սուրբ առաքյալի հրաշքները, հզոր, սքանչելի գործերը, և Տիրոջ ողորմությամբ ու գթությամբ նրա կատարած տեսակ-տեսակ բուժումները: Պարթևների աշխարհում սուրբ առաքյալը շատերին լուսավորելով իր քարոզությամբ, անցնում է Պարսիկների և Մոգերի աշխարհները, և այնտեղ ևս նրանց քարոզում է իր Մատթեոսյան Ավետարանի վարդապետությունը: Իսկ ինչ վերաբերում է մոգերի կրոնին, նա բացատրում է նրանց ամեն ինչ այդ մասին: Այնուհետև սուրբ առաքյալը գնում է մոգերի պաշտամունքի վայր այն կրակարանը, որտեղ այդ կրոնի հետևորդները՝ արևապաշտները, կատարում էին իրենց արարողությունները ըստ մոգական օրենքի: Սուրբ առաքյալը դառնում է դեպի արևելք, բարձրացնում է իր ձեռքը արևի դեմ և օրվա մինչև վեցերորդ ժամը խափանում է արևի ճառագայթների լույսն ու կորությունը: Նույն ժամին կրակարան-ատրուշանի մեջ երկնքից իջնում է հրեղեն մի սյուն, որպես մեղադրանք ու դատապարտություն նրանց մոգական մոլորության, քանի որ նրանք պաշտում էին նաև Հեղիի, Սեփիի, Արեսի և Պռենոսի կուռքերը: Հակառակ երկնքի միջոցով պատահած այսքան հրաշքների ու սքանչելիքների, որոնք հիացնում ու միաժամանակ արհավիրքների էին մատնում արևապաշտներին, այդ բոլորը չէին ազդում սակայն նրանց վրա՝ հրաժարվելու տարրերը պաշտելու և դրանց երկրպագելու նրանց մոլորությունից և սնոտի առասպելաբանության մեծախոսիկությունից: Այստեղ ութ հոգի միայն հավատում են սուրբ առաքյալի քարոզության, որոնց նա մկրտում ու լուսավորում է և նրանց դուրս հանում կործանման մատնվելիք ժողովրդի միջից:

Այնուհետև սուրբ առաքյալը հեռանալով այդտեղից՝ գալիս-հասնում է Հայոց Գողթն գավառը, որը, ըստ Սուրբ Հոգու հրամանի, Սուրբ Թադեոս առաքյալի առաքելության և քարոզության վիճակն էր: Սուրբ Բարթողիմեոս առաքյալը այստեղ քարոզում է այդ գավառի ժողովրդին կյանքի խոսքը: Նրանք մեծ ուրախությամբ հավատում են և հոժարությամբ ընդունում՝ ավետարանի քարոզությունը և ավազանի մկրտությամբ լուսավորվում են: Սուրբ առաքյալը նրանց համար իրեն աշակերտած նախկին մոգերից երեցներ է ձեռնադրում: Ապա ամեն տեղ, ուր սուրբ առաքյալը գնում էր նրա միջոցով Աստված բազում հրաշքներ և սքանչելի, հզոր գործեր է կատարում որոնց միջոցով շատեր դառնում էին իրենց սնոտի պաշտամունքներից դեպի ճշմարիտ Աստվածը, նրանց վրա իջնում էր առաքելական շնորհ:

Հայոց Սանատրուկ թագավորի իշխանության 29-րդ տարում, ըստ Սուրբ Հոգու հրամանի, Սուրբ Բարթողիմեոս առաքյալն էլ, որ Սուրբ Հոգուց կանչվել էր հեթանոսների առաքելությանը, մտնում է Հայաստան: Սուրբ Թովմաս առաքյալն էլ Հայաստանում իր առաքելական առաջնորդության ժամանակ գրում է Սուրբ Բարթողիմեոսին, որ նա վանց չառնի արքայության Ավետարանի քարոզությունը Հայաստանում, Սուրբ Թադեոսի փոխարեն, որը Քրիստոսի 72 աշակերտներից մեկն էր:

Սուրբ Բարթողիմեոս առաքյալը, հասնելով Հայաստանի մայրաքաղաք Արտաշատի բլուրը, հանդիպում է Քրիստոսի 12 առաքյալներից Հուդա Հակոբյանին: Այնտեղ, որտեղ երկու առաքյալները հանդիպել էին միմյանց, կանգնեցնում են տերունական խաչի նշանը, և նրանք մեծ ուրախությամբ բաժանվում են իրարից՝ գնալու համար յուրաքանչյուրը դեպի իր առաքելական վիճակը:

Սուրբ Բարթողիմեոսը հասնում է Հայաստանի Հեր և Զարեհավան գավառները, որտեղ և հրաշքներ է կատարում բազում հիվանդների վրա, չար ոգիներ է հանում, քարոզում է շատերին և մխիթարում նրանց սուրբ Ավետարանի քարոզությամբ: Սուրբ առաքյալը խոստում է առնում նրանցից, որ հաստատուն կմնան իրենց հավատի վրա, հավատ, որը ընդունել են ուրախությամբ: Ապա իր ձեռքը դնելով նրանցից յուրաքանչյուրի վրա՝ օրհնում է բոլորին և հանձնում Աստծու շնորհներին և պաշտպանությանը:

Ապա նա գնում է Հայաստանի Ուրբիանոս քաղաքը, որտեղ նրա մոտ են գալիս տարբեր-տարբեր ցավերի և հիվանդությունների տանջանքների մեջ տառապողներ, որոնց նա բուժում է և լուսավորում սուրբ ավազանի մկրտությամբ:

Սուրբ Բարթողիմեոս առաքյալի մասին լսում է Հայաստանի Սանատրուկ թագավորի քույրը՝ Ոգուհին: Սանատրուկը Եդեսիա քաղաքի հայոց Աբգար թագավորի քրոջ որդին էր:

Ոգուհին գաղտնապես սուրբ առաքյալի մոտ է գալիս՝ նրանից լսելու կյանքի խոսքը. հավատում է Քրիստոսին և՛ ինքը, և՛ յուրայինները: Նա հրաժարվում է աշխարհի փառքերից և հագնում՝ կուսության հանդերձը:

Ոգուին իշխանուին՝ աշակերտելով Սուրբ Բարթողիմեոս առաքյալին, նրա հետ շրջում է ամեն տեղ ավետարանի քարոզության համար: Սանատրուկ թագավորը լսելով պատահած այս բոլոր բաների մասին, սաստիկ կատաղում է ինչպես վայրի և արյունարբու գազանը և, Տերենտիոս հպարապետին իր մարդկանց հետ ուղարկում է ձերբակալելու Սուրբ Բարթողիմեոս առաքյալին: Երբ հպարապետը թագավորի հրամանի համաձայն գալիս է Աստծու սրբի մոտ, տեսնելով նրան՝ գութը շարժվում է նրա հանդեպ, իսկ սուրբ առաքյալը քարոզում է նրան արքայության ավետարանը: Տերը իսկույն բացում է հպարապետի միտքը, և նա հասկանում է ու հավատում առաքյալի քարոզությանը:

Տերենտիոս հպարապետը տառապում էր նաև բորոտությամբ: Սուրբ առաքյալը գիշերը նրան մկրտում է: Մկրտության ժամանակ լուսավոր մի ամպ հովանի է լինում մկրտության տեղի վրա, և հրեղեն մի լույս տարածվում-սփռվում է սուրբ ավազանի շուրջ: Տերենտիոս հպարապետը մկրտվելուց հետո երբ դուրս է գալիս ջրից, նրա մարմնի կոշտացած մաշկը ծառի կեղևի կամ որթատունկի տերևի նման ընկնում է ներքև, և նա լույսն է հագնում որպես զգեստ:

Շատերը տեսնելով այս բոլոր եղածները՝ հավատում են տիրոջը: Եվ երբ տեղի ունեցած այս սքանչելիքների լուրը հասնում է Սանատրուկ թագավորին, նա առավել զայրանում է անհամբեր բարկությամբ և իր նախարարներից մեկին շտապ ուղարկում է նրանց սպանելու համար, որպեսզի ոչ ոք հետայսու առիթը չունենա սուրբ առաքյալին լսելու:

Թագավորի մարդիկ ձերբակալելով սուրբ առաքյալին, Ոգուհուն, Տերենտիոս հպարապետին և ուրիշների հետ բերում-հասցնում են թագավորական ատյան: Այստեղ Սուրբ Բարթողիմեոս առաքյալին վեց մարդիկ մի ամբողջ ժամ տանջում են ծեծելով փշոտ գավազանով և նրան մեռած համարելով՝ քաղաքից դուրս են գցում, բայց սուրբ առաքյալը ողջ ու կենդանի էր մնում իր Աստծու ողորմության և զորության շնորհիվ, որի վրա նա իր հույսն էր դրել: Եվ երբ նա շուրջ երեք ժամ այսպես ընկած մնում է, քաղաքի և նրա բոլոր կողմերից հսկա մի բազմություն էր հավաքվել սուրբ առաքյալի շուրջը: Երեք ժամ անցնելուց հետո սուրբ առաքյալը մեղմորեն ձեռքը շարժում է, իսկ բազմությունը նրա ձեռքից բռնած նրան ոտքի է կանգնեցնում: Սուրբ առաքյալը նստում՝ և իր ձեռքերը երկինք բարձրացրած ասում է. «Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Աստված, քո ձեռքից բաց մի՛ թող առաքելական այս վիճակը, Թադեոսի, Թովմասի, Հուդայի և իմ՝ Բարթողիմեոսի խնդրանքով, մենք՝ որ հոգ են տարել հայոց այս աշխարհի համար: Այս վիճակը թող ոտնահար չլինի թշնամուց: Սրան շնորհիր քո ողորմության շնորհները, որպեսզի այստեղ բոլորը ետ դառնան սնոտի կուռքերի իրենց երկրպագությունից, որովհետև նրանք մոլորված էին իրենց կուր և դատապարտելի տգիտության և անհավատության պատճառով: Առաքելական այս քո վիճակին պարգևիր արժանի հովիվներ և առաջնորդներ, որպեսզի այս ժողովուրդը ճանաչի քեզ որպես միակ ու ճշմարիտ Աստված, և նրան՝ Հիսուս Քրիստոսին, որին դու ուղարկեցիր աշխարհ: Ընդունիր նաև ինձ, ով Տեր, և քո այս հավատացյալները պահիր քո անունով»:

Սուրբ առաքյալը երբ ավարտում է իր աղոթքը, նրա կանգնած տեղը շարժվում է, իսկ նրա վրա իջնում է լուսեղեն մի կամար: Ապա նա երկինք նայելով ավանդում է իր հոգին և իսկույն բուրում է նրա նահատակության անույշ բուրմունքը: Իսկ Սուրբ Թադեոս առաքյալը, որ մարմնավոր տեսության համար ընդառաջ էր գալիս Ս. Բարթողիմեոսին, երբ լսում է նրա հանգստի մասին, վերադառնում է այնտեղ, որտեղից եկել էր:

Ս. Բարթողիմեոս առաքյալի մահով ահ ու սարսափ է բռնում բոլորին: Այդ օրը հավատում են երկու հպարապետներ, որոնք և փառավորում են Աստծուն, կատարված դեպքերի համար: Այնուհետև սուրբ առաքյալի մարմնի վրա, իջնում է կամարաձև մի լույս, որը և մնում է տասներկու օր շարունակ:

Իսկ երանելի Ոգուհին, Տերենտիոս հպարապետը և շատ-շատեր նրանց հետ սպանվում են սրով: Հավատացյալները սուրբ առաքյալի մահից հետո վերցնում են նրա մարմինը և թաղում նույն տեղում, ինչպես նաև մյուս վկաների մարմինները ի փառս ամենասուրբ Երրորդության:

Այս բոլորից հետո տեղի է ունենում մի որոտ, այն լսում են խուլերն ու բուժվում, տեսնում են կույրերն ու լուսավորվում, համրերը՝ որոնք և խոսում են: Այսպես բոլորը, որոնք հավատացել էին Հիսուս Քրիստոսին Սուրբ Բարթողիմեոս առաքյալի քարոզությամբ, բուժվում են իրենց հիվանդությունից: Բոլոր բուժվածները և բազում հավատացյալներ վեր են բարձրացնում իրենց ձեռքերը և միաբերան փառավորում են մեր Տեր Հիսուս Քրիստոսին, Նրան, Հորը և Սուրբ Հոգուն այժմ և ընդմիշտ վայել է փառքը, իշխանությունն ու պատիվը, հավիտյանս հավիտենից. ամեն:



ՍՈՒՐԲ ՈՍԿՅԱՆՔ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում ըստ ավգային ավանդության Թադեոս առաքյալի քարոզության հետ կապված են Սուրբ Ոսկյանք քահանաների և Սուրբ Սուքիասյանք մարտիրոսների վկայաբանությունները:

Սույն նահատակությունները «Վկայված են ավգային հաստատուն ավանդությամբ, որ անդստին Լուսավորչին ժամանակեն անոնց հիշատակը ընդունած է տոնելի սուրբերուն կարգը»[1]:

Սուրբ Ոսկյանց և Սուրբ Սուքիասյանց վկայաբանությունների նպատակն է եղել, որ Հայաստանում Սուրբ Թադեոս առաքյալի և Սուրբ Սանդուխտ կույսի նահատակությունից հետո «քրիստոնեությունը չի վերջանում Հայաստանում... և նրանց վկայաբանությունների նպատակն է եղել լոկ Հայոց Եկեղեցու սկզբնավորության հնացումը, իսկ պատմական հիմքն այն է, որ Գրիգորի քարոզությունից առաջ, ինչպես հայտնի է, քրիստոնեությունը որոշ չափով տարածված է եղել Հայաստանում»[2]:

Ավետարանի քարոզությունը Հայաստանում Սուրբ Թադեոս և Սուրբ Բարթողիմեոս առաքյալների ջանքերով և նահատակությամբ արմատ էր գցում հայ սրտերի մեջ: Այդ բանի պայծառ ապացույցն էր Նոր Հավատի դեմ հայոց Արտաշես թագավորի հանած հալածանքի հրովարտակները, և այդ պատճառով Հայաստանում կատարված նոր նահատակությունների հիշատակությունները, ինչպիսիք էին Ոսկանյանց և Սուքիասյանց նահատակությունները:

Ըստ Հայ Եկեղեցու ավանդության, Ոսկյանք հինգ հռոմեացի կամ հոռոմ դեսպաններ էին, որոնք մասնավոր դեսպանությամբ եկել էին Հայաստան, հայոց Սանատրուկ արքայի պալատը: Հինգ դեսպանների գլխավորն էր Խրյուսոսը, հունարեն մի բառ, որը նշանակում է Ոսկի: Նրա անունով էլ հետագայում ամբողջ խումբը քրիստոնյա դառնալուց հետո կոչվում է Ոսկյանք:

Հռոմեացի դեսպանները դեպի Հայաստան իրենց ճանապարհի վրա, Միջագետքի սահմաններում հանդիպում են Թադեոս առաքյալին, նրա քարոզությամբ ընդունում են քրիստոնեությունը, մկրտվում են և գործակիցներն են դառնում՝ Հայաստանի առաջին լուսավորիչ Ս. Թադեոսին: Նրանց գլխավորը՝ Ոսկին, քահանա է ձեռնադրվում Ս. Թադեոսից:

Ոսկյանք ամբողջովին նվիրվում են իրենց նոր առաքելությանը, վաճառում են իրենց ունեցվածքը և զբաղվում են Ավետարանի քարոզությամբ:

Ս. Թադեոսի նահատակությունից հետո և պետական հալածանքների պատճառով Ոսկյանք թողնում են պալատը և առանձնանում Եփրատ գետի ակունքի մոտ, Ծաղկոտն գավառի Ծաղկեռ լեռները, ուր և 46 տարիներ ապրում են ճգնավորական կյանքով. «ԶՔրիստոս քարոզեցին ի դրունս թագուհւոյն, մկրտելով զքաջ նահատակսն ի յակունս Եփրատայ ի ծաղկապարդ վայելչութիւնս»:

Ոսկյանք, սակայն, Ավետարանի քարոզության համար հաճախ իջնում էին իրենց ճգնավորական մենաստաններից, և հայոց արքունիքում քարոզում՝ Նոր Կրոնը:

Ոսկյանք մի անգամ պալատում իրենց քարոզության ժամանակ հանդիպում են 17 ալան իշխանների, որոնք այցելության էին եկել

---

[1] *Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան*, Ազգապատում, Ա հատոր, մասն Ա, Բեյրութ, 1959, էջ 46—48:

[2] *Մանուկ Աբեղյան*, Հայոց հին գրականության պատմություն, Ա գիրք, Երևան, 1944, էջ 341—343:

իրենց ազգական և հայոց թագուհի Սաթենիկին:

Ալան իշխանները լսելով պալատում Ոսկյանց քարոզությունը, մկրտվում են և քրիստոնյա դառնում:

Ոսկյանց գլխավորը՝ Ոսկի քահանան, Նորադարձներին տանում և մկրտում է Եփրատի ակունքների մոտ: Ալան իշխանների խումբը, որը աստիճանով էլ «յերկրորդական գահէն թագակից» է եղել Ալանաց թագավորին, իրենց գլխավորի անունով հետագայում կոչվում է Սուքիասյան:

Սուքիասյանց այս ալան իշխանների քրիստոնյա դարձն ու մկրտությունը մեծ հուզում և վրդովմունք է պատճառում հայոց արքունիքին, մանավանդ Սաթենիկ թագուհուն և գահաժառանգ Արտավազդին: Արտավազդը մի օր Ծաղկեն լեռներում իր եղբայրներին հետ որսի ժամանակ գտնում է Ոսկյանց ճգնարանները և ստիպում է սպառնալիքով նրանց, որ համոզեն քրիստոնյա դարձած ալան իշխաններին, ուրանալու Նոր Հավատքը և վերադառնալու պալատ:

Ոսկյանք համարձակորեն պատասխանում են Արտավազդին որ «Նրանք թող ընտրեն իրենց օգուտն ու վնասը, արդեն չափահաս ու խելահաս մարդիկ են»:

Ոսկյանց այս համարձակ պատասխանը էլ ավելի են գրգռում երիտասարդ ու հանդուգն գահաժառանգի կայրությունն ու բարկությունը, ոչ այնքան ալան իշխանների վրա, որքան «վանոնք քրիստոնյա դարձնող Ոսկյանց քահանաների վրա»[3]: Արտավազդը իսկույն ևթ իր պալատական շքախմբով հասնում է Ծաղկեն լեռները, գտնում է Ոսկյանց մենարանները, հրամայում է անմիջապես ձերբակալել և սպանել նրանց «սուսերաւ բարձեալ ըստ գլուխս նոցա»:

Պատմությունը չի հիշում Սուրբ Ոսկիի չորս ընկերների անունները:

107 թվականին Սուքիասյան վկաները հավաքում են նահատակ Ոսկյանց մասունքները և թաղում, և ապա շարունակում՝ նահատակների քարոզչական աշխատանքները և իրենք «անոնց տեղ կրոնավորեցան»[4]:

Հայ Եկեղեցին Սուրբ Ոսկյանց տոնը կատարում է Բուն Բարեկենդանից երկու շաբաթ առաջ:

Հայ Եկեղեցին Մեծ Պահքից առաջ ամեն տարի կատարում է մի շարք կուտ ազգային սրբերի հիշատակները, այդ թվում Ոսկյանց և Սուքիասյանց հիշատակը, Ս. Սահակ Պարթևի, Սուրբ Ղևոնդյանց քահանաների և վերջում Սուրբ Վարդանանց կորավարների և վկաների հիշատակը[5]:

Սուրբ Ոսկյանք քահանաների հիշատակին է նվիրված հետևյալ մասնավոր ստեղի Մանկունք շարականը:

«Որք արժանաւորեցայք կոչիլ յաշակերտութիւն առաքելոյն Թադէոսի,
Եւ աստուածային հրով մաքրութեան, Ոսկի փորձեալ գտայք,
Ի բնակարանս հրեշտակաց, ով սուրբ Ոսկեանք, բարեխօսեցէք առ Տէր մաքրել զմեզ ի մեղաց մերոց»[6]:

Սուրբ Ոսկյանց վկայաբանությունը որպես «Բան և ասութիւն ճշմարիտ սրբոցն Ոսկեանց քահանայից» աշխարհաբար թարգմանությամբ ներկայացվում է մեր ընթերցողների ուշադրությանը[7]:

ՍՈՒՐԲ ՈՍԿՅԱՆՑ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հունաց կողմերում գտա մի այլ պատմագիր ևս, Տատիանոս անունով ընթերցասեր մի մարդու, որը ապրել է Վալենտիանոս կայսրի ժամանակ: Նա մեզ շատ բաներ է պատմել քաղելով հունական մատյաններից: Նրա առատաբանությամբ գրված բաղում վրույցները մինչև այժմ գտնվում են մեզ մոտ, և ես էլ բաղում անգամներ ընթերցելով նրա ճառերը, նրանց մեջ գտել եմ վկայություններ այն մասին, որ Մեծն Թադոս առաքյալի աշակերտներից ոմանք, որոնց գլխավորի անունը Խրյուսոս էր. առաքյալի մահից հետո ճգնավորական կյանք են վարում Եփրատ գետի ակունքների մոտ գտնվող Ծաղկեն լերան ստվերոտ ծմակներում:

Ս. Թադեոս առաքյալի սույն աշակերտները այցելելով Արտաշես թագավորին, նրան պատմում են Քրիստոսի աստվածության մասին, պախարակելով նաև կուռքերի տկարությունը: Երբ այդ մասին լսում է Արտաշես թագավորը, նրանց հայտնածը անտեղի չի համարում և ասում է, որ այդ մասին ինքը լսել է նաև ուրիշ շատերից, բայց այժմ ըստ բաղված լինելով պատերազմով՝ նրանց թելադրում է մի այլ առիթով, դարձյալ լսել այդ բոլորի մասին: Այնուհետև գնում է դեպի Արևելք պատերազմի:

---

[3] *Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան*, նույնը, էջ 46:

[4] *Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյան*, Սուրբք և տոնք, Երուսաղեմ, 1939, էջ 176:

[5] Օրացոյց, Ս. Էջմիածին, 1982, էջ 26—30:

[6] Շարական, 1888, էջ 431:

[7] Տես բնագիրը, Սոփերք հայկականք, ԺԹ, Վենետիկ, 1854, էջ 57—66:

Իսկ Սրբերը մոտիկ լինելով Մեծ Թագուհուն և արքայորդիներին նույն բանի մասին խոսում են Մեծ Տիկնոջ և այն մեծամեծներին, որոնք նրանից հետո եկել էին Ալանաց աշխարհից Հայաստան:

Աստված իսկ լուսավորում է նրանց մտքերը ընդունելու կյանքի խոսքը: Իսկ Սրբերից մեկը, որ քահանայական ձեռնադրություն էլ էր ստացել, իբր տեսնում է նրանց կատարյալ՝ հաստատ սերը դեպի նոր հավատը, գիշերանց նրանց տանում է մերձակա գետի ափը և մկրտում քրիստոնեական լուսավորությամբ, նրանց անունները գրելով կյանքի դպրության մատյանում, արժանի է դարձնում ընդունելու Ս. Հոգու շնորհները:

Պատահած այս իրադարձությունների մասին իմանում են Թագուհու որդիները, որոնք մեծ ցասումով և թշնամությամբ լցված դեպի սրբերը, նրանց հալածում են և վռնդում պալատից: Իսկ Սրբերը ուրախությամբ թողնում են արքունիքը և գնում են ապրելու իրենց ճգնարաններում: Աստված այնուհետև լուսավորում է Սրբերի մտքերը խորապես հասկանալու կյանքի խոսքերը և հետևելու այլ սրբերի օրինակին և օրինակելի կյանքին, կորանալու և ամրապնդվելու իրենց նոր հավատի մեջ:

Այդ սրբերը նախապես փառավոր ու հլոր մարդիկ էին և պատերազմական գործերի մեջ հաջողակ ու առաջինը: Այս մասին լսելով Արտաշես թագավորի որդիները՝ Վնոն ու Զրոն խնդրում են սրբերին հրաժարվել Քրիստոսի երկրպագությունից: Իսկ սրբերը լսելով այդ մասին երբեք չեն համաձայնվում կրկին դառնալ դեպի հեթանոսություն:

Այնուհետև թագուհու որդիները իմանալով սրբերի անհողդողդ հաստատամիտ այս վճռականության և նրանց հավատի անսասանության մասին մարդիկ են ուղարկում սրբերից յուրաքանչյուրի ճգնարանը նրանց պալատ բերելու, խոսելու և ստիպումով համոզելու, որ հրաժարվեն Քրիստոսի երկրպագությունից: Իսկ սրբերը անվախորեն առավել ևս ամրապնդվում են իրենց հավատի մեջ և հետո դառնալով իրենց մենարանները թաքնվում են:

Այնուհետև սրբերի այս անխորտակելի վճռականությունն ու երկու կողմերի անվիջող մտադրությունը կատաղեցնում են հակառակորդներին, որոնք և քաջալերվում էին թագուհուց: Իսկ երբ սուրբ Խրյուսոսը իր ընկերներով գալիս հասնում են իրենց ճգնարաններին, դեռ ներս չմտած իսկույն ձերբակալվում են և գլխատվում իրենց ճգնարան խրճիթների առաջ:

Երբ մի որոշ ժամանակ անց սրբերի նահատակության մասին լսում են ողջ մնացած նրանց ընկերները և գլխի ընկնելով, որ իրենց ազգական Սաթենիկ թագուհին իրենց հետ չի վարվում այնպես ինչպես առաջ՝ անցյալում և որպեսզի փորձությունների վրտանգի չենթարկվեն, միմյանց հետ խորհրդակցելով, համակարծիք են լինում և որոշում՝ բաժանվել միմյանցից, Սուրբ Հոգուց թելադրված ապա նրանք գտնում են ճգնավորական իրենց նախկին սովորությամբ կրոնավորվում են Զրաբաշխ կոչված լերան վրա մի հորդառատ աղբյուրի մոտ, ուր և ապրում են քառասունվեց տարիներ:

Սաթենիկ թագուհու մահից հետո, Ալանաց աշխարհից մարդիկ են գալիս Հայոց արքունիքը, ծանոթանում են թագուհու որդիների հետ և բարեկամություն հաստատում նրանց հետ:

Ալան հյուրերը Հայոց արքունիքում լսում են իրենց արենակից սրբերի մասին հարց ու փորձ անելով՝ գտնում իրենց ճգնարան-խրճիթները, հրապուրիչ խոստումներով և համոզիչ խոսքերով, աշխատում են վերադարձնել նրանց պալատ: Բայց տեսնելով սրբերի հավատի հաստատամտությունն ու նրանց անվիջող մտադրությունը, սրբերի վարմունքը իրենց համար թշնամանք ու վիրավորանք համարելով, սրախողխող են անում 15 սրբերի և նրանց մարմինները գցում մերձակա մի վիհի մեջ և դրանց վրա կուտակում քարերի մի կարկառ: Նահատակված սրբերի մարմինները այդպես քարերի տակ թաղված մնում են մինչև Մեծն Գրիգորի ժամանակը, երբ նա Սուրբ Հոգու ազդեցությամբ իմանում է այդ մասին, գալիս ու վկայարան է կառուցում սրբերի աճյունների վրա և Աբաս անունով իր աշակերտներից մեկին պահապան քահանա է կարգում այդ վկայարանի վրա:

Իսկ նահատակված սրբերից երկու հոգի, որոնք տարիքով ավելի փոքր էին, բայց երբեք չէին վախենում սրով սպանվելուց, իրենց մանկական հասակի բերումով թաքնվում են լերան ծերպերի մեջ:

Մի քանի օր հետո, նրանք վերառադնում են սրբերի նահատակության վայրը, բայց նրանց մարմինները չեն գտնում, այլ միայն նրանց նահատակության վայրն ու նրանց թափված արյունը, որը ծածկում են հողով և սրբերից յուրաքանչյուրի տեղվույն վրա քարե նշան են կանգնեցնում:

Այս բոլորից հետո նրանք չեն համարձակվում մնալ նույն վայրում, գնում են դեպի արևմուտք, նույն լեռան ստորոտի հարավային կողմը և այնտեղ գտնելով բնակության բարեխառն մի դաշտաբերան, որի հարավային կողմում բխում էին աղբյուրներ ու այնտեղ էլ նրանք հաստատում են իրենց բնակա-

վայրը, տեղանքի գեղեցկության պատճառով: Այնտեղ նրանք իրենց ապահովության համար բարի մի տեղ գետնափոր, արգելանոց հանգստարաններ են շինում, որտեղ և ապրում են մինչև իրենց նահատակության օրը:

Այնուհետև, մի քանի հովիվներ գտնելով նրանց մարմինները, թաղում են դարափոսերում որպես աշխարհից վարակված հիվանդների մարմինները:

Մի փոքր ժամանակ անց, Վաղարշ մի թագավորը նույն տեղի վրա կառուցում է իր անունով Վաղարշակերտ ավանը, և որտեղ իր որդուն է բնակեցնում, տեղանքի բարեխառն եղանակի համար:

Իսկ Զրաբաշխ լեռը սրբերի գլխավորի՝ Խրյուսոսի, Սուքիասի կոչվում է Սուկավ, սրբերի անմոռաց հիշատակի համար:

Մինչև այսօր նույն այդ հողում երկու սրբբեդի անունով ցավերի բուժումներ են կատարում, շնորհիվ մեր Տեր Հիսուս Քրիստոսի, որին, Հոր և Սուրբ հոգուն, փառք, պատիվ և զորություն, հավիտյանս հավիտենից. ԱՄԵՆ:

ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ.





ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍԱՐԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ



ՎԱՆԱՏԱՆ ԸՆԴՈՒՆԱՐԱՆ-ԴԱՀԼԻՃԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱԶԿԱԹՈՌԸ



«ԲԱՐԵԶԱՐԴԵՑԱԻ ԴԱՀԼԻՃՍ ՈՃՈՎ ՀԱՅԿԱԿԱՆ»

ՍՈՒՐԲ ՀՌԻՓՍԻՄԵԻ ՎԱՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱՐԱՆ-ԴԱՀԼԻՃԻ ԲԱՐԵԶԱՐԴՈՒՄԸ

Գրիգոր Խանջյանը վերջին տասնամյակում ստեղծագործական աշխատանք է կատարել կիրառական արվեստի բնագավառում: Նա հատուկ վերաբերմունք ունի դեպի փայտի գեղարվեստական մշակումը: Նրա էսքիզներով են պատրաստվել Գեղարդի վանքի և Երևանի Ս. Սարգիս եկեղեցու դռները, որոնցում ստեղծագործաբար լուծված են ազգային կարդարվեստից ընտրած մանրամասների կուգորդումները: Նկարիչն ունի նաև ճարտարապետության և նրա հատվածների միասնական զգացողություն, արվեստի և ճարտարապետության համադրության զգացողություն:

Ճարտարապետության և փայտի գեղարվեստական փորագրության ծանոթագրության օրինակներ նա արդեն ստեղծել էր Երևանում բացված փայտարվեստի ցուցասրահում և այլ վայրերում: Նրա էսքիզները նորովի հնչեցին նյութի վրա, երբ բարձրաքանդակի, ցածրաքանդակի և գծային փորագրությունների շնորհիվ այդ իրերը ստացան լուսաստվերային ու գունային արտացոլումներ: Փորագրող վարպետներ Ռ. Տեր-Թադևոսյանը և Վ. Կարապետյանը գտան իրենց նկարչին, իսկ Գ. Խանջյանը՝ իր փորագրիչ-վարպետներին:

Գրիգոր Խանջյանը ստեղծեց նաև ժամանակակից հայկական կահույքի էսքիզներ Ս. Հռիփսիմեի բակում գտնվող վանատան ընդունարան-դահլիճի համար:

Սա այն շենքն է, որ կառուցել է Խրիմյան Հայրիկը և որտեղ տարբեր ժամանակներում ապրել են հայ անվանի դեմքեր, այդ թվում Գարեգին վարդապետ Հովսեփյանը, Վարդգես Սուրենյանցն ու Մարտիրոս Սարյանը:

Ընդունարան-դահլիճի դռների բացվածքից այցելուի հայացքն ընկալում է բոխարիկը, ինչպես նաև կենտրոնական սեղանն ու նրա ջուրջը դասավորված չորս աթոռները: Աջ պատի տարածքը երեք բաժանում ունի. անկյուններում՝ բազմոցներ փոքր սեղաններով և փոքր աթոռներով, իսկ մեջտեղում՝ հենակավոր բազմոց: Կահույքի տեղաբաշխման հետ անհրաժեշտ էր գտնել նաև յուրաքանչյուր իրի ձևը, այդ ձևի կապը ինչպես հարևան դարձած այլ իրի, նույնպես և հյուրասենյակի ընդհանուր կահավորման հետ: Անհրաժեշտ էր գտնել յուրաքանչյուր իրի չափը, նրա հարաբերությունը մյուս իրերի չափի հետ, ինչպես նաև՝ ձևավորման սկզբունքները: Գ. Խանջյանը կարողացավ իր նախանկարներում գտնել նաև յուրաքանչյուր իրի ինժեներական կառուցվածքը, որը խարսխված էր նրանց առանձին հատվածների համամասների միասնականության վրա: Եթե պատերին փակցված թարեքներն ու գդալամանները զուտ դեկորատիվ նշանակություն ունեին, իսկ դա թելադրում էր նրանց հարդարանքի զարդամոտիվների տեսականին, ապա աթոռները, սեղաններն ու բազմոցները զուտ ուտիլիտար նշանակություն ունեն, և սա էլ նրանց ձևավորման հիմքն էր: Նկարիչը մեծ ուշադրություն է դարձնում հենակներին, աթոռներինը՝ հարթ են, իսկ բազմոցների հենակների ձևավորումը թելադրված է նստողների քանակից. երեք մարդ, որոնց մեջտեղում ընկած տարածության վրա տեղավորված են խաչքարերը հիշեցնող զարդավահանիկներ: Սրանք կրկնվում են նաև պահարանի դրո-

ների վրա, բակկաթոռների ու աթոռների հեակների վերևում, բակմոցների ցածի մասերում: Փայտի ողորկ մշակումներում օգտագործված է կիսափայլեցումը: Նկարչի շարադրությունից դուրս չի մնացել ոչ մի հատված: Անգամ իրերի ոտքերը մշակված են տվյալ իրի գեղարվեստական կերպարի շրջանակներում, նրա համամասնությունների ստեղծման սկզբունքների ոլորտներում:

Այստեղ է ահա, որ բարձր գնահատական պետք է տալ փայտը մշակող վարպետների աշխատանքին: Ռուբեն Տեր-Թադևոսյանն ու Վլադիմիր Կարապետյանը իրենք են ընտրել կաղնու փայտը, իրենք են չորացրել, իրենք են մշակել ու ձև տվել նրա յուրաքանչյուր հատվածին: Մշակել են սիրով, պատասխանատվության մեծ զգացումով, գործի խոր իմացությամբ: Աչք են ջոյում իրերի կորագծերը, նրանց հստակ ուրվագծային շեշտադրումները, միատարր ու միասնական հղկված տարածքները, զարդաքանդակների նրբագույն մշակվածությունը, փայտի ֆակտուրայի զգացողությունը:

Գունային առումով, ընդհանուր ձևավորման մեջ, որտեղ կարևոր դեր են խաղում պատերի սպիտակը, փայտի շագանակագույն երանգներն ու երկաթի սևը, առաջնահերթ նշանակություն են ստանում նաև երեսապատման համար ընտրված կանաչ-դեղնագույն ընտիր թավիշը և հատակին գցած գորգերի գունագեղությունը: Այս ամենը ստեղծում են այնօրինակ հարմարավետություն, որը շատ անհրաժեշտ է հյուրասենյակին:

Գրիգոր Խանջյանը ստեղծեց «ավանդույթ և արդիականություն» ոճական ազգային կահույքի օրինակները:

Սբ. Հռիփսիմեի վանատան ընդունարանդահլիճի բարավորի վրա տեղադրված փայտին փորագրված է.

«Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԲԱՐԵԶԱՐԴԵՑԱՒ ԴԱՀԼԻՃՍ ՈՃՈՎ ՀԱՅԿԱԿԱՆ Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ. ՌՆԼԱ»:

ՄԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ





ԸՆԴՈՒՆԱՐԱՆ-ԴԱՀԼԻՃԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՊԱՏԸ



ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԱՐՈՒՃԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԵՎ ԹԱԼԻՆԻ ԿԱԹՈՂԻԿԵ ՏԱՃԱՐՆԵՐԻ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԸ

Արուճի Ս. Գրիգոր և Թալինի Կաթողիկե տաճարները VII դարի հայկական ճարտարապետության գոհարներից են: Երկուսն էլ կառուցվել են հայոց իշխանների պատվերով և իրենց բնորոշ ծավալայնության ու կոթողայնության հետ մեկտեղ եղել են ըստ ամենայնի «գեղեցիկ վայելչութեամբ վարդարեալ»[1]: Ժամանակին այս տաճարների ինտերիերը շքեղորեն վարդարող որմնանկարներից այժմ միայն մեծ ու փոքր հատվածներ են պահպանվել: Այդուհանդերձ Արուճի և Թալինի որմնանկարները հայկական մոնումենտալ գեղանկարչության հուշարձանների շարքում առաջնակարգ տեղ են գրավում: Պահպանվածության աստիճանը թույլ է տալիս մասնակիորեն վերականգնել նրանց պատկերագրական կառուցվածքը, դատել՝ գեղարվեստական արժեքի մասին: Այս որմնանկարները, Լմբատավանքի Ս. Ստեփանոս եկեղեցու որմնանկարի[2] հետ միասին, որոշակի պատկերացում են տալիս VII դարի հայ ճարտարապետության բուռն կարգացմանն ուղեկցող որմնանկարչության արվեստի վերելքի և այն աշխույժ գեղարվեստական միջավայրի մասին, որի արդյունքն են իրենք:

Արուճի Ս. Գրիգոր տաճարը կառուցվել է Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանի օրոք՝ նրա աթոռանիստում «ի գաւառն Արագածոյ ոտին, ի յաւանն Արուճ՝ տաճար փառաց անուան Տեառն»[3]: Այն հիմնադրվել է 661 թ. «հիմնարկեցաւ Սուրբ Կաթողիկէս ի ձեռն Գրիգորի Մամիկոնենի»[4] և հանդիսավոր պայմաններում օծվել 666թ. «ի հինգերորդ ամի Անաստասայ»[5] հայոց Անաստաս Ակոռեցի կաթողիկոսի ձեռքով, որի ժամանակ կատարվել է Դավիթ Դվինեցու մկրտությունը[6]:

Գեղեցկաշեն տաճարը սկզբնապես ունեցել է որմնանկարներ: Դրանով իսկ Արուճի

[1] *Ղևոնդ*, Արշաւանք արաբաց ի Հայս, Փարիզ, 1857, էջ 35: Պատմիչի խոսքերը վերաբերում են Արուճի որմնանկարին:

[2] *Կ. Մաթևոսյան*, Լմբատավանքի Ս. Ստեփանոս եկեղեցու որմնանկարը, «Էջմիածին», 1982, Դ, էջ 53—55:

[3] *Ղևոնդ*, նույն տեղում:

[4] Մեջբերված հատվածը Արուճի տաճարի ջինարարական արձանագրությունից է:

[5] *Կիրակոս Գանձակեցի*, Պատմություն հայոց, Երևան, 1964, էջ 62:

[6] *Մաղաքիա արքեպ. Օրմանյան*, Ազգապատում, Կ. Պոլիս, 1912, էջ 776—777;

որմնանկարը VII դարի հայկական մոնումենտալ գեղանկարչության հուշարձանների մեջ առաջինն է, որը թվագրվում է կոնկրետ՝ 666 թվականով[7]: Որմնանկարի մյուս կարևոր առանձնահատկությունն այն է, որ նրանում պահպանվել է նկարիչ արվեստագետի անունը ինքնագրով: Սակայն անկախ դրանից մեծ է Արուճի որմնանկարի պատմամշակութային և գեղարվեստական արժեքը՝ այն «նոր և կարևոր էջ է հայկական գեղարվեստական մշակույթի զարգացման պատմության մեջ»[8]:

Արուճի Ս. Գրիգոր տաճարի ներքին բոլոր պատերը նկարազարդ են եղել, սակայն այժմ որմնանկարից պահպանված հատվածները միայն Ավագ խորանի գմբեթարդում և նրան հարող, խորանի ձախ պատի վրա են: Գմբեթարդում ներկայացված է եղել «Օրենք տվող Աստծու» պատկերագրական հորինվածքի և Ավետարանում շարադրված «Համբարձման» տեսարանի համատեղումն հանդիսացող կոմպոզիցիա[9]: Որմնանկարի կենտրոնում շքեղազարդ պատվանդանի վրա կանգնած Քրիստոսի մեծադիր պատկերն է, որի ձախ ձեռքին ոլորաններով ցած իջնող մագաղաթազալար կա: Վերջինս ծածկված է Հովհաննու Ավետարանից վերցված քաղվածքով (գլ. XIV տուն 21): Պատկերի միայն ստորին մասն է պահպանվել: Քրիստոսի պատկերից ցած, պատվանդանի մոտից անցնում է ամբողջ խորանը երիզող լայն, խոշոր ականթազարդերով զարդագոտին՝ կատարված հայ հելլենիստական արվեստի ավանդներով և գեղարվեստական մեծ վարպետությամբ: Ավելի ներքև Ավագ խորանի երկու կողմի պատերին պատկերված են եղել ձեռքերին գրքեր պահած առաքյալները: Պահպանվել են միայն նրանցից վեցի պատկերները, հյուսիսային կողմի պատի վրա: Քրիստոսի պատվանդանի տակ գրված է նկարչի մակագրությունը «Ստեփանոս ն[կ]ա[ր]եաց»: Փաստորեն Ստեփանոսը VII դարից հայտնի հայ առաջին նկարիչն է, որի անունն ու գործը հասել են մինչև մեր օրերը:

Պատկերագրությամբ Արուճի որմնանկարը նմանություն ունի վրացական Ցրոմի տաճարի յոթերորդդարյան խճանկարի հետ[10]: Ն. Քոթանջյանի կատարած գունային վերլուծությունը պարզում է որմնանկարի տոնայնության, գունային կառուցվածքի բնույթի, պատկերի տարածական բնութագրի մի շարք ինքնատիպ կողմերը[11]: Որմնանկարի վրա եղած գրությունները (մագաղաթազալարի և Ստեփանոսի մակագրության) ունեն հնագրական մեծ արժեք:

Արուճի Ս. Գրիգոր տաճարը աչքի է ընկնում հսկայածավալ, միասնական և տպավորիչ ներքին տարածությամբ: Վերջինս փառահեղ որմնանկարի շնորհիվ ձեռք է բերում առավել շեշտված հանդիսավորություն և վեհություն: Ավագ խորանի գմբեթարդում նկարված Քրիստոսի պատկերը շուրջ յոթ մետր բարձրություն է ունեցել, նրա աջ և ձախ կողմերում հավանաբար եղել են այլ խոշոր պատկերներ, սակայն այդ մասում ծեփը լրիվ թափվել է:

Մովսես Կաղանկատվացու «Պատմության» մի հատվածից երևում է, որ Արուճի որմնանկարը մեծ տպավորություն է թողել ժամանակակիցների վրա: Պատմիչը նկարագրում է, թե ինչպես Աղվանքի իշխան Ջվանշիրը այցելում է Արուճ և հանդիսավորությամբ ընդունվում Գրիգոր Մամիկոնյանի ու Անանուն կաթողիկոսի կողմից: Այդ ժամանակ Ս. Գրիգոր տաճարն արդեն կառուցված էր և բնականաբար Ջվանշիրը տեսել է այն, որմնանկարներով զարդարված: Վերադառնալով իր երկիրը, Կաղանկատվացու վկայությամբ Ջվանշիրն անմիջապես գնում է Գարդմանում իր կառուցած տաճարը և «...սկսեց թանկագին նյութեր գործադրել նրա հրաշագեղ անպատմելի պայծառությունը զարդարելու համար: Մեծ ծախսեր անելով նկարիչներ գործի դրեց և գմբեթից մինչև դռան բարավորները նկարեց և պաստառեց կերպասներով, իսկ տաճարի դուռը... արծաթապատեց և հրաման տվեց քանդակազարդել»[12]: Ջվանշիրը տաճարը կառուցել էր ավելի վաղ և չէր որմնանկարազարդել, չէր դրել նաև արծաթե քանդակազարդ դուռ: Այդ ամենը նա անում է Արուճից վերադառնալուց հետո: Նշանակում է, Աղվանքի տերը Գրիգոր Մամիկոնյանի կառուցած տաճարում տեսել էր այդպիսի կամ նման մի բան: Իսկ թե ինչպիսի տպավորություն էր թողել Արուճի շքեղա-

---

[7] *Կ. Մաթևոսյան*, Արուճի տաճարի 666 թ. որմնանկարը, «ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր», 1981, № 3, էջ 85—92:

[8] **Л. Дурново.** Стенная живопись в Аруче, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1952, № 1, էջ 66:

[9] **Л. Дурново.** Очерки изобразительного искусства средневековой Армении, Москва, 1979, стр. 142.

[10] **Ш. Амиранашвили,** История грузинской монументальной живописи, Сахелгами, 1957, стр. 23—30, табл. 5.

[11] **Н. Котанджян,** Цвет в раннесредневековой живописи Армении, Ереван, 1978, стр. 45.

[12] *Մովսես Կաղանկատվացի*, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969, էջ 153:

կարդ տաճարը Զվանշիրի վրա, երևում է պատմիչի այն խոսքից, թե իշխանը իր կառուցած տաճարը կարդարել է տալիս վերադառնալուց հետո «իսկ և իսկ»[13]:

Այժմ էլ Արուճի Ս. Գրիգոր տաճարի որմնանկարը գեղագիտական հաճույք է պատճառում դիտողներին իր երբեմնի լուսապայծառ շքեղության հպոր արձագանքով: Այն հայ վաղ միջնադարյան արվեստի ամենավառ էջերից մեկն է, ստեղծված տաղանդավոր արվեստագետի՝ Ստեփանոս նկարչի ձեռքով: Հնարավոր է, որ նույն Ստեփանոսը նկարապարդած լինի նաև Եղվարդի մոտ Գրիգոր Մամիկոնյանի կառուցած Ս. Զորավար եկեղեցին, որի որմնանկարից միայն աննշան հատվածներ են պահպանվել:

Թալինի Կաթողիկե տաճարը Արուճի Ս. Գրիգոր տաճարի ժամանակակիցն է, սակայն եթե վերջինիս կառուցման և կառուցողի վերաբերյալ վիմագիր և մատենագրական առատ տեղեկություններ կան, ապա առաջինի մասին այդպիսիք առայժմ բոլորովին հայտնի չեն: Մասնագիտական գրականության մեջ Թալինի մեծ տաճարի և՛ կառուցման ժամանակը, և՛ կառուցողը տրված են ենթադրաբար[14]: Կանգ չառնելով այդ հարցի վրա, անդրադառնանք տաճարի պատերը զարդարող որմնանկարներին, որը, ինչպես և բուն կառույցը, անկասկած VII դարից է:

Թալինի տաճարը մեծապես տուժել է 1840 թ. երկրաշարժից, որի ժամանակ փլվել են հարավային և արևմտյան պատերը, ընկել է գմբեթը: Դժբախտաբար մինչև երկրաշարժը և անգամ դրանից հետո տաճարի որմնանկարները տեսնողներից ոչ մեկը որևէ որոշակի նկարագրություն չի թողել: Ինչպես հաղորդում է Հ. Ղ. Ալիշանը, մի իտալացի ճանապարհորդ 1694 թ. լինելով Հայաստանում, Թալինի տաճարում տեսել է «նկարս պատկերաց Առաքելոց»[15]: Իսկ Հովհ. եպիսկ. Շահխաթունյանցը, որը բավական մանրամասնորեն նկարագրել է հարյուրավոր հուշարձաններ և վիմագիր արձանագրություններ, այդ որմնանկարի մասին 1842 թ. գրում է միայն՝ «նշմարին հետք նկարուց և տերունի պատկերաց»[16]: Այժմյան դրությամբ Թալինի որմնանկարը անհամեմատ վատ վիճակում է, սակայն ուսումնասիրողներին հաջողվել է մասնակիորեն վերականգնել նրա պատկերային կառուցվածքը:

Լ. Դուրնովոն գրում է, որ Թալինում, Ավագ խորանի գմբեթարդում նույն կոմպոզիցիան է, ինչ որ Լմբատավանքի Ս. Ստեփանոս եկեղեցում, այսինքն՝ Քրիստոսը փառքի մեջ, երկնային ուժերով շրջապատված[17]: Ն. Քոթանջյանը սակայն նկատում է, որ Թալինի որմնանկարում Քրիստոսի փոխարեն ներկայացված է եղել միայն նրա գահը (հետիմասիա)[18]: Այստեղից էլ հետևում է, որ Թալինի որմնանկարն ունի խիստ ուշագրավ պատկերագրություն, որը թեև առնչվում է արևելաքրիստոնեական, ինչպես և հռոմեական շրջանի համանման հուշարձաններին, բայց «պատկերագրական առումով այդ որմնանկարներից ոչ մեկը չի կարելի դիտել որպես Թալինի որմնանկարի նմանատիպ»[19]:

Մեծածավալ տաճարի ներքին պատերը ամբողջությամբ որմնանկարապարդ են եղել: Պահպանված բազմաթիվ մեծ ու փոքր նկարապարդ հատվածները, Ավագ խորանում և շրջակա պատերի վրա են: Ավագ խորանի գմբեթարդում ներկայացված տեսարանից պահպանվել է Տիրոջ գահի պատկերի աջ եզրը, բարձիկով և վրան դրված գրքով[20]: Կենտրոնական պատերի երկու կողմերում նկարված են եղել քառակերտեր (տետրամորֆ): Հատվածաբար պահպանվել են նրանց հսկայական ճերմակ թևերը՝ ծածկված աչքերով: Ներքևում, մեծ լուսամուտների հավասարությամբ տեղադրված են եղել ամբողջ հասակով կանգնած առաքյալների խոշոր պատկերները: Հավանորեն հենց վերջիններիս մասին է հիշատակել իտալացի ճանապարհորդը: Ավագ խորան տանող կամարի վրա նկարված են տասնմեկ մեդալիոններ սրբերի դիմապատկերներով, իսկ կենտրոնական մեդալիոնի շրջանակում հավասարաթև խաչ է պատկերված: Խորանի հարավային պատին դեռ նշմարվում է «Մուտք Երուսաղէմ» տեսարանի ուրվագիծը: Որմնանկարի

[13] Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 225:

[14] **Ս. Արտյունյան, Ս. Սաֆարյան,** Памятники армянского зодчества, Москва, 1951, стр. 45, **Н. Токарский,** Архитектура Армении IV—XIV вв. Ереван, 1961, стр. 103—104. *Ս. Ստեփանյան, Թալինի Կաթողիկե եկեղեցի,* ՀՍՀ, հ. 5, Երևան, 1979, էջ 163—164:

[15] *Հ. Ղևոնդ Ալիշան,* Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 141:

[16] *Յովհ. եպիսկ. Շահխաթունեանց,* Ստորոգութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. երկրորդ, Էջմիածին, 1842, էջ 64:

[17] **Լ. Дурново,** Краткая история древнеармянской живописи, Ереван, 1957, стр. 10.

[18] **Н. Котанджян,** նշվ. աշխ., էջ 14:

[19] **В. Пуцко,** Иконографические схемы армянских алтарных росписей VII века (истоки и параллели). «Պատմա-բանասիրական հանդես», 1980, № 3, էջ 150—151:

[20] **Н. Котанджян,** նշվ. աշխ., էջ 14, նկ. 41, 42:

մյուս հատվածներում պահպանվել են երկու հեծյալների պատկերներ, նշմարելի են շինությունների մասերի, մարդկային ֆիգուրների և այլ պատկերների մնացորդներ: Հիշարժան է, որ Թալինի տաճարի ոչ միայն ներսը, այլև արտաքին հարդարանքի որոշ մասեր եղել են գունապարդված. «ներկված են եղել և՛ քիվերը, և՛ լուսամուտների պսակները: Որոշ տեղերում կարմիր և սպիտակ ներկի հետքեր կարելի է տեսնել նաև այսօր»[21]:

Թալինի որմնանկարի վրա պահպանվել է մի ուշագրավ արձանագրություն, ուր նշվում է տաճարը նկարապարդել տալու և որմնանկարի պատվիրատուի մասին: Այն առաջին անգամ հրատարակել է Գարեգին վարդապետ Հովսեփյանը: «Թալինի Մայր եկեղեցու ձախ աւանդատան պատին,—գրում է նա—եղել են երկու արձանագրութիւն՝ որմնանկարների մասին՝ ծեփի վրայ, տարաբախտաբար մեկը բոլորովին փչացած է, իսկ միւսը կիսով չափ»[22]: Պահպանված արձանագրությունը հետևյալն է. «ԵՍ ՄՈՎՍԷՍ ՆՈՒԱՍՏ ԵՒ ԱՆԱՐԺԱ[Ն] ԵԿԵՂԵՑԱՊԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԵՏՈՒ ԿԵՆԴԱՆԱԳՐԵԼ ԶՍՈՒՐԲ ԿԱԹՈ[ՂԻ]ԿԷՍ Ի ԲԱՐԵԽԱ[ԻՍ]ՈՒԹԻՒՆ ԻՆՁ ԵՒ ԾՆ...»[23]:

Թալինի Կաթողիկե տաճարը աչքի է ընկնում իր հանդիսավոր և տոնական տեսքով, շքեղ հարդարանքով, այն ամենայն հավանականությամբ կառուցվել է հայ իշխաններից մեկի կողմից: Բայց տաճարը որմնանկարապարդել է տվել Մովսես եկեղեցապանը, որի մասին և գրվել է վերոհիշյալ եպակի արձանագրությունը, հենց որմնանկարի ծեփի վրա: Թալինի որմնանկարը կարող էր նկարված լինել շինարարական աշխատանքների անմիջական ավարտից հետո, կամ մի փոքր ավելի ուշ, սակայն ոչ ուշ VII դարի 80—90-ական թվականներից, որովհետև դրանից հետո սկսված քաղաքական խառնակ վիճակը և խալիֆաթի բռնի քաղաքականությունը բավական երկար ժամանակ կասեցրին հայ արվեստի վարգացումը:

Հայկական վաղ միջնադարյան որմնանկարները, որոնք պահպանվել են հիմնականում VII դարի եկեղեցիներում, անգնահատելի արժեք են ներկայացնում հայ արվեստի պատմության ուսումնասիրության համար: Նշված պատմաշրջանում հայ իրականության մեջ որմնանկարչության արվեստի վարգացման մակարդակի մասին կարելի է դատել ելնելով թեկուզ այն փաստից, որ աշխարհագրական համեմատաբար փոքր տարածության վրա մենք տեսնում ենք Լմբատավանքի, Թալինի և Արուճի որմնանկարների պատկերագրական և կառուցվածքային յուրօրինակություններ, գունային տարբեր լուծումներ, գեղարվեստական մտածելակերպի բազմազանություն: Որմնանկարչության արվեստի ծաղկումը, որը նախ և առաջ պայմանավորված էր հայկական ազգային մշակույթի ընդհանուր վերելքով և սերտորեն կապվում է ճարտարապետության աննախադեպ վարգացման հետ, հայ որմնանկարիչների բարձրարվեստ և ինքնատիպ ստեղծագործությունների շնորհիվ ձեռք է բերում առանձին արժեք և ուրույն նշանակություն հայ և արևելաքրիստոնեական արվեստի պատմության մեջ:

---

21 Ակնարկ հայ ճարտարապետության պատմության, Երևան, 1964, էջ 168:

22 *Գարեգին վարդապետ Յովսեփեան*, Գրչութեան արուեստը հին հայոց մէջ, մասն Գ, Քարտէզ հայ հնագրութեան, Վաղարշապատ, 1913, էջ 22, տախտակ ԺԵ:

23 Նույն տեղում:



ՎԻԿՏՈՐ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ

ԱՊԱՐԱՆՅԱՆ ԵՐԿՈՒ ՆՈՐ ՁԵՌԱԳԻՐ

Ապարանի շրջանի ներկայիս բնակչության նախնիները հիմնականում 1830-ական թվականների սկզբներին Պարսկահայաստանից և Արևմտյան Հայաստանից ներգաղթածներն են: Նրանք իրենց հետ Ապարան են բերել նաև մեծ թվով ձեռագրեր, որոնց մի զգալի մասը տարբեր պատճառներով անհետացել-ոչնչացել է, մի մասը տարբեր ժամանակներում մուտք է գործել Հայաստանի մայր ձեռագրապահոց՝ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, մի մասն էլ մինչև օրս գտնվում է մասնավոր անհատների մոտ:

Տարիներ շարունակ մենք Ապարանում փնտրում ենք ձեռագրեր: 1981 թվականին հայտնաբերված ձեռագրերը հրատարակեցինք:[1] Հրատարակված շարքի մեջ մտնում են 13—19-րդ դարերի 15 ձեռագրեր, որոնցից վեցը Ավետարան էր, մեկը՝ Աղոթագիրք, ութը՝ Համայիլ:

Ձեռագրերից հնագույնը 13-րդ դարի մագաղաթյա Ավետարանն է (հրատարակված ցուցակում՝ № 1), որ պատկանում է Ապարան ավանի բնակիչ Սենո Մուրադյանին: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Վայոց ձորի գրչության օջախներից մեկում, Մամասի վանքում, 13-րդ դարի վերջին կամ 14-րդ դարի սկզբներին ընդօրինակված Ավետարանը (№ 2), որ պատկանում է Մելիք գյուղի բնակիչ Մեսրոպ Կարապետյանին:

Ավետարաններից երկուսը՝ Կորդովաց երկրի Ալմալավայ գյուղում 1672 թվականին ընդօրինակվածը (№ 4) և նույն դարի 60—70-ական թվականներին Վասպուրականում ընդօրինակվածը (№ 6), զարդարված են տերունական մանրանկարներով և խորաններով: Դրանցից առաջինը արտագրել և նկարազարդել է գրիչ և մանրանկարիչ Հերապետը, երկրորդը նկարազարդել է մեր մատենագրությանը քաջ հայտնի Սահակ Վանեցի ծաղկողը, որն ստեղծագործել է 1662-1675 թվականներին Վանում, Բաղեշում, Մուշում:

Խիստ արժեքավոր են նորահայտ ձեռագրերի հիշատակարանները, որոնք թույլ են տալիս լրացնելու արդեն հայտնի պատմական որոշ փաստեր, առաջին խոսք են գրչօջախների, մշակութային կենտրոնների մասին: Հիշատակարաններից իմացվում են ձեռագրերն ընդօրինակող տասնյակ գրիչների, դրանք պատվիրողների անուններ:

1981 թվականի կեսերին Ապարանում հայտնաբերել ենք ևս երկու ձեռագիր, որոնց համառոտ նկարագրությունը և հիշատակարանները ստորև ներկայացնում ենք:

1

ԱՎԵՏԱՐԱՆ

(Պատկանում է Ապարան ավանի բնակիչ Արտավազդ Աշոտյանին)

Նոնուս գյուղ (ներկայումս Աբովյանի շրջանում) **1114—1665**

Գրիչ՝ Հովհաննես: **Ստացող՝** Բաղդասար: **Թերթ՝** 262: **Նյութ՝** թուղթ: **Մեծություն՝** 15×19: **Գրություն՝** երկսյուն: **Գիր՝** բոլորգիր: **Տող՝** 21: **Մանրանկարչություն-Կիսախորան՝** 4: Լուսանցազարդ՝ բուսական: Զարդագիր՝ հանգուցագիր: Տեքստը գրված է թավ սև

[1] *Վ. Մ. Պետրոսյանց,* Ապարանի շրջանի ձեռագրերը, հնատիպ գրքերը և այլ հնագիտական նյութերը, Պատմա-բանասիրական հանդես, 1981, № 1, էջ 148—167:

ներկով, գլխագրերը՝ կարմիր, կապույտ, կանաչ ներկերով: Դատարկ էջեր՝ 1, 71բ, 193բ, 194ա-բ, 256—262: **Կազմ՝** կաշեպատ տախտակ (ներքուստ որպես աստառ ձգված է նախշազարդ կտավ): **Պահպանակ՝** Ա փեղկի տակ մագաղաթյա 2 թերթ՝ ուղղագիծ երկաթագրով: **Վիճակ՝** վատ: Խոնավությունից որոշ թերթեր գունաթափվել են:

Ընտանեկան ավանդության համաձայն Ա. Աշոտյանի հորեղբայրը ձեռագիրը մեր դարասկզբին գնել է Ապարանի շրջանի Ձըքնաղ գյուղի բնակիչներից, դրա դիմաց տալով մեկ կով:

Հիշատակարան
Գրչի

253բ—255ա. Ամեղապարտ գրիչս **Յովհաննէս** յիշել աղաչեմ և ամուսինն իմ կկնքբոյ,[2] որ կթուղթս կոկեաց և կԱւագ սարկաւագն և կԳօպալ տատն, որ կերակրեին զմեզ յիշեցէք ի Քրիստոս և դուք յիշեալ լիշիք ի տէր և ընդ սմին **զեղիսաբեթն** յիշեցէք ի Քրիստոս հայր:

...Արդ գրեցաւ սուրբ Աւետարանս ի թվականիս հայոց հազար հարիւր և տասն և չորս ամի: Ի հայրապետութեան տեառն սուրբ Էջմիածնայ սրբական **Յակոբ** կաթուղիկոսի և առաջնորդի մերոյ **Բջնոյ** Սուրբ Աստուածածնին երիցս երանեալ և երջանիկ **Մովսէս** քաջ բաբունապետին: Ի թագաւորութեան պարսից փոքր **Շահ Ապասին:** Գրեցաւ ձեռամբ յոգնամեղ և անարուեստ և անիմաստ գրչի **Յովհաննէս** ի դառն և անբարի ժամանակի, ի յերկիրս **յԱրարատեան,** ի գաւառս **Կոտեաց** ի գեօղն, որ կոչի **Նոնուս,** ընդ հովանեաւ սուրբ Նշանիս և սուրբ Սարգսիս և այլ սրբոցս, որ աստ կան հաւաքեալ: Եւ ստացող սուրբ Աւետարանիս քրտ[ն]աջան, հեզահոգի, բարի և գրասեր սրբասնունդ պարոն **Բաղտասար:** Ըստացաւ սուրբ Աւետարանս հալալ վաստակոց իւրոց յիշատակ իւր և ծնօղացն **Էյվազին, Մայրանին** (1 անվան տեղ բաց է թողնված) և զուգակցին **Եդարին** և եղբօրն **Մելքումին** և ամուսնոյն **Եդարին** և **ք[ւ]երցն Դօլվաթ, Ա[ն]թառամ, Եդար:** Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս **զԲաղտասարն** և **զՄելքոնն** և ուստերք և դստերք իւրեանց. **Սարգիս** և **Գասպար, Մարինոս, Գարան, Սառիկ, Հէրիքնազ, Շահնիկար, Խանում, Հոռոմսիմայ, Զուլալ:** Ով սուրբ ընթերցողք յորժամ կարդալով կամ օրինակել մէկ լիաբերան Աստուած ողորմի ասէք և Աստուած ձեզ ողորմեսցի իւր միւս անգամ գալըստեանն: Ամէն, հայր մեր:

Դարձեալ յիշեցէք զվերոյգրեալ արքն աստուծոյ **զԲաղ[տ]ասարն** և զկողակիցն և իւր որդիքն **Այվազն** և կողակիցն իւր **Հէրիքնազն** և իւր որդին **Աղասին** և եղբայրն իւր **Ասատուրն** և **ք[ւ]որքն** իւրեանց **Մայրանն** և **Հեղնարն:** Դարձեալ յիշեցէք **Մելքոնը** և իւր դստերքն և ուստերքն և որդին **Սարգիսն** և կողակիցն **Մայրանն** և դուստրն **Արզուքան, Վարդիթերն** և որդիքն **Յովանէսն** և **Գասպարն** և կողակիցն **Շահնազաթն** և իւրեանց որդիքն **Մանկասարն** և կողակիցն **Վառվառն, Բաղդասարն, Ներսէսն** և իւր կողակիցն **Մայրանն, Յովակիմէն բաբն, Գրիգորն,** դուստրն **Վառվառն, Գոլումն,** և **ք[ւ]որքն Եղիսաբեթն** և **Ուստիանէն** հարսն խանին: Այլ և ամէն աշխատաւորաց և արեանառու մերձաւորաց սորայ յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք: Եւ դուք յիշողքդ յիշեալ լիշիք առաջի Քրիստոսի որուն փառք յաւիտեանս: Ամէն:

Յիշեցէք ի Քրիստոս **զԽանազն, զՄուքիկն:**

Հետագայի

255բ (նոտրգրով). Զվերջին ստացող Աւետարանիս յիշեցէք մաքրայփայլ յաղօթս ձեր ...**Զաքարը,** կողակիցը **Նունուշն. Խաչերը,** կողակիցը **Հոռոմը.** տիրացու **Յարութիւնն,** կողայկիցը **Սըռման. Յոհանէս,** կողակիցը (անունը չի նշվել). **Եփրեմը, Միքայէլը, Միսայէլը** և դուք յիշեալ լիշիք ի Քրիստոսէ, որ է անպրա յաւիտանը: Ամէն:

Թվին ՌՄԺԵ (1766) աւուր պատկերը յունվարի ԺԵ (15) օրը կիրակի:

256ա (նոտրգրով). Զվերջին ստացող սուրբ Աւետարանիս **Եղազարն,** զկողակիցն **Մոզքե խանն,** որդին **Շեղոին,** կողակից՝ ....նին, **Խէչոին** դստերն **Մարթային, Զարդարին, Շաժիկին, Էթարին, (Կիրակոսին),** որ ըստացան զսուրբ Աւետարանս ի հալալ վաստակոց իւրեանց և ետուն յիշատակ ի ձեռն տէր **Մաղաքին.** ի թվին ՌՃԼԴ (1685) ամին: Յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք: Ամէն:

2
ԿԻՊՐԻԱՆՈՍ
(Գտնվում է Վարդենուտ գյուղի Փոքր եկեղեցում)

ՌԺԸ—1569

Գրիչ՝ Մկրտիչ երեց: **Ստացող՝** Էվատ: **Նյութ՝** թուղթ: **Մեծություն՝** 9×700 (ժապավեն): **Գրություն՝** միասյուն: **Գիր՝** բոլորգիր: **Մանրանկարչություն՝** երկու հասարակ սըրբանկար: **Վիճակը՝** բավարար:

[2] Հովհաննես գրչի կնոջ անունը եղբայրագիր ծածկագրով ծածկագրված է: Պետք է կարդալ *Հեղինարն:*

Հիշատակարան
Գրչի

Վերջում, 26 տող. Գիրս ես առնեմ բըժըշկեաց ի կամաւ և հրամանաւն Աստուծոյ, հաւր և որդոյ և սուրբ հոգոյն, սուրբ Մաթէոս, սուրբ Մարկոս, սուրբ Ղուկաս, սուրբ Յոհաննէս, սուրբ աւետարանիչք աւգնական և պահապան լերուք ծառայիցն Աստուծոյ ի **Էվատն** և որդիքն իւր, **Մարգարիտին, Ջանաղին, Սուլթանին** և վաւակացն **Թադոսին** և մի տայք թոյլ հողմոց և ցաւոց դադարել ի գլուխ ծառայիցն Աստուծոյ, ի **Ճապուկին, Յովանիսին, Գրիգորին** և կողակցին՝ **Մարգարտին, Ջանաղին, Սուլթանին,** և վաւակացն **Թադեոսին,** ամէն:

Գրեցաւ սուրբ Կիպրիանոսս ի թվին ՌԺԸ (1569) ձեռամբ մեղաւոր և անարժան **Մըկըրտիչ** իրիցու: Աստուած ողորմի ասացէք նմայ: Ամէն, հայր մեր:



ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴԻՎԱՆ ՀԱՅ ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ

«Դիվան հայ վիմագրության» հերթական Ե պրակը, որը լույս է ընծայել Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը, արժեքավոր նյութեր է պարունակում հայ և հարևան ժողովուրդների Թ—ԺԸ դարերի պատմության, հասարակական ու տնտեսական կյանքի, տեղագրության ու մշակույթի վերաբերյալ: Այն ընդգրկում է պատմական Արցախի՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի և նրա հարևան Լաչինի և Քյալբաջարի շրջանների ու Քուռի աջափնյա՝ Խանլարի, Դաշքյասանի, Շամքորի ու Գետաբակի լեռնային շրջանների ճարտարապետական հուշարձանների վիմագրությունները, որոնք ուսումնասիրվել են հայ և ադրբեջանական գիտնականներից կազմված արձանագրագիտական հատուկ գիտարշավի կողմից:

Ժողովածուում զետեղված են ավելի քան 100 բնակավայրերի ճարտարապետական հուշարձանների 1071 մեծ ու փոքր արձանագրություններ, ինչպես նաև տեղեկություններ այդ բնակավայրերի անցյալի հուշարձանների կառուցման, դրանց հետագա ճակատագրի, ներկա վիճակի մասին: Ուսումնասիրություններից պարզվել է, որ Արցախի տարածքի հուշարձանների ժամանակագրական և ոճական առանձնահատկությունները նույն են, ինչ Հայաստանի այլ վայրերում եղածները: Հուշարձանների մեծ մասն այստեղ շինված է եղել ճեղքված քարերի բեկորներից, որոնք նվազեցրել են արձանագրությունների փորագրման հնարավորությունը: Այդ երևույթը բացասաբար է ազդել հուշարձանների երկարակեցության, առավել ևս ավերումից հետո դրանց բեկորների պահպանման վրա:

«Դիվանի» հեղինակային կոլեկտիվը (խմբագիր՝ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Բ. Առաքելյան, կազմող՝ Ս. Բարխուդարյան) վերծանել, գծագրել, լուսանկարել, անհրաժեշտության դեպքում նաև էստամպահանել է եղած բոլոր արձանագրությունները: Գրքում զետեղված են նաև մի շարք ճարտարապետական կոթողների և արձանագրությունների լուսանկարները: «Դիվանը» արժեքավոր նյութեր է պարունակում պատմաբանների, վիմագետների և հնագետների համար:

ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

«Հայսմավուրք» ժողովածուներն իբրև միջնադարյան գրավոր մշակույթի մի առանձին տեսակ դեռևս չեն արժանացել համակողմանի և խոր ուսումնասիրության: Այս առումով բանասիրական գիտությունների դոկտոր Մայիս Ավդալբեգյանի աշխատությունը առաջին և լուրջ քայլն է մեկանում: Հեղինակի նպատակն է տալ «Հայսմավուրք» ժողովածուների առաջացման ու ձևավորման ընթացքը, ուսումնասիրել նրա խմբագրությունների պրոբլեմը և բացահայտել նրանցում ամփոփված նյութերի ինչպես պատմական արժեքը, այնպես էլ գեղարվեստական առանձնահատկությունները:

Աշխատության առաջին մասում Մ. Ավդալբեգյանը ցույց է տալիս, թե ինչպես է «Տոնամակ», «Ճաշոց» ժողովածուների հիմքի վրա աստիճանաբար ձևավորվել «Հայսմավուրքը»:

Հեղինակը կարողացել է պարզաբանել և վեր հանել չորս խմբագրություններից յուրաքանչյուրի յուրահատուկ կողմերը: Հենց միայն այս հատկանիշների հետազոտությունը հսկայական նշանակություն է ներկայացնում

բազմաթիվ ձեռագրերով հանդիպող այդ ժողովածուների խմբագրական պատկանելությունը կանգնանելու առումով: Աշխատության երրորդ գլխում հեղինակը հետաքրքիր վերլուծություններով ցույց է տալիս «Հայսմավուրք» ժողովածուների գեղարվեստական արժանիքները:

Գիրքը գրված է բանասիրական և գրականագիտական հմտությունների որոշակի մակարդակով, ճիշտ մեթոդաբանությամբ:

ՏԱՇԻՐ-ՁՈՐԱԳԵՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Բագրատունյաց ժամանակաշրջանի պատմությունը համակողմանի ուսումնասիրելու համար կարիք ու անհրաժեշտություն է զգացվում հատուկ քննության առարկա դարձնել նաև այդ թագավորության սահմանների մեջ մտնող առանձին երկրամասերը: Եվ ահա այսօր Տարոնի, Սյունիքի, Վասպուրականի, Խաչենի պատմության հարցերին նվիրված աշխատությունների կողքին մենք տեսնում ենք Ռ. Մաթևոսյանի Տաշիր-Ձորագետի պատմության հարցերին նվիրված փոքրածավալ, բայց գիտական պատշաճ մակարդակով գրված ուսումնասիրությունը:

Վերջին տասնամյակներում Տաշիր-Ձորագետի պատմության հարցերին սովետահայ պատմաբանները (Հ. Մանանդյան, Հ. Հարությունյան, Ս. Երեմյան, Ս. Պողոսյան, Լ. Բաբայան և այլք) անդրադարձել են միայն Հայաստանի պատմության տվյալ ժամանակաշրջանին վերաբերող ընդհանրացնող մեկնաբանություններում ու խոսել հեղինակին հետաքրքրող առանձին առանցքային հարցերի շուրջը: Ռ. Մաթևոսյանը քննաբար օգտագործել է նաև հիշյալ հեղինակների արած մասնակի դիտողությունները:

Ռ. Մաթևոսյանի մենագրությունը արժեքավորվում է և նրանով, որ ի տարբերություն իր նախորդների, հեղինակը ձեռքի տակ է ունեցել վերջին ժամանակներս գիտական շրջանառության մեջ մտած բոլորովին նոր, մասնավորապես վիմագրական և այլ նյութեր, և որ ավելի կարևոր է՝ մանրակրկիտ ուսումնասիրության առարկա է դարձրել երկրամասում տիրող հասարակական-տնտեսական հարաբերությունները: Բացի այդ, հեղինակը շոշափել է պատմա-աշխարհագրական բնույթի մի շարք գիտական ճշտումներ:

Ռ. Մաթևոսյանի «Տաշիր-Ձորագետը 10—12-րդ դ. սկզբին» աշխատության մեջ առաջ քաշված բազմաթիվ գիտական հարցադրումները գտել են իրենց համապատասխան լուծումները, որոնք, անտարակույս, որոշակի ներդրումներ են Բագրատունյաց Հայաստանի պատմության ուսումնասիրության բնագավառում:

ՎԱՐՊԵՏԱՑ ՎԱՐՊԵՏՆԵՐ

Հայ ճարտարապետական միտքը միջնադարում ստեղծել է ճարտարապետական արվեստի համաշխարհային ոչ քիչ գլուխգործոցներ (Երերուք, Հռիփսիմե, Զվարթնոց, Աղթամար, Անիի Մայր տաճար և այլն), սակայն խիստ սակավ դեպքերում է, որ պատմությունը պահպանել է նրանց կերտողների անունները: Այս տեսակետից բացառություն են կազմում 10—14 դդ. թագավորական կամ հզոր իշխանական առանձին տների մեծագործ մի քանի ճարտարապետների անունները:

10-րդ դարում Վասպուրականում Գագիկ Արծրունի թագավորի օրոք շինարարական ծավալուն աշխատանքներ են ձեռնարկվում Ոստան և հատկապես Աղթամար քաղաքներում. այդ աշխատանքները իրականացվում էին Արծրունյաց տան գլխավոր ճարտարապետ Մանուելի անմիջական ղեկավարությամբ, որին պատմիչը անվանում է «իմաստուն և հանճարեղ մարդ»:

10-րդ դ. վերջերին, 11-րդ դ. սկզբներին կառուցողական մեծ աշխատանքներ են կատարվում Բագրատունյաց մայրաքաղաք Անիում (Մայր տաճար, Ս. Գրիգոր «Գագկաշեն» եկեղեցին և այլն) և շրջապատում (Արգինայի տաճար), որոնք իրականացնում է արքունիքի ճարտարապետ Տրդատը:

Հանճարեղ Տրդատին հանձնվեց նաև Կոստանդնուպոլսի 6-րդ դարում ստեղծված Այա-Սոֆիայի նշանավոր տաճարի գմբեթի կառուցումը, որն առ այսօր կանգուն է:

13-րդ դ. վերջերին, 14-րդ դ. սկզբներին Օրբելյան իշխանական տան նշանակալից շատ կառույցների հեղինակը հռչակավոր քանդակագործ, ճարտարապետ ու նկարիչ Մոմիկն էր, որի ճարտարապետական ստեղծագործությունների թվին են պատկանում այնպիսի կոթողներ, ինչպիսիք են Արփայի (Արենիի) եկեղեցին և Նորվանքի հանրահայտ երկհարկանի դամբարան-եկեղեցին:

Աշխատությունը նվիրված է հայ պատմական ճարտարապետության այդ երեք խոշորագույն վարպետների գործունեությանը:

Ստ. Մնացականյանը հանրամատչելի ձևով, սակայն գիտական պատշաճ մակարդակով, քննության է ենթարկում նրանց յուրաքանչյուրի ստեղծագործությունները, ցույց տալիս նրանց նշանակությունը հայ դասական ճարտարապետության մեջ:



ՄԱՀ
ՀԱՅԿ ՊՈՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ
(1906—1982)

Սույն թվականի օգոստոսի 14-ին, շաբաթ օրը, երկարատև հիվանդությունից հետո, կյանքի 76-րդ տարում, վախճանվեց Մայր Աթոռի նախկին դիվանապետ Հայկ Պողոսի Առաքելյանը:

Հանգուցյալը ծնվել է 1906 թվականի նոյեմբերի 23-ին, Թբիլիսիում:

1915 թ. ընդունվել և 1924 թ. ավարտել է Թբիլիսիի Ներսիսյան հոգևոր դպրոցը: Այնուհետև երկար տարիներ կատարել է լրագրական, խմբագրական ու գրական բազմաթիվ աշխատանքներ:

1953 թվականից մինչև վերջին տարիները նա աշխատել է Մայր Աթոռում՝ որպես դիվանապետ:

Հանգուցյալ Առաքելյանը Մայր Աթոռի երկարամյա գործունեության ընթացքում իրեն դրսևորել է որպես բարեխիղճ ու ակնիվ աշխատող և միշտ արժանացել Հայոց Հայրապետի գնահատանքին:

Հանգուցյալի թաղման կարգը կատարվում է օգոստոսի 20-ին, ուրբաթ օրը, Երևանի Ս. Սարգիս եկեղեցում, իսկ հուղարկավորությունը՝ Սովետաշենի գերեզմանատանը, որտեղ, հանուն Մայր Աթոռի աշխատավորության, դամբանական է խոսում «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանը:

Կիրակի օրը, օգոստոսի 22-ին, Էջմիածնի Մայր տաճարում, հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, հանգուցյալ Հայկ Առաքելյանի հիշատակին կատարվում է հոգեհանգստյան պաշտոն: Այնուհետև Հայոց Հայրապետը Վեհարանում բարեհաճում է ընդունել հանգուցյալի այրիին, երեխաներին ու հարազատներին և սփոփանքի ու մխիթարության խոսքեր ասում՝ վեր հանելով նաև Հայկ Առաքելյանի անձնվեր ու օգտակար աշխատանքը Մայր Աթոռում:

Մայր Աթոռում միշտ վառ կմնա Հայկ Առաքելյանի հիշատակը:



«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(АВГУСТ—СЕНТЯБРЬ 1982 г.)

1. Торжества в первопрестольном св. Эчмиадзина по случаю 27-ой годовщины со дня интронизации Его Святейшества Патриарха-Католикоса Всех Армян Вазгена I с 26 сентября по 2 октября (стр. 3—15).

2. Сообщение о пребывании в первопрестольном св. Эчмиадзина престоятеля Ассирийской Православной Церкви Его Святейшества Игнатии Закка I блаженнейшего Патриарха Антохии и всего Востока с 24 сентября по 2-ое октября (стр. 16—17).

3. Сообщение об официальном трехдневном визите в первопрестольный св. Эчмиадзина престоятеля Грузинской Православной Церкви, Его Святейшества Илии II Патриарха-Католикоса всей Грузии с 25-го сентября по 27-ое сентября (стр. 18—19).

4. Сообщение о пребывании в первопрестольном св. Эчмиадзина представителя Англиканской Церкви преосвященного епископа Генриха Хилла и проф. Дональда Шурмана с 7-ого сентября по 14-ое сентября (стр. 20).

5. Священническое рукоположение в церкви св. Саркиса в г. Ереване 12 сентября (стр. 21—22).

6. **Диакон Вардкес Мкртчян:** О торжественном открытии учебного года 1982—83 в Духовной Академии под председательством Вазгена I Патриарха-Католикоса Всех Армян 7-ого сентября (стр. 23—24).

7. Группа заграничных армянских учителей в Эчмиадзинском Католикосате. О посещении Святейшего Патриарха Вазгена I 41 учителя примерно из 16 стран мира (стр. 25).

8. О посещении Эчмиадзинского монастыря французских поломников во главе преподобного отца Рене Жироя, ответственного национального епископского секретариата, действующий за объединение христиан (стр. 26).

9. Церковный амвон, вести. О проведенных литургиях и произнесенных проповедях в Кафедральном соборе и описаний прочих совершенных обрядов в св. Эчмиадзине за август-сентябрь 1982 года (стр. 27—29).

10. Обмен телеграммами между св. Эчмиадзином и конгрегацией Мхитаристов в Венеции по случаю избрании нового настоятеля (стр. 30).

11. Скорбная телеграмма Его Святейшества от 23 сентября 1982 года госпоже Анаит Арутюняну по случаю кончины маршала Оганнеса Баграмяна (стр. 31).

12. Высокая патриаршая оценка. О раздаче милостей Его Святейшеством ряд духовным и светским деятелям Армянской Церкви (стр. 32).

13. **Епископ Нерсес Позапалян:** Таинство Преображении Господне (проповедь, произнесенная в кафедральном соборе) (стр. 33—34).

14. **Диакон Вардкес Мкртчян:** Международное арменоведческое научное собрание в Ереване (стр. 35—37).

15. Описание торжества 70-ой годовщины возобновлении католикосатства Малабарской Церкви в Индии, на котором присутствовали престоятель армянской епархии Грузии епископ Георг Серайдарян и престоятель армянской епархии Австралии и Новой Зеландии епископ Аган Балюзян. По этому случаю имеется послание Его Святейшества от 25 августа 1982 года (стр. 38—40).

16. **Иеромонах Арамаис Шлукян:** 18 мая 1982 года в Бухаресте состоялось совещание духовенства по инициативе престоятеля объединенной армянских епархий Румынии и Болгарии архиепископа Тирайра Мартикяна (стр. 41—42).

17. Годовой отчет армянского училища св. Переводчиков в Иерусалиме (1981—1982) (стр. 43—44).

18. **Священник Езник Петросян:** Пару слов о труде архимандрита Саркиса Кунда «Толкование евангелии от Луки» (исследование) (стр. 45—52).

19. *Артун Атитян:* Мученничество св. апостола Варфоломея (исследование) (стр. 53—60).

20. *Артун Атитян:* Мученничество святых священников Воскянков (исследование, оригинал) (стр. 61—64).

21. **Маня Казарян:** О декоративном оформлении монастырского зала-приемного храма св. Рипсиме по эскизам художника Григора Ханджяна (стр. 65—66).

22. **Карен Матевосян:** Росписи соборов св. Григория в Аруче и Катогике в Талине (исследование) (стр. 67—70).

23. **Виктор Петросянц:** Две новые апаранские рукописи. Общее обозрение о рукописях «Евангелие» (1665 г.) и «Киприанос» (1569 г.) (стр. 71—73).

24. **Диакон Вардкес Мкртчян:** Арменоведческие издания в Армении и за границей (стр. 74—75).

25. Кончина Айка Аракеляна (1906—1982) (стр. 76).

„ETCHMIADZIN"
OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN
(AUGUST-SEPTEMBER 1982)

1. Festivities in the Holy See on the occasion of 27-th anniversary of His Holiness's enthronement, from 26-th september until 2-nd october pages 3—15).

2. Communiqué. About the visit to the Holy See of His Beatitude Patriarch Ignatius Zakka I, the head of the Syrian Orthodox Church of Antioch and of All the East, from 24-th september until 2-nd october (pages 16—17).

3. Communiqué. About the visit to the Holy See of His Holiness Patriarch-Catholicos Ilya II the head of the Orthodox Church of Georgia during the days of 25—27-th september (pages 18—19).

4. Communiqué. About the visit to the Holy See of the Most Rev. Bishop Henry Hill the representative of the Anglican Church, and Dr. Donald Schurman, during the days of 7—14-th september (page 20).

5. Ordination of priests in the St. Sarkis Church at Yerevan, on the 12-th of september (pages 21—22).

6. **Deacon Vardges Mkrtchian**—About the official opening of the Theological Seminary of Holy Etchmiadzin of the 1982—83 school year, under the presidency of His Holiness, on the 7-th of september (pages 23—24).

7. The group of the Armenian teachers from abroad in the Patriarchal Residency. About the visit to His Holiness of 41 teachers from 16 different countries of the world (page 25).

8. About the visit of the french pilgrims to the Holy See, on the 27-th august, under the leadership of Father René Gireaud, the responsible of the Christians' union national espiscopal secretaryship (page 26).

9 Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and description of Church festivities in the Holy See during the months of august and september (pages 27—29).

10. Cables exchanged between the Holy See and the Mekhitarist congregation of Venice on the occasion of the new Abbot's election (page 30).

11. The cable of condolence of His Holiness dated 23-rd september 1982, to Mrs. Anahid Harutynian, on the sad occasion of Marshal Hovhannes Baghramian's death (page 31).

12. Patriarchal high appreciation. About the distribution of favours by His Holiness to a group of sipiritual and layman workers of the Armenian Church (page 32).

13. **Bishop Nerses Bozabalian**—The sacrament of Christ's Transfiguration (sermon given in the Holy Cathedral)—(pages 33—34).

14. **Deacon Vardges Mkrtchian**—International scientific assembly of armenology in Yerevan (pages 35—37).

15. Description of the 70-th anniversary's festivity of the re-establishment of the Catholicossate of the Indian Malabar Church, to which took part Rev. Bishop Gevorg Seraydarian, the primate of the Armenian diocese of Georgia, and Rev. Bishop Aghan Baliozian, the Armenian diocese of Australia and New Zealand. It has been given also on this occasion the address of His Holiness dated 25-th august 1982 (pages 38—40).

16. **Reverend Aramayis Shlukian**—Meeting of clergymen, which took place in Bucharest on the 18-th of may 1982, by the initiative of the Most Rev. Archbishop Tirayr Mardikian, the primate of the Armenian dioceses of Roumania and Bulgaria (pages 41—42).

17. Annual report of the Armenian secondary school at Jerusalem St. Tarkmanchatz (Holy Translators) (1981—1982)—(pages 43—44).

18. **Father Yeznik Petrossian**—Two words about the work of Sarkis Vardapet Kund „Interpretation of Luke" (study)—(pages 45—52).

19. **Arthoon Hadidian**—The witnessing of the apostle Saint Bartholomew (study and the original texte of his martyrdom)—(pages 53—60).

20. **Arthoon Hadidian** —The witnessing of the priests of Saint Vosgyank (study and the original texte of his martyrdom)—(pages 61—64).

21. **Manya Ghazarian**—About the embellishment of the monastic salon-hall of the monastery of St. Hripsimeh by the designs of painter Grigor Khandjian (pages 65—66).

22. **Karen Mathevosian**—The frescos of the cathedrals of St. Grigor at Arudj and of Gathoghikeh at Talin (study)—(pages 67—70).

23. **Victor Petrossiantz**—Two new manuscripts of Aparan. A general view about the manuscripts „Gospel" (1665) and „Cyprianus" (1569) —(pages 71—73).

24. **Deacon Vardges Mkrtchian**—Armenological publications in Armenia and abroad (pages 74—75).

25. Death of Haik Arakelian (1906—1982)—(page 76).

„ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(AOÛT-SEPTEMBRE 1982)

1. Festivités au Saint-Siège d'Etchmiadzine à l'occasion du 27-e anniversaire de l'intronisation de Sa Sainteté Vasken Ier, du 26 septembre au 2 octobre 1982 (pages 3—15).

2. Communiqué de la Chancellerie du Saint-Siège concernant la visite officielle à Saint-Etchmiadzine de Sa Sainteté Ignatius Zakka Ie., Patriarche de l'Eglise orthodoxe syrienne, du 24 septembre au 2 octobre 1982 (pages 16—17).

3. Communiqué de la Chancellerie du Saint-Siège concernant la visite officielle à Saint-Etchmiadzine de Sa Sainteté Ilia II, Patriarche-Catholicos de l'Eglise orthodoxe géorgienne, du 25 au 27 septembre 1982 (pages 18—19).

4. Communiqué de la Chancellerie du Saint-Siège concernant la visite officielle à Saint-Etchmiadzine de Son Excellence l'évêque Henry Hill et du Dr. Donald Schurman, représentants de l'Eglise Anglicane au Canada, du 7 au 14 septembre 1982 (page 20).

5. Ordination de prêtres à Erévan, dans l'église métropolitaine St. Sarkis (pages 21—22).

6. Le 7 septembre, réunion solennelle au Séminaire théologique du Saint-Siège d'Etchmiadzine, sous la présidence de Sa Sainteté Vasken Ier à l'occasion de la rentrée des classes de l'année scolaire 1982—1983 (pages 23—24).

7. Le 23 août 1982, visite au Saint-Siège d'Etchmiadzine d'un groupe de professeurs arméniens de la Diaspora. Rencontre du groupe avec Sa Sainteté dans la résidence patriarcale (page 25).

8, Le 27 août 1982, visite d'un groupe de pèlerins français à Saint-Etchmiadzine, sous la conduite du Révérend Père René Giraud, responsable du Secrétariat National des Evêques pour l'unité des chrétiens (page 26).

9. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours des mois août-septembre 1982 (pages 27—29).

10. Echange de télégrammes entre le Saint-Siège d'Etchmiadzine et la Congrégation des Pères Mekhitaristes de Venise à l'occasion de l'élection du nouveau Supérieur de ladite Congrégation (page 30).

11. Télégramme de condoléances du 23 septembre 1982 de Sa Sainteté Vasken Ier adressé à Mme Anahite Haroutiounian à l'occasion du décès du maréchal Hovhannès Bagramian (page 31).

12. Attribution des dons de la grâce par Sa Sainteté à certains prêtres arméniens et à certaines personnes laïques des communautés arméniennes de la Diaspora pour leurs activités ecclésiastiques, culturelles et éducatives (page 32).

13. **Evêque Nersès Bozabalian**—„Le mystère de la Transfiguration du Christ" (sermon prononcé dans la cathédrale de Saint-Etchmiadzine) (pages 33—34).

14. **Diacre Vartguès Mekertchian**—„Symposium international d'arménologie à Erévan" (pages 35—37).

15. Description des festivités consacrées au 70e anniversaire du rétablissement du Catholicossat de l'Eglise orthodoxe syrienne de Malabar (Inde) auxquelles ont pris part l'évêque Guévorg Séraïdarian, prélat du diocèse des Arméniens de Géorgie, et l'évêque Aghane Baliözian, prélat du diocèse des Arméniens d'Australie et de la Nouvelle Zélande.

Message du 25 août 1982 de Sa Sainteté Vasken Ier adressé à cette occasion à Sa Sainteté Baselius Mar Thoma Mathews Ier, Patriarche de l'Eglise orthodoxe syrienne de Malabar (pages 38—40).

16. **Père Aramaïs Cheloukian**—„Assemblée des ecclésiastiques arméniens des diocèses de Roumanie et de Bulgarie tenue le 18 mai à Bucarest par l'initiative de l'archevêque Tiraïr Martikian, prélat des susdits diocèses (pages 41—42).

17. Rapport annuel du rectorat de l'école arménienne St. Targmanichats de Jérusalem (année scolaire 1981—1982)—(pages 43—44).

18. **Père Yeznik Pétrossian**—„Bref aperçu sur l'ouvrage du Père Sarkis Kound: commentaire de l'Evangile de Luc" (pages 45—52).

19. **Artoun Hatitian**—„Le témoignage de l'apôtre Saint Barthélemy" (étude). Texte original du témoignage (pages 53—60).

20. **Artoun Hatitian**—„Le martyre de Saint Oski (Chryssos) et de ses compagnons" (étude). Texte original (pages 61—64).

21. **Mania Ghazarian**—„Embellissement de la salle de réception du monastère de Sainte-Hripsimée d'après les esquisses du peintre Grigor Khandjian" (pages 65—66).

22. **Karen Mathévossian**—„Les fresques de l'église Saint-Grégoire d'Aroudj et du „Kathoghiké" de Taline (étude)—(pages 67—70).

23. **Victor Pétrossiants**—„Deux nouveaux manuscrits d'Aparan" (aperçu général sur les manuscrits „Evangile" (1665) et „Cyprianus" (1569) —(pages 71—73).

24. **Diacre Vartguès Mekertchian**—„Publications des études arménologiques en Arménie et dans la Diaspora" (pages 74—75).

25. Décès de M. Haïk Arakélian (1906—1982) —(page 76).



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հանդիսություններ Մայր Աթոռում՝ Հայոց Հայրապետի գահակալության 27-րդ տարեդարձի առիթով 3
Հաղորդագրություն 16
Հաղորդագրություն 18
Հաղորդագրություն 20
Քահանայական ձեռնադրություն 21
ՎԱՐԴԳԵՍ ՍՐԿ. ՄԿՐՏՉՅԱՆ—Հոգևոր ճեմարանի վերաբացման հանդիսություն . . 23
Սփյուռքահայ ուսուցիչների խումբը Վեհարանում 25
Ֆրանսիացի ուխտավորների խումբը Մայր Աթոռում 26
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 27
Մայր Աթոռի և Վենետիկի Մխիթարյան միաբանության միջև փոխանակված հեռագրեր նոր Աբբահոր ընտրության առիթով 30
Հայոց Հայրապետի ցավակցական հեռագիրը մարշալ Հովհաննես Բաղրամյանի մահվան առիթով տիկին Անահիտ Հարությունյանին 31
Հայրապետական բարձր գնահատություն 32
ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱԼՅԱՆ—Քրիստոսի Պայծառակերպության խորհուրդը . 33
Միջազգային հայերենագիտական գիտաժողով Երևանում 35
Հայ Եկեղեցու պատվիրակները Հնդկաստանում 38
ԱՐԱՄԱՅԻՍ ԱԲԵՂԱ ՇԼՈՒԿՅԱՆ—Թեմական կյանք 41
Տարեկան տեղեկագիր Երուսաղեմի հայոց Ս. Թարգմանչաց երկրորդական վարժարանի 43
ԵՂՆԻԿ ՔԱՀԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ—Երկու խոսք Սարգիս վրդ. Կունդի «Մեկնութիւն Ղուկասու» աշխատության մասին 45
ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ—Սուրբ Բարթողիմեոս առաքյալի վկայությունը 53
Վկայություն Սուրբ Բարթողիմեոս առաքյալի 55
ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ—Սուրբ Ոսկյանք քահանաների վկայաբանությունը . . 61
ՄԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ—«Բարեկարդեցաւ դահիճս ոճով հայկական» 65
ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ—Արուճի Ս. Գրիգոր և Թալինի Կաթողիկե տաճարների որմնանկարները 67
ՎԻԿՏՈՐ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ—Ապարանյան երկու նոր ձեռագիր 71
Հայագիտական հրատարակություններ 74
Մահ Հայկ Պողոսի Առաքելյանի 76
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата . . . 77
„Etchmiadzin" official journal of Holy Etchmiadzin 78
„Etchmiadzine" organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine 79

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie. URSS

Հանձնված է տպագրության 7.09.1982 թ.: Ստորագրված է տպագրության 22.11.1982 թ.
Տպագրական 5 մամուլ+9 ներդիր, թուղթ 60×84 1/8, պատվեր 693:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1982 թ.

ՄՏ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԱԿԱԴԵՄ